

ԱՐԱ ՊԱՊՅԱՆ

ՀԱՅՈՑ
ՊԱՀԱՆՁԱՏԻՐՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԿԱՆ
ՀԻՍՈՒՆՔՆԵՐԸ

ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԵՐԵՎԱՆ 2009

Արա Պապյան

ՀԱՅՈՑ
ՊԱՀԱՆՁԱՏԻՐՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԿԱՆ
ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

(ՀՈԳՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ)

ԵՐՐՈՐԴ, ԼՐԱՄՇԱԿԱԾ ՅՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայոց պահանջատիրությունը հայերի հավաքական շահերի պաշտպանությունն է՝ միջազգային իրավունքով ամրագրված և հայ ժողովրդին վերապահված, սակայն, ոտնահարված իրավունքների վերականգնումը:

ԵՐԵՎԱՆ 2009

*Հոդվածները գրվել են 2006թ. դեկտեմբերից մինչև
2009թ. հուլիսն ընկած ժամանակահատվածում*

*Համակարգչային շարվածք և տպագրություն. **Դավիթ Օ. Աբրահամյան***

Երրորդ, լրամշակված հրատարակություն, Երևան, 2009թ.

Երկրորդ հրատարակություն (արևմտահայերենով), Թորոնթո, 2008թ.

Առաջին հրատարակություն, Երևան, 2007թ.

© *Ara Papian, 2009*

© *Արա Պասյան, 2009*

Legal Bases for Armenian Claims

Հայոց պահանջատիրության
իրավական հիմունքները

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Սպասելով Փոքր Սիերի վերադարձին /նախաբանի փոխարեն/	7
I. Հայկական հարցի լուծման հայեցակարգ	11
II. Վուդրո Վիլսոնի իրավարար վճիռը Հայաստանի և Թուրքիայի սահմանի վերաբերյալ	38
III. Հիմնավորում՝ նոյեմբերի 22-ը «Հայրենատիրության օր» հռչակելու	41
IV. «Վուդրո Վիլսոնի 14 կետերը» և Հայաստանը	43
V. Ամերիկայի Միացյալ Նահանգների սահմանադրությունը, Հայկական հարցը և Վուդրո Վիլսոնի իրավարար վճիռը	47
VI. Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրի (16 մարտի, 1921թ.) փորձաքննությունն ըստ միջազգային իրավունքի	50
VII. Կարսի պայմանագիրն ու Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության իրավական կարգավիճակն ըստ միջազգային իրավունքի	55
VIII. Սերի և Լոզանի պայմանագրերի իրավական փոխհարաբերությունները	63
IX. Հայ ժողովրդի նյութական կորուստները Հայոց ցեղասպանության ժամանակ	71
X. Հայկական հուշարձանների կարգավիճակը Թուրքիայում ըստ միջազգային իրավունքի	77
XI. Լեռնային Գարաբաղի հիմնահարցը ժողովուրդների ինքնորոշման և տարածքային ամբողջականության լույսի ներքո	82
XII. Կրկին Հայաստանի Հանրապետության սահմանների և Լեռնային Գարաբաղի ինքնորոշման մասին	88
XIII. Նախկին սովետական հանրապետությունների ճանաչման, ինքնորոշման և սահմանների մասին	95
XIV. Հայտարարություն. միջազգային իրավունքով Հայաստանի Հանրապետությանը վերապահված տարածքի մի մասի վրա Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության վերականգնման վերաբերյալ /նախագիծ/	100
XV. Заявление: о восстановлении суверенитета Республики Армения над частью территории, отведенной для Республики Армения согласно международному праву /проект/	106

XVI.	Declaration: for reclaiming the sovereignty of the Republic of Armenia on part of the territory stipulated to the Republic of Armenia by international law /draft/	111
XVII.	Հայաստանի Հանրապետության և Վրաստանի սահմանն ըստ միջազգային իրավունքի	116
XVIII.	Թուրքիայի Հանրապետության կողմից Հայաստանի Հանրապետության շրջափակումը որպես միջազգային իրավունքի և ստանձնած պարտավորությունների կոպիտ խախտում	123
XIX.	Կոստվոյի անկախության ճանաչումը որպես իրավական նախադեպ	130
XX.	Հայկական հարցի լուծման իրավական հիմքերն ու ուղիները /Ելույթ Հայ դատի հանձնախմբերի խորհրդաժողովի ժամանակ, 13.03.07թ., Երևան/	132
XXI.	The Arbitral Award on Turkish-Armenian Boundary by Woodrow Wilson, the President of the United States of America	150
XXII.	The Legal Interrelation between the Treaty of Sevres and the Treaty Lausanne	169
XXIII.	Unlawfully Confiscated American Property in Turkey: Problems and Perspectives for the Indemnification and Compensation	176
	Հեղինակի մասին	182
	About the author	184



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԹՈՒՐԹԻԱՅԻ ՄԻՋԵՎ *DE JURE* ՍԱՀՄԱՆԸ

ԸՍՏ ԱՄՆ ՆԱԽԱԳԱՀ ՎՈՒԴՐՈ ՎԻՍՈՆԻ
ԻՐԱՎԱՐԱՐ ՎՃՈՒ
22 նոյեմբերի, 1920թ.

ՀԱՅՈՑ ՊԱՀԱՆՁԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԵՐԻ ՀԱՎԱՔԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆՆ Է՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՄՐԱԳՐՎԱԾ ԵՎ
ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ, ՍԱԿԱՅՆ,
ՈՏՆԱՀԱՐՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ:

Արա Պապյան

«Մոդուս վիվենդի» հասարակագիտական
հետազոտությունների կենտրոնի ղեկավար

Էլ. փոստ. ara.papian@gmail.com

Կայքէջ. www.wilsonforarmenia.org

M **dus**
V**ivendi**

Սպասելով Փոքր Սիերի վերադարձին

/նախաբանի փոխարեն/

Հին աշխարհում մի սովորություն կար. վատ լուր բերողի գլուխը կտրում էին: Երբ երեխա էի, չէի հասկանում՝ ինչո՞ւ են մարդիկ ստանձնում գուժկանի մահաբեր առաքելությունը: Հետո հասկացա: Ազգային, հասարակական շահի տեսանկյունից ոչինչ չկա ավելի բարձր, քան ճշմարտությունը: Պարզ, երբեմն դաժան ճշմարտությունը կենսական նշանակություն ունի, որովհետև առանց բաց աչքերով իրականությանը նայելու հնարավոր չէ գտնել փրկության ուղին: Միթե՞ կարող է կույրը կույրին առաջնորդել: Հիմա մեր հերթն է բաց աչքերով նայելու իրականությանը:

Հայ ժողովուրդի լինելիությունը նրա հինգհազարամյա գոյության ընթացքում երբեք այսքան վտանգված չի եղել, որքան այժմ: Սա պայմանավորված է Հայաստանում ձևավորված ժողովրդագրական սպառնալից իրավիճակով՝ անշեղորեն կրճատվող ծնունդով, հասարակության ծերացմամբ, մահացության աճով, ինչպես նաև չընդհատվող արտագաղթով: Պատճառները բազմաթիվ են, սակայն հիմա դրանք չենք քննարկի: Ըստ ՄԱԿ-ի ժողովրդագրական տվյալների, Հայաստանի բնակչությունը մինչև 2025թ. կնվազի 25%-ով: Միևնույն ժամանակ Ադրբեյջանի բնակչությունը կաճի 31%-ով, իսկ Թուրքիայինը՝ 43%-ով:¹ Հիսուն տարի հետո Հայաստանում կմնա ներկա բնակչության կեսը: Ցանկացած հասարակության պարզ վերարտադրությունն ապահովելու համար անհրաժեշտ է, որ ծնելիության ցուցանիշը լինի առնվազն 2.11: Ծնելիության 1.3 ցուցանիշ ունեցող հասարակությունները դատապարտված են վերացման: 2007թ. Հայաստանում ծնելիության ցուցանիշը եղել է 1.348:²

Անգամ ցեղասպանության տարիներին դրությունն այսքան ողբերգական չէր: Պարզ էր, որ ինչ-որ քանակությամբ հայեր փրկվելու էին, որոնք էլ իրենց հայրենիքի մի հատվածվի վրա վերաշինելու էին իրենց տունը և շենացնելու էին հայրենիքը

¹ Գայանե Աբրահամյան, ArmeniaNow.com, 29.06.2007:

² Կարինե Կոյունջյան, Ազգային վիճակագրական ծառայության մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ, 22.04.2008, Panorama.am:

գավակներով: Հարցը ժամանակի մեջ էր՝ շատ կփրկվեին, քիչ ժամանակ պետք կլիներ ազգը վերականգնելու համար, քիչ կփրկվեին՝ շատ ժամանակ պետք կլիներ: Հավերժության գավակը՝ ժամանակը, մեր դաշնակիցն էր: Հիմա ժամանակը մեր թշնամին է. 5-10 տարի հետո Հայաստանի մեջ, առաջին անգամ խաղաղության տարիների ընթացքում, լույս աշխարհի եկած երեխաների թիվը զիջելու է այս աշխարհից գնացածների թվին: Այսինքն մենք սկսելու ենք վերջանալ, ինչպես ջուրը առվի մեջ՝ աղբյուրը ցամաքելուց հետո, ինչպես լույսը երկնքում՝ արևը մայր մտնելուց հետո: Քսանմեկերորդ լուսավոր դարը կարող է մեր վերջինը լինել: Վերջի սկիզբն արդեն դրված է:

Իհարկե ազգի վերացում չի նշանակում ազգի անհատների վերացում: Թերևս մեկ-երկու հայուր տարի ինչ-որ համայնքներ կլինեն, ինչ-որ անհատներ ազգի փրկության ծրագրեր կնշակեն, ինչ-որ կուսակցություններ ազգի փրկության համար դրամ կհավաքեն: Գուցե մինչևիսկ ինչ-որ վարչատարածքային միավոր էլ լինի՝ Армянский фортост կամ Ermenistan vilayeti: Անգամ գուցե նրա ղեկավարը նախագահ կկոչվի և *ախառնա* էլ կունենա: Սակայն դա Հայաստան չի լինի, այլ կլինի ուրիշի փարախում կապված մատաղացու գառ, որին ցանկացած պահին մատաղ կանեն փարախի տիրոջ գավակի ողջության համար: Հիշու՞մ եք, մեզ մի անգամ արդեն մատաղ արել են համաշխարհային հեղափոխության հաղթանակի ճանապարհին:

Հիմա անդրադառնանք մի բնական հարցի. իսկ ի՞նչ անել: Պատասխանը շատ պարզ է՝ պետք է խրախուսել բազմազավակությունը, այսինքն՝ Հայաստանում ծնված առաջին երեխայի համար մինչև չափահասության տարիքը յուրաքանչյուր ամիս ընտանիքին պետք է տալ հարյուր դոլար, կուգեք՝ համարժեքը դրամով, երկրորդի համար՝ երկու հայուր, երրորդի համար՝ երեք հայուր, և այդպես շարունակ: Դրա համար տարեկան պետք կլինի լրացուցիչ 2-3 մլրդ դոլար: Այդքան էլ պետք կլինի ենթակառույցների վերականգնման, առողջապահական և կրթական համակարգերի նորացման, կարճ ասած, երկիրը երկիր դարձնելու համար: Իհարկե, Հայաստանում յուրաքանչյուր տարի լրացուցիչ ծախսված 5-6 միլիարդ դոլարը էսպես կխթանի նաև երկրի տնտեսությունը, կստեղծի նոր աշխա-

տատեղեր և, բնականաբար, հարկերի, մաքսերի, տուրքերի և այլ գանձումների տեսքով կապահովի դրամական նոր մուտքեր: Առաջին հայացքից տարեկան 7-8 միլիարդ դոլար ծախսային մասը ՀՀ ներկա բյուջեի համեմատ (2.7 մլրդ դոլար) հսկայական է թվում, սակայն իրականության մեջ այն ընդամենը, օրինակ, Եվրոպայի ոչ հարուստ երկրներից մեկի և չափորոշիչներով մեզ մոտ՝ Լիտվայի 2008թ. բյուջեի ծախսային մասի հազիվ կեսն է:

Այժմ անդրադառնանք ամենակարևոր հարցին. Իսկ որտեղի՞ց այդքան փող: Ակնհայտ է, որ հարկերի հավաքման տեսանկյունից Հայաստանը երբեք Շվեյցարիա, իսկ մարդու իրավունքների տեսանկյունից՝ երբեք Շվեդիա չի դառնա: Ենթադրենք դարձավ, հետո՞: Հետո այն, որ Հայաստանի բյուջեն լավագույն դեպքում կարող է կրկնապատկվել և մենք կհավասարվենք Ալբանիային: Արդյո՞ք մեր երազանքը հայկական Ալբանիա կառուցելն է: Իհարկե՝ ոչ: Անգամ կրկնապատիկ բյուջեի դեպքում մենք չենք կարող մեզ թույլ տալ տարեկան 2-3 մլրդ դոլար ծախսել ազգապահպան, իսկ ավելի պարզ լեզվով, վերարտադրողական ծրագրերի վրա:

Ակնհայտ է, որ այսօրվա մեր վիճակը խուլ արձագանքն է Հայոց ցեղասպանության և հայրենագրկման: Չլինեք ցեղասպանությունը, մենք կլինեինք ավելի շատ, ավելի մեծ ու բարգավաճ հայրենիքի սահմաններում: Գրեթե հարյուր տարի առաջ ցեղասպանի բարձրացրած կացինը մեր օրերում հասցրեց իր վերջին հարվածը: Մեր ազգի կենաց ծառն այլևս անկարող է ինքնուրույնաբար ապաքինելու իր վերքերը: Հետևաբար, մեր ազգային գոյության 2 մեծագույն ողբերգությունները՝ ցեղասպանությունն ու հայրենագրկումը, պիտի դառնան մեր ազգային գոյությանը նոր ավիչ հաղորդող երկու հիմնական աղբյուրները: Մենք այլընտրանք չունենք:

Սիրելի ընթերցող, հարցի ավելի հանգամանալից և մասնագիտական քննարկումը տե՛ս սույն ժողովածուի մեջ ընդգրկված **«Հայկական հարցի լուծման հայեցակարգ»**-ի մեջ: Սի բան բոլորիս համար պիտի պարզ լինի. հայկական հարցի լուծումը մասնագիտական մտավարժանք կամ տեսական գլուխկոտրուկ չէ: Դ-ա հայ ժողովրդի գոյատևման **միակ ուղին** է: Կսկսենք առաջիկա 10 տարվա մեջ Թուրքիայից տարին 3-5 մլրդ դոլար նյութական կորուստների հատուցում և Թուրքիայի կողմից հայկական գույքի ու

տարածքների օգտագործման վարձավճար ստանալ, ապա, միգուցե, դուրս կգանք ժողովրդագրական անդունդից, ապահով գոյության ու տնտեսական զարգացման հիմքեր կստեղծենք, չենք կարողանա՝ կզանք միանալու մեր նախկին հարևաններին՝ բաբելացիներին, շումերներին և այլոց:

Առաջարկվող հայեցակարգն իրատեսական է, որովհետև ունի գորավոր իրավական հիմքեր և շահագրգիռ քաղաքական ուժեր: Մակայն մենք ոչնչի չենք հասնի, քանի դեռ մեր իրավունքների վերահաստատումն ու մեր կորուստների դիմաց հատուցման ծրագիրը համազգային նպատակ ու պետական քաղաքականություն չի դարձել: Մանր հաջողություններն ու դրանց մասին մեծ-մեծ խոսելը երկիրը չեն փրկի: Քաղաքական շամանությամբ երկիր պահել հնարավոր չէ:

Եկել է **գործնական** ծրագրերի ժամանակը:

Մեր ազգային էպոսի վերջին ճյուղի հերոսը՝ Փոքր Սիերը, պարտության մատնեց հարազատ հորը՝ անպարտ Սասունցի Դավթին, ապա անզավակ գնաց անէանալու Ագռավաքարի որջի մեջ: Միթե՞ հայ ժողովուրդը, պարտություն կրելով ինքն իրենից, պիտի անզավակ փակվի պատմության Ագռավաքարի մեջ:

Արա Պապյան,
2 հուլիսի 2009թ., Երևան

Հայկական հարցի լուծման հայեցակարգ

*Հայկական հարցի լուծումը որպես հայոց պետականության
հզորացման եզակի հնարավորություն և հայ
ժողովրդի հարատևման միակ ուղի*

Եւ եղիցին գործք արդարութեան խաղաղութեամբ. եւ կացի արդարութիւն
զհանգիստ. եւ յուսացեալքն եղիցին՝ մինչև յավիտեան:
Մարգարեութիւն Շապեայ, գլ. ԼԲ, 17-18:

Եվ արդարության գործը կլինի խաղաղություն, և արդարության
արդյունքը՝ հանգիստ ու հավիտյան ապահովություն:
Շապեայի մարգարեությունը, գլ. ԼԲ, 17-18:

Պետականությունը հասարակության կազմակերպման
բարձրագույն ձևն է: Ազգային պետականությունը՝ ազգի
կազմակերպման բարձրագույն ձևը, ազգի առջև ծառայած
խնդիրների լուծման հնարավորությունը, նրա դեմ ուղղված
անվտանգության մարտահրավերների չեզոքացման ամենաար-
դյունավետ միջոցը: Ազգային պետությունն է տվյալ ազգի լինե-
լիության գրավականը, ազգային ինքնության պահպանման ու
տնտեսական զարգացման անսասան հիմքը:

Ըստ այդմ, երբ ազգային գոյության, ինքնության
պահպանման և տնտեսական զարգացման տեսանկյունից ենք
քննում արդի հայոց պետականությունը, ապա ակնհայտ է
դառնում, որ առանց Հայկական հարցի լուծման հայոց արդի
պետականությունը ներկա սահմաններով և ներկա ձևով ոչ միայն
ի գորու չէ և ի գորու չի լինելու երաշխավորել վերոհիշյալ
գործառույթների իրագործումը, այլև խիստ խնդրահարույց է
մնալու նրա՝ որպես պետական ինքնիշխան և ինքնուրույն
միավորի, հարատևելու հնարավորությունը: Ընդամին, Հայկական
հարցի մասնակի լուծումը (օրինակ, միայն արևելյան
սահմանների մասով, այսինքն Լեռնային Ղարաբաղի առումով)
չի լուծելու հայոց պետականության առաջ կանգնած
հիմնախնդիրները և չի չեզոքացնելու մեր գոյությանը վտանգող
մարտահրավերները:

1. Հայկական հարցի լուծման բուն նպատակը

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունը կանգնած է լուրջ մարտահրավերների առջև: Հայկական հարցի լուծումը, այն է Հայաստանի Հանրապետության և հայ ժողովրդի իրավունքների վերահաստատումը, ինքնանպատակ չէ: Հայաստանի Հանրապետությունը որպես քաղաքական ինքնուրույն և արժանապատիվ միավոր կամ կարող է գոյություն ունենալ միայն իր անօտարելի և անժամանցելի իրավունքների հաստատումով կամ, ընդհանրապես, չի կարող գոյություն ունենալ որպես այդպիսին:

Հայկական հարցի լուծման բուն նպատակը հայոց կենսունակ պետականության ստեղծումն է, անվտանգության և զարգացման համար անհրաժեշտ նվազագույն պայմանների ապահովման ճանապարհով հայերի՝ որպես մարդկության անբաժանելի և ինքնատիպ հատվածի, հարստևման ապահովումը:

2. Հայկական հարցի լուծման հրամայականը

Առանց հայկական հարցի լուծման հայոց պետականությունը կմնա քաղաքականապես անհաստատ, ռազմականապես խոցելի, տնտեսապես կախյալ և հոգեբանորեն վեհերոտ: Հարցականի տակ կդրվի հայոց պետականության ինքնին իմաստը, քանի որ այն կունենա զուտ ձևական բնույթ և չի լուծի պետականության հիմնական խնդիրները.

- I. Պետության ինքնիշխանության և այդ պետության քաղաքացիների անվտանգության ապահովում;
- II. Երկրի տնտեսական զարգացման և այդ երկրի քաղաքացիների բարեկեցության համար նպաստավոր պայմանների ստեղծում;
- III. Նախորդ երկուսի հենքի վրա՝ այսինքն ապահով և բարեկեցիկ երկրի մեջ, ազգային ինքնության և մշակույթի զարգացում:

Ընդամին, Հայկական հարցի լուծումը կենսական կարևորություն ունի ոչ միայն հայոց պետականության համար, այլև սեփական

հայրենիքում որպես հավաքական հանրություն ապրելու հայ ժողովրդի ընդհանրական իրավունքի կենսագործման համար:

3. Հայկական հարցի լուծման հրատապությունը

Ներկայումս Հայաստանի Հանրապետության առջև ծառայել են մի շարք լուրջ մարտահրավերներ, առանց որոնց հաղթահարման Հայաստանը չի կարող հասնել կայուն կենսապահովման: Հայկական հարցի որոշակի լուծումը հնարավորություն կտա.

I. Դիմակայել և չեզոքացնել, թերևս Հայաստանի Հանրապետության քաղաքական կամքից լուրջ կախվածության մեջ դնել, Հայաստանը շրջանցել և մեկուսացնել ձգտող այնպիսի ծրագրեր, ինչպիսիք են.

- Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղը,
- Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղը,
- Կարս-Ախալքալաք-Թբիլիսի երկաթուղին:

II. Նվազագույնի հասցնել Թուրքիայի բացասական ներգրավվածությունը դարաբաղյան հակամարտության մեջ: Թուրքիային ստիպել առավել կենտրոնանալ սեփական խնդիրների վրա:

III. Առանց քաղաքական կամ այլ զիջումների բացել, այսպես կոչված, հայ-թուրքական սահմանը: Ապահովել Տրապիզոն նավահանգստի և դեպի այն տանող ճանապարհի օգտագործումն անվճար կամ արտոնյալ սակագներով:

IV. Հայ-վրացական հարաբերություններին հաղորդել նոր բնույթ: Համարժեք լծակի միջոցով դուրս գալ բեռնափոխադրումների հարցում Վրաստանից Հայաստանի միակողմանի կախվածությունից: Էական լծակներ ձեռք բերել Վրաստանի և Թուրքիայի հարաբերությունների վրա:

V. Հիմքեր ստեղծել տարածաշրջանում Հայաստանի առաջանցիկ տնտեսական զարգացման համար, ապահովելով ներդրումների և եկամուտների նոր, ոչ ավանդական, աղբյուրներ: Հայ-թուրքական դիմակայությունը, որը մինչ այժմ մեզ համար եղել է միջոցներ սպառող կամ միջոցներ ստեղծելուն խոչընդոտող, վերափոխել, հեղաշրջել և դարձնել միջոցներ տրամադրող:

- VI. Հաշվի առնելով ամերիկա-թուրքական ներկա լարվածությունը՝ այն դարձնել, եթե ոչ անշրջելի, ապա գոնե տևական: Ամերիկա-թուրքական հարաբերությունների մեջ ներդնել նոր գործոն:
- VII. Վերարժարծել ԱՄՆ-ի, եվրոպական և ոչ եվրոպական մի շարք ազդեցիկ երկրների, ՀՀ նկատմամբ իրավական, քաղաքական և բարոյական պարտավորությունների հարցը:
- VIII. Հաշվի առնելով Թուրքիայի շարունակական ձգտումը անդամակցելու Եվրոպական Միությանը և Եվրոպական Միության մի շարք երկրների դրան ընդդիմանալու բացահայտ կամ ծածուկ ճիգերը, եվրոպացիների գործածության համար քաղաքական շրջանառության մեջ մտցնել Թուրքիայի անդամակցության նոր չափորոշիչ:
- IX. Իրավական և քաղաքական հիմքեր նախապատրաստել աշխարհաքաղաքական հետագա և անխուսափելի տեղաշարժերից ոչ միայն չտուժելու, այլև օգտվելու համար:

Հույժ հրատապ և խիստ կարևոր են ՀՀ շարունակական քայլերը հայոց իրավունքներին տեր կանգնելու ուղղությամբ: Պատեհապաշտ հայտարարություններն ու պահանջատիրական քայլերի տևական բացակայությունը կարող են լուրջ խնդիրներ ստեղծել հետագայում: Հայկական հարցի անտարբերության մատնումն ու պահանջատիրության ուղղությամբ քայլեր չձեռնարկելու ՀՀ արդեն գրեթե երկու տասնամյակ տևող քաղաքականությունը, առաջիկայում Թուրքիային հնարավորություն կտա վկայակոչել *եստոպպել (estoppel)* կիրարկումը (այսինքն, երբ ՀՀ-ն իր գործողություններով կամ գործողությունների բացակայությամբ ցույց է տալիս, որ հաշտվել է ստեղծված իրավիճակի հետ) և դրանով իսկ էապես հակազդել հայոց հետագա հնարավոր պահանջներին:

4. Հայկական հարցի լուծման ուղին

Հայկական հարցի լուծումն ունի միայն մեկ ուղի՝ խաղաղ միջոցներով, փոխզիջումների ճանապարհով, հետևողական և տևական աշխատանքի շնորհիվ արդյունքի հասնելու ուղին: Միևնույն

ժամանակ, հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության, ինչպես նաև հայ ժողովրդի հավաքական ներուժը քաղաքական, տնտեսական կամ ռազմական ոլորտներում զիջում է, և մշտապես զիջելու է, Թուրքիայի ու Ադրբեջանի, ինչպես նաև նրանց քաղաքական հոլովույթի մեջ արքանված Վրաստանի, ընդհանուր ներուժին, ուստի անհրաժեշտ է պայքարի ու դիմակայության ողջ գործընթացը տեղափոխել այլ ոլորտ, ուր Հայաստանը ոչ միայն չի զիջում նրանց, այլև ունի շոշափելի առավելություն:

Այսինքն, անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության և նրա իրավունքները ոտնահարած երկրների հարաբերությունները տեղափոխել միջազգային իրավունքի դաշտ և այդ հարաբերություններում առկա բոլոր խնդիրներին տալ իրավական լուծումներ ու ձևակերպումներ:

5. Հայկական հարցի էությունը ներկա փուլում

Որպես միջազգային հարց և քաղաքական խնդիր Հայկական հարցն ունեցել է մի քանի փուլ: Սկզբնավորվելով որպես Օսմանյան կայսրության հպատակ հայերի անհատական և հավաքական անվտանգության և արժանապատվության հարց՝ այն աստիճանաբար վերաճել է հայոց պետականության և այդ պետականության ոտնահարված իրավունքների վերահաստատման հարցի:

Ներկա փուլում Հայկական հարցը միջազգային իրավունքով արդի Հայաստանի Հանրապետությանը հատկացված կամ վերապահված տարածքային, նյութական և բարոյական իրավունքների վերականգնումն է:

6. Հայկական հարցի լուծման փուլայնությունը

Հայկական հարցի լուծման ողջ գործընթացը կարելի է բաժանել երեք հաջորդական և փոխլրացնող փուլի.

ա. Նախնական փուլ

Հայկական հարցի (չփոթել Հայոց ցեղասպանության հետ) լուծմանը նպատակամղված փաստաթղթերի հավաքման, հետա-

գոտման ու համադրման փուլ: Այս փուլի վերջնական արդյունքը պետք է լինի Հայկական հարցին (այլ ոչ թե նրա չեզոքացմանն ուղղված թուրքական հանցագործությանը՝ Հայոց ցեղասպանությանը) վերաբերող և հայոց պահանջատիրությունը հիմնավորող փաստաթղթի ժողովածուների պատրաստումը, այդ ժողովածուների տարածն և բազմալեզու հրապարակումը: Այս փաստաթղթերի մեջ առաջնահերթությունը պատկանում է ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի՝ Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանը որոշող իրավարար վճռի և առդիր գեկույցի, ինչպես նաև հարակից պաշտոնական փաստաթղթերի ամողջական հրապարակմանը: Հետևողական աշխատանք պետք է իրականացնել այդ հարցի մասին հանրության իրազեկման և տեղեկացման ուղղությամբ:

բ. Միջին փուլ

Այս փուլում անհրաժեշտ կլինի ներգրավել միջազգային իրավունքի, դատական վարույթի ու ընթացակարգերի հեղինակավոր մասնագետների, փորձառու գործող իրավաբանների: Փուլի վերջնական արդյունքը պետք է լինի իրավագիտության տարբեր ոլորտների խորագետների մասնակցությամբ ՄԱԿ-ի Միջազգային դատարանում ընդդեմ Թուրքիայի Հանրապետության դատական գործի պատրաստումը: Այս փուլում նպատակահարմար կդառնա համահայկական ներկայացուցչական կառույցի գումարումը: Կկարևորվի հարցի ուսումնասիրման, հետամտման և հանրայնացման մասնագիտացված կենտրոնի ստեղծումը:

գ. Վերջնական փուլ

Դատական հայցի առաջադրման և դատընթացի սկզբնավորման փուլ: Այս փուլում պետք է ապահովել ՀՀ, որպես հայոց պահանջատիրության հիմնական իրավունքների առաջնային կրողի, լիակատար ընդգրկումը գործընթացի մեջ: Հասնել ՄԱԿ-ի Միջազգային դատարանում (տվյալ կառույցի Կանոնակարգի #36 հոդվածի 2-րդ կետի շրջանակում) Թուրքիայի Հանրապետության կողմից միջազգային իրավունքի ոտնահարման և ստանձնած միջազգային պարտավորությունների չկատարման հարցի ընդգրկմանը:

Փուլի վեջնական արդյունքը պետք է լինի ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում (ՄԱԿ-ի Կանոնակարգի #34 և #35 հոդվածների շրջանակում) Թուրքիայի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների չկատարման հետևանքով տարածաշրջանային խաղաղությանն ու անվտանգությանը սպառնացող վտանգների հարցի քննարկումը, ինչպես նաև գործնական քայլերի նախաձեռնումը իրավիճակը շտկելու ուղղությամբ: Այսինքն, միջազգային օրենքի շրջանակում պարտադրումը Թուրքիայի Հանրապետությանը, ինչպես նաև այլ հանձնառու երկրներին, կյանքի կոչելու ստանձնած պարտավորությունները, որոնք մասնավորապես ներառված են Վուդրո Վիլսոնի 22 նոյեմբերի 1920թ. իրավարար վճռի մեջ, և ապահովելու միջազգային օրենքի լիակատար իրագործումը տարածաշրջանում ու օրենքի ոտնահարման հետևանքով առաջացած հետևանքների ամբողջական հաղթահարումը:

7. Հայկական հարցի բովանդակությունը ներկա փուլում

Հայկական հարցը ներկա փուլում ունի երեք հիմնական բաղադրիչ՝ տարածքային, նյութական և բարոյական: Հետևաբար, Հայկական հարցը լուծված կարելի է համարել միայն նշյալ երեք բաղադրիչներից բխող խնդիրների լիակատար լուծման՝ այն է ամբողջական կամ մասնակի հատուցման, դեպքում:

ա. Հայկական հարցի տարածքային բաղադրիչը.

Վերոնշյալ եռամիասնության մեջ տարածքային բաղադրիչն ամենաեականն է: Թեև 1920-1923թթ. Հայաստանի Հանրապետությունն ունեցել է տարածքային զգալի կորուստներ, այսուհանդերձ դրանք ոչ թե *de jure* այլ միայն *de facto* կորուստներ են: Այսինքն, չնայած այդ տարածքները բռնազավթվել (occupied) են օտար ուժերի կողմից և հետագայում բռնակցվել են (annexed) այլ երկրներին, բայցևայնպես ՀՀ-ն շարունակում է պահպանել դրանց տիրոջը և դրանց նկատմամբ իր ունեցած օրինական իրավունքները, քանի որ ՀՀ տարածքային իրավունքները խարսխված են միջազգային իրավունքի անբեկանելի սկզբունքների, պետությունների կողմից

ստանձնած պարտավորությունների, ինչպես նաև, կատարման համար պարտադիր վճիռների և իրավական փաստաթղթերի վրա:

Հայաստանի Հանրապետության տարածքային իրավունքները հստակեցնող և տիտղոսը ամրագրող փաստաթղթերից կարևորագույնը Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ Վուդրո թոմաս Վիլսոնի (1913-1921թթ.)` Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի միջև սահմանը որոշող Իրավարար վճիռն է (Arbitral Award) կատարված և ուժի մեջ մտած 1920թ. նոյեմբերի 22-ին: Մույն իրավական փաստաթղթով Հայաստանի Հանրապետության տիտղոսը ճանաչվեց և իրավունքները հաստատվեցին հայության բնօրրան-հայրենիքի մի փոքր մասի` նրա հյուսիս-արևելյան հատվածի, վրա: Իրավարար վճիռն իր կայացման և ուժի մեջ մտնելու պահից (22.11.1920թ.) կատարման համար անվերապահ, պարտադիր, իրավաբանական տեսանկյունից անբեկանելի և իրավական հետևանքների առումով անժամանցելի է:

Քանի որ Իրավարար վճիռը կայացվել է երկու փաստաթղթի` Դաշնակից ուժերի անունից հանդես եկող Գերագույն խորհրդի (Բրիտանական կայսրություն, Ֆրանսիա և Իտալիա) 26.04.1920 թվակիր իրավարարության հայցադիմումի (compromis), ինչպես նաև Սևրի խաղաղության պայմանագրի մեջ 89-րդ հոդվածի տեսքով ներառված իրավարարության հայցադիմումի, հիման վրա, ուստի Իրավարար վճիռը նշյալ երկու փաստաթղթերին կողմ հանդիսացող երկրների և նրանց իրավահաջորդ պետությունների համար անսակարկ իրավական պարտավորություն է և անխուսափելի քաղաքական հանձնառություն:

Ըստ այսմ.

- I. Քանի որ Բրիտանական կայսրության վարչապետը, իր համաձայնությունը տալով Իրավարար վճռի 26.04.1920 թվակիր հայցադիմումին, հանդես էր գալիս այդ ժամանակ Բրիտանական կայսրությանը մաս հանդիսացող կամ նրա քաղաքական ենթակայության տակ գտնվող բոլոր երկրների անունից, ինչպես նաև նկատի ունենալով, որ իրավահաջորդ երկիրը շարու-

նակում է կրել տարածքի միջազգային հարաբերությունների պատասխանատվությունը (in the responsibility for the international relations of territory)¹, ուստի Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի սահմանը որոշող Իրավարար վճիռը (22.11.1920թ.) կատարման համար պարտադիր իրավական փաստաթուղթ է (legally binding document) Միացյալ Թագավորության և Բրիտանական կայսրության իրավահաջորդ բոլոր երկրների համար: (Այս երկրների ցանկը տե՛ս՝ հավելված I, սյունակ 3-րդ (էջ 31):

II. Քանի որ Ֆրանսիայի Հանրապետության վարչապետը, իր համաձայնությունը տալով Իրավարար վճռի 26.04.1920 թվակիր հայցադիմումին, հանդես էր գալիս այդ ժամանակ Ֆրանսիայի երրորդ հանրապետությանը մաս հանդիսացող կամ նրա քաղաքական ենթակայության տակ գտնվող բոլոր երկրների անունից, ինչպես նաև նկատի ունենալով, որ իրավահաջորդ երկիրը շարունակում է կրել տարածքի միջազգային հարաբերությունների պատասխանատվությունը (in the responsibility for the international relations of territory), ուստի Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի սահմանը որոշող Իրավարար վճիռը (22.11.1920թ.) կատարման համար պարտադիր իրավական փաստաթուղթ է (legally binding document) Ֆրանսիայի Հանրապետության և Ֆրանսիայի երրորդ հանրապետության իրավահաջորդ բոլոր երկրների համար: (Տե՛ս՝ հավելված I, սյունակ 4-րդ (էջ 31)):

III. Քանի որ Գաշնակից ուժերի (Անտանտի; Entente Powers) Գերագույն խորհուրդը՝ Մեծ եռյակը, լիազորված էր հանդես գալու և հանդես էր գալիս բոլոր դաշնակից ուժերի անունից, ուստի Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի սահմանը որոշող Իրավարար վճիռը (22.11.1920թ.), կատարված նաև Իրավարար վճռի 26.04.1920 թվակիր հայցադիմումի հիման վրա, հանդիսանում է կատարման համար պարտադիր իրավական փաստաթուղթ (legally binding document) Գաշնակից

ուժերի և նրանց իրավահաջորդ բոլոր երկրների համար: (Տե՛ս՝ հավելված I, սյունակ 5-րդ (էջ 31)):

IV. Քանի որ Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի սահմանը որոշող Իրավարար վճիռը (22.11.1920թ.) կատարվել է նաև Սևրի խաղաղության պայմանագրի (10.08.1920թ.) մեջ 89-րդ հոդվածի տեսքով ներառված իրավարարության հայցադիմումի հիման վրա, ուստի Իրավարար վճիռը կատարման համար պարտադիր իրավական փաստաթուղթ է (legally binding document) Սևրի պայմանագիրը ստորագրած բոլոր երկրների և նրանց իրավահաջորդ պետությունների համար: (Տե՛ս՝ հավելված I, սյունակ 6-րդ (էջ 31)):

V. Քանի որ Կենտրոնական ուժերից (Central Powers) յուրաքանչյուրը՝ Գերմանիան, Ավստրիան, Հունգարիան և Բուլղարիան, իրենց կնքած խաղաղության պայմանագրերի մեջ կանխավ պարտավորվել էին ճանաչել *«բոլոր այն պայմանագրերի և համաձայնությունների լիազորությունները, որոնք ուժի մեջ կմտնեն ապագայում ... և ճանաչել դրանցով որոշվող սահմանները»*, ապա Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի սահմանը որոշող Իրավարար վճիռը (22.11.1920թ.) կատարման համար պարտադիր իրավական փաստաթուղթ է (legally binding document) նաև բոլոր վերոնշյալ երկրների համար: (Մանրամասների համար տե՛ս՝ հավելված I, սյունակ 7-րդ (էջ 31)):

Ամփոփում

- ☞ Նկատի ունենալով, որ ներկա Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության սահմանը հստակորեն և հանգամանալից նկարագրված ու ամրագրված է ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի 22.11.1920 թվակիր Իրավարար վճռի մեջ;
- ☞ Ընդունելով, որ թեև հայ ժողովրդի իրավունքները պատմականորեն հաստատված են Հայկական բարձրավանդակի և նրա հարակից տարածքների մի մասի վրա, այսուհանդերձ, ներկայումս

Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունն ու տիրոջը անբեկանելիորեն ճանաչված են և իրավականորեն սահմանափակվում են միայն նախկին Օսմանյան կայսրության Վանի, Բիթլիսի, Էրզրումի և Տրապիզոնի նահանգների մի մասի վրա;

☞ Հաշվի առնելով, որ պետություններն ուղղակիորեն կամ անուղղակիորեն իրենց մասնակցությունը բերելով իրավարար վճռի հայցադիմումին՝ դրանով իսկ նախապես տալիս են իրենց անվերապահ համաձայնությունը որպես պարտադիր ընդունել ցանկացած կայացվելիք վճիռ, ուստի.

ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի՝ Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի սահմանը որոշող Իրավարար վճիռը (22.11.1920թ.) կատարման համար պարտադիր փաստաթուղթ է ներկայումս ՄԱԿ-ի 192 անդամ պետություններից 142-ի համար, այդ թվում ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական հինգը անդամներից չորսի համար՝ ԱՄՆ, Ֆրանսիա, Միացյալ Թագավորություն և Չինաստան:

Այսպիսով, սա **աննախադեպ** երևույթ է միջազգային հարաբերությունների և միջազգային իրավունքի մեջ. չկա մի որևէ այլ սահման, որը խարսխված լինի նման իրավական ամուր հիմքի վրա, որքան Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության *de jure* սահմանը:

p. Հայկական հարցի նյութական քաղաքիչք.

Ի սկզբանե պետք է հստակ լինի, որ նյութական հատուցումը որևէ կապ չունի «արյան գնի» հետ: Նյութական հատուցումն առաջին հերթին պետք է ընդգրկի հայության և Հայաստանի Հանրապետության կրած ուղղակի նյութական կորուստները, զանազան հաշվարկներով և ներկա փոխարժեքային դրսորմամբ, 40-100 միլիարդ ԱՄՆ դոլար:

Քանի որ հատուցման ընդհանուր սկզբունքն առնվազն նախնական վիճակի վերականգնումն է, ուստի հատուցումը պետք է նախա-

տեսի հայության ամենացավագին կորստի՝ մարդկային կորուստների, վերականգնման ծրագիր: Թուրքական իշխանությունները, միջազգային հանրության և կառույցների վերահսկողության ներքո, պետք է ստեղծեն հատուկ հիմնադրամ, որն անկախ քաղաքացիությունից կխրախուսի հայերի մեջ բազմազավակությունը և նյութական զգալի աջակցություն կցուցաբերի Հայոց ցեղասպանությունը վերապրածների ժառանգների բազմազավակ ընտանիքներին:

Նյութական հատուցումը պետք է ընդգրկի Թուրքիայի Հանրապետության տարածքում առկա հայկական ժառանգության թուրքական իշխանությունների կողմից միտումնավոր ոչնչացված կամ վնասված հայկական հուշարձանների և այլ ժառանգության վերականգնման ծախսերը: Թուրքական իշխանությունները օրինական տիրոջը՝ հայ ժողովրդին, պետք է վերադարձնեն թանգարաններում, արխիվներում և այլ, այդ թվում նաև մասնավոր, հավաքածուներում պահվող հայ ժողովրդի ժառանգությունը հանդիսացող ցուցանմուշները, առարկաներն ու նյութերը:

Առանձին քննարկման առարկա պետք է դառնան.

- Օսմանյան կայսրությանը պատկանող կամ նրա տարածքում գործած բանկերում հայերի ի պահ տված գումարների հարցը;
- հայերից բռնագրավված ոսկու, այլ թանկարժեք մետաղների ու թանկարժեք քարերի հարցը;
- հայերի կյանքի, առողջության և գույքի ապահովագրական գումարների հարցը;
- թուրքական պետության և անհատ թուրքերի կողմից հայ համայնքին և անհատ հայերին պատկանած անշարժ գույքի (տներ, դպրոցներ, եկեղեցիներ և այլն) և հողամասերի անօրինական գործածություն (1920թ. նոյեմբերից առ այսօր) վարձավճարների հատուցման հարցը;
- Օսմանյան կայսրության հայազգի քաղաքացիական և զինվորական անձանց անօրինական աշխատանքի դիմաց չվճարված գումարների հարցը;
- նյութական կորուստների այլ դրսևորումներ:

Մասնավոր քննության առարկա պետք է դառնա.

- Գերմանիայի (որպես Օսմանյան կայսրության կառավարման մեջ ներգրավված, հետևաբար հանցակից երկրի),
- Ֆրանսիայի (որպես Կիլիկիայի մանդատը ստանձնած, սակայն միջազգային պարտավորությունը չկատարած, ինչպես նաև ներպետական օրենսդրության և միջազգային իրավունքի խախտումով ընթացող անօրինական շարժմանը /քեմալականներին/ ռազմական օգնություն ցուցաբերած երկրի),
- Իտալիայի (որպես ներպետական օրենսդրության և միջազգային իրավունքի խախտումով ընթացող անօրինական շարժմանը /քեմալականներին/ ռազմական օգնություն ցուցաբերած երկրի),
- Ռուսաստանի (որպես ներպետական օրենսդրության և միջազգային իրավունքի խախտումով ընթացող անօրինական /քեմալականների/ շարժումը հրահրած, նրան լայնորեն աջակցած ու անմիջականորեն մասնակցած և տվյալ շարժմանը ռազմական օգնություն ցուցաբերած երկրի) և այլ երկրների անօրինական գործողությունների պատճառով հայ ժողովրդի կրած վնասների հատուցման հարցը այդ երկրների կողմից:

Ամփոփում.

Հայաստանի Հանրապետությունը և հայ ժողովուրդը պետք է ամբողջական հատուցում ստանան իրենց կրած բազմաբնույթ նյութական կորուստների համար՝ վերականգնելու համար կորուստերին նախորդող վիճակը, ինչպես նաև կայացնելու բնականոն զարգացման պարագային ստեղծվելիք նյութական իրավիճակը:

գ. Հայկական հարցի բարոյական բաղադրիչը

Բարոյական հատուցումը պետք է ընդգրկի ոչ միայն Թուրքիայի Հանրապետության կողմից Հայոց ցեղասպանության ուղղակի ճանաչումն ու միանշանակ դատապարտումը, այլև, որն ավելի կարևոր է, պետք է խորանա հաշտեցման ծրագրի իրականացմամբ: Թուրքիայի իշխանությունները թուրք հասարակու-

թյան համար պետք է իրականացնեն պատմական իրականությունը բացահայտող քարոզչական և ուսումնակրթական համապարփակ բազմափուլ ծրագրեր:

8. Հայկական հարցի լուծման ձևախեղման վտանգը

Վերջին հիսուն տարում Հայկական հարցի լուծումը, որը հիմնականում պայմանավորված է եղել հայոց պետականագուրկ վիճակով և որոշակի հաջողություններ գրանցելու ձգտումով, ընթացել է Հայոց ցեղասպանությունը ընդունել տալու ճանապարհով: Եթե այս քաղաքականությունը, որոշակի վերապահումով, կարելի է արդարացված համարել իր ժամանակի և հնարավորությունների համար, ապա 1991թ.-ին հայոց պետականության վերահաստատումից հետո նման քաղաքական հիմնուղին ժամանակավրեպ է և անարդյունավետ: Նմանապես, Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության գերակայությունների մեջ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ընդգրկումն առանց Հայաստանի Հանրապետության իրավունքների վերականգնման և Օսմանյան կայսրության իրավահաջորդ Թուրքիայի Հանրապետության կողմից տարածքային, նյութական և բարոյական հատուցման զուգորդման, անպտուղ է և, մինչևիսկ, վտանգավոր: Նման ձևով հարցի առաջադրումը ստեղծում է հարցի հնարավոր լուծման պատրանքային վիճակ, այն կլանում է հսկայական մարդկային և նյութական միջոցներ, փոշիացնում է բուն նպատակին հասնելու քաղաքական կամքը: Ներկա փուլում Սփյուռքի քաղաքական բոլոր կառույցների համար հույժ կարևոր է վերաձևակերպել առաջնահերթությունները, վերասահմանել թիրախային նպատակները և, համապատասխանաբար, վերաբաշխել մարդկային ու նյութական միջոցները:

Հայկական հարցի անգամ մասնակի լուծումը, այն է Հայոց ցեղասպանության ճանաչման ընդլայնումը կամ Լեռնային Դարաբաղի հարցի մինչևիսկ կատարելապես հայանպաստ ելքը, էապես չեն փոխելու Հայաստանի Հանրապետության աշխարհաքաղա-

քական վիճակը: Հայաստանը մնալու է նույնքան խոցելի և շրջափակելի, գոյատևման և զարգացման համար խիստ սահմանափակ հնարավորություններով: Հետևաբար, Հայաստանի Հանապետության համար կենսական անհրաժեշտություն է երկրի իշխանության կողմից պետականությանը սպառնացող մարտահրավերների խորը գիտակցումը, ինքնախաբեկանքի վիհից դուրս գալու քաղաքական կամքի դրսևորումը և, համապատասխանաբար, այդ վտանգները չեզոքացնելու համար Հայկական հարցի լուծմանը նպատակամղված լուրջ քաղաքականության իրականացումը:

9. Հայկական հարցի լուծման դրսևորման ձևերը

Հայկական հարցի լուծումը հնարավոր է և այն կարող է ունենալ դրսևորման բազմամսական ձևեր: Այսուհանդերձ, Հայկական հարցի լուծումը հնարավոր կլինի, եթե այն խարսխված լինի իրատեսության վրա, այսինքն հաշվի առնի ներկայիս ժողովրդագրական, ռազմական, քաղաքական և տնտեսական իրողությունները: Միևնույն ժամանակ, իրագործելի լինելու համար Հայկական հարցի լուծումը պիտի գործնականում նպաստի ողջ տարածաշրջանում կայուն խաղաղության հաստատմանը, տնտեսության բազմակողմանի զարգացմանը, գործակցական մթնոլորտի ձևավորմանը, ինչպես նաև ծառայի համաշխարհային ուժային կենտրոնների որոշակի շահերի կենսագործմանն ու նրանց տարածաշրջանի հարցերի մեջ ավելի լայն ներգրավվմանը:

Տարակույս չկա, որ 1920թ. նոյեմբերի 22-ից Վիլսոնի Իրավարար վճռով Հայաստանի Հանրապետության իրավատիրությանն անցած տարածքները (նախկին Օսմանյան կայսրության Վանի, Բիթլիսի, Էրզրումի և Տրապիզոնի վիլայեթների զգալի մասը) առ այսօր իրավականորեն Հայաստանի Հանրապետության մաս են կազմում: Սակայն կարծել, որ Թուրքիայի Հանրապետությունը դրանք կամավորությամբ կամ միայն միջազգային օրենքների ճնշման տակ, առանց ռազմական ճնշման, կվերադարձնի իրավատիրոջը, իրատեսական չէ: Ուստի, անրաժեշտ է գտնել Հայաստանի և Թուրքիայի Հանրապետությունների համար երկուստեք ընդու-

նելի, Իրավարար վճռին մաս կազմած երկրների հավանությանն արժանացած, համաշխարհային ուժային կենտրոնների շահերը հաշվի առնող և միջազգային իրավունքով ամրագրելի ձև: Ընդամին, այդ ձևը պիտի լինի այնպիսին, որ փարատի հայկական կողմի անվտանգության մտահոգությունները, հնարավորություն ընձեռի Հայաստանի Հանրապետության տնտեսությանը հարաճուն և շարունակական զարգանալու համար, ինչպես նաև երաշխավորի հայկական մշակութային արժեքների պահպանումը: Միևնույն ժամանակ, հարցի լուծումը չպիտի էականորեն ոտնահարի Թուրքիայի շահերը և թուրքական կողմին պետք է հնարավորություն տա զգալու և մեկընդմիջտ հասկանալու, որ հարցի առաջարկվող լուծումը երկուստեք արժանապատիվ էլք է ստեղծված իրավիճակից:

Ըստ այդմ, Հայկական հարցի լուծումը հնարավոր է խնդրո առարկա տարածքին տարածքային վարձակալության ճանապարհով, որոշակի նոր կարգավիճակ շնորհելու ճանապարհով, ուր Հայաստանի Հանրապետության *de jure* իրավատիրությունը կհամարվի Թուրքիայի Հանրապետության *de facto* տնօրինման հետ:

Այսինքն.

I. Թուրքիայի Հանրապետությունը Հայաստանի Հանրապետությունից, միջազգային երաշխիքներ պարունակող երկկողմ պայմանագրի հիման վրա և ողջամիտ վարձավճարով,² վարձակալում է «*Վիլսոնյան Հայաստանը*»: Նշյալ պայմանագիրը և կից համաձայնագրերը ամրագրում են կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև միջազգային կառույցների և շահագրգիռ երկրների մասնակցության ձևն ու ընդգրկվածության ծավալը խնդրո առարկա տարածքում: Վարձավճարի չափը, վճարման ձևն ու պարբերականությունը որոշվում է համապատասխան համաձայնագրով:

II. Թուրքիայի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն անկախ բնակության վայրից պահպանում են իրենց քաղաքացիությունը, օգտվում են այդ քաղաքա-

ցիության ընձեռած բոլոր իրավունքներից, կատարում են իրենց քաղաքացիական պարտականությունները: Երկու երկրի բոլոր քաղաքացիները ստանում են տարածքում ազատ տեղաշարժի, բեռնափոխադրման, բնակության և տնտեսական գործունեություն ծավալելու ազատ ու անկաշկանդ իրավունք: Տարածքում գործունեություն ծավալած ընկերությունները և անձինք, բացի տեղական հարկերից ու վճարներից, համապատասխան օրենսդրությամբ նախատեսված չափով, հարկեր են վճարում ըստ գրանցման վայրի և քաղաքացիության:

III. Երրոդ երկրների տարանցիկ փոխադրումներից (ներառյալ նավթամուղերից և գազամուղերից) ստացած եկամուտները գնում են տեղական ենթակառույցների (ճանապարհներ, երկաթուղիներ, ընդհանուր օգտագործման հանրային տարածքներ) բարեկարգմանը և զարգացմանը:

IV. Տարածքն ապառազմականացվում է, այսինքն տարածքից դուրս են բերվում «Եվրոպայում սովորական սպառազինությունների մասին» պայմանագրով (Treaty on Conventional Armed Forces in Europe (CFE), 1990) առանձնանշած հարձակողական բնույթի 5 զինատեսակները³: Տարածքի վերահսկողությունը, անհրաժեշտության դեպքում՝ պաշտպանությունը, իրականացնում են համապատասխան լիազորություններով օժտված և ՄԱԿ-ի անվտանգության հովանու ներքո գործող միջազգային խաղաղապահ ուժերը: Համայնքներում կարգուկանոնն ու անվտանգությունն ապահովում են համայնքային ոստիկանությունը, անհրաժեշտության դեպքում՝ ներքին զորքերը: Տարածքում տեղակայվում են միջազգային ռազմական և քաղաքացիական դիտորդական ու խորհրդատվական առաքելություններ:

V. Առանձին քննարկման հարց պիտի դառնա և լուծման դրսևորում պիտի ունենա նախկին Ռուսական Կայսրության և Հայաստանի Հանրապետության (1878-1918/20թթ.) Կարսի մարզի, Բաթումի մարզի հարավային հատվածի և Սուրմալուի

գավառի տարածքների կարգավիճակի հարցը: Ներկայումս այդ տարածքները կազմում են Թուրքիայի Հանրապետության Կարսի (9587 քկմ; 130 000 բնակիչ), Արդահանի (5661 քկմ; 120 000 բնակիչ), Արդվինի (7436 քկմ; 192 000 բնակիչ) և Իգդիրի (3587 քկմ; 180 000 բնակիչ) նահանգները: Ընդամենը՝ 26 241 քկմ (3.4%) և 779 000 բնակիչ (1.1%) (Մանրամասների համար տե՛ս՝ հավելված II): Այս տարածքների վրա, ի տարբերություն Վիլսոնյան Հայաստանի, անմիջականորեն պիտի հաստատվի հայաստանյան ուղղակի ինքնիշխանություն:

10. Հայկական հարցի լուծման գործընթացը որպես ՀՀ հզորացման միջոց և նախադրյալ

Ոչ միայն Հայկական հարցի վերջնական կամ ընդունելի լուծումն ունի կենսական նշանակություն Հայաստանի Հանրապետության անկախ ու արժանապատիվ գոյության համար, այլև լուծման գործընթացն ինքնին վճռորոշ նշանակություն ունի հայոց պետականության հզորացման, հետևաբար չընդմիջվող գոյության, համար:

Քաղաքագիտությունը վաղուց է մշակել պետության հզորության հաշվարկի բանաձևը: Ամերիկյան քաղաքագիտության մեջ այն հայտնի է Յաբլոնսկու (Jablonsky) բանաձև անունով.⁴

$$Pp = (C+E+M) \times (S+W)$$

որտեղ՝

- | | |
|---|---|
| Pp (Perceived power) | հաշվարկվող հզորությունն է; |
| C (Critical mass: population+territory) | որոշիչ զանգվածը. բնակչությունը + տարածքը; |
| E (Economic capability) | տնտեսական կարողությունը; |
| M (Military capability) | ռազմական կարողությունը; |
| S (Strategic purpose) | հեռազնա (ստրատեգիական) նպատակը; |
| W (Will to pursue national strategy) | հեռազնա (ստրատեգիական) պետական/ազգային նպատակը հետապնդելու կամքը: |

Բանաձևից ակնհայտ է, որ պետության հզորությունը նույնքան պայմանավորված է հեռագնա նպատակի առկայությամբ և դրան հասնելու պետական նպատակաձեռնությամբ, որքան բնակչությամբ, տարածքով, տնտեսական և ռազմական հզորությամբ:

Պետության հզորությունը որոշակի ցուցանիշների սուկական գումար չէ, այլ շոշափելի, նյութական ցուցանիշների բազմապատկումն է նպատակի և նպատակաձեռնության գումարային ցուցանիշով: Անկախ տարածքի, բնակչության, տնտեսական և ռազմական հզորությունից, եթե պետությունը չունի նպատակ, հետևաբար՝ դրան հասնելու կամք, պետության հզորությունը ոչինչ է, քանի որ ցանկացած թիվ բազմապատկած զրոյով արդյունքում զրո է:

Այսօր Ղարաբաղի հարցը, մի շարք առարկայական և ոչ առարկայական պատճառներով, չի հանդիսանում համազգային նպատակ:

Հայոց ցեղասպանությունը ճանաչել տալու քաղաքական գործընթացն ըստ էության չի կարող լինել համազգային, առավել ևս պետական նպատակ, քանի որ բացակայում է նպատակի հստակ ձևակերպումն ու որևէ էական արդյունքի հասնելու հնարավորությունը:

Հետևաբար ոչ միայն Հայկական հարցի լուծումն է հայոց պետականության հզորացման եզակի հնարավորությունը և հայ ժողովրդի հարատևման միակ ուղին, այլև Հայկական հարցը լուծելու սուկ գործընթացը, այսինքն մնան նպատակի առկայությունն ու նրան հասնելու քաղաքական կամքը, հայոց պետականության հզորության ամրապնդման անփոխարինելի գործոն է, քանզի ***Հայրենիքը, որ նպատակ չունի միայն բնակավայր է:***

Եզրակացություն.

Վերլուծելով վերը շարադրածը, ինչպես նաև նկատի ունենալով Հայկական հարցի լուծմանը վերաբերող վերոհիշյալ հիմնադրույթները՝ կարելի է անել հետևյալ եզրակացությունը.

- ☞ Հայկական հարցի լուծումն իրատեսական է և իրագործելի:
- ☞ Հայկական հարցի լուծումն այլընտրանք չունի: Հայկական հարցը չլուծելու դեպքում Հայաստանի Հանրապետությունը մշտապես կախված է լինելու հարևան երկրների իրավիճակից կամ բարեհաճությունից:
- ☞ Հայկական հարցի լուծումը հայոց պետականության հզորացման եզակի հնարավորությունն է և հայ ժողովրդի հարատևման միակ ուղին:

Հոկտեմբեր 2008թ. – մարտ 2009թ., Երևան–Օտտավա

Հղումներ և ծանոթագրություն

1. Vienna Convention on Succession of States in respect of Treaties 1978, Article 2, (b).
2. Ողջամիտ կարելի է համարել Թուրքիայի Հանրապետության ՀՆԱ-ի 1%-ին համարժեք վճարը՝ 8.6 մլրդ ԱՄՆ դոլար, քանի որ այդ տարածքը կազմում է Թուրքիայի կողմից վերահսկվող տարածքի գրեթե 13%-ը (ավելի քան 100 հազ. քվմ) և այնտեղ ապրում է Թուրքիայի բնակչության ավելի քան 8%-ը (մոտվորապես 5.6 մլն մարդ): (Վերոհիշյալի մեջ չեն հաշվարկված մախկին Ռուսական Կայսրության և Հայաստանի Հանրապետության (1878-1918/20թթ.) Կարսի մարզի, Բաթումի մարզի հարավային հատվածի և Սուրմալուի գավառի տարածքները: Մանրամասների համար տե՛ս սույն հայեցակարգի 9-րդ կետի V ենթակետը:)
3. Այդ զինատեսակներն են՝ տանկերը, զրահամեքենաները, հրանոթները, մարտական ինքնաթիռներն ու հարձակողական ուղղաթիռները:
4. David Jablonsky, National Power, Parameters, vol. 27, 1, Spring, 1997, p. 34-54.

Երկրների ցանկ, որոնք զանվում են միջազգային պարտավորության ներքո, քանի որ կողմ են հանդիսացել հայ-թուրքական սահմանին վերաբերող իրավաբարությանը

/Հաշվարկը կատարվել է ըստ ՄԱԿ անդամության ցուցակի:
Սգեցված հենքով երկրները չեն զանվում պարտավորության ներքո/

№	Արդի անվանումը (հաջորդականությունն ըստ ՄԱԿ-ի անգլերեն ցանկի)	ըստ Գաշնակից ուժերի Գերագույն խորհրդի Սան Ռեմոյի հայցադիմումի (<i>compromis</i>) (26 ապրիլի, 1920թ.)			Մաս են համոխացել Գաշնակից ուժերին ըստ Սերի պայմանագրի մեջ ներառված (հոդված # 89) իրավաբարության հայցի (<i>compromis</i>)	Ծանոթագրություն
		Մաս են համոխացել Բրիտանական կայսրությանը կամ գտնվել են նրա քաղաքական ենթակայության ներքո	Մաս են համոխացել Ֆրանսիական (Երրորդ) Հանրապետությանը կամ գտնվել են նրա քաղաքական ենթակայության ներքո	Մաս են համոխացել Գաշնակից ուժերին		
I	II	III	IV	V	VI	VII
1.	Աֆղանստան					
2.	Ալբանիա			+		
3.	Ալժիր		+			
4.	Անդորրա			+		
5.	Անգոլա					որպես Պորտուգալիայի անդրծովյան տարածք
6.	Անտիգուա և Բարբուդա	+				
7.	Արգենտինա					
8.	Հայաստան			+	+	
9.	Ավստրալիա	+		+	+	
10.	Ավստրիա					ըստ Սեն ժերմենյնի պայմանագրի # 87 հոդվածի, § 2
11.	Արդենջան					
12.	Բահամներ	+				
13.	Բահրեյն	+				որպես Բրիտանիայի պրոտեկտորատ
14.	Բանգլադեշ	+		+		
15.	Բարբադոս				+	
16.	Բելառուս					
17.	Բելգիա			+	+	
18.	Բելիզ	+				
19.	Բենին		+			որպես Ֆրանսիական Արևմտյան Աֆրիկայի մաս

I	II	III	IV	V	VI	VII
20.	Քուտան	+				ըստ 1910թ. պայմանագրի
21.	Քոլիվիա			+		
22.	Քոսնիա և Հերցոգովինա					որպես Ավստրո- Հունգարիայի մաս
23.	Քոտավանա	+				
24.	Քրագլիյա			+		
25.	Քրունեյ Դարեսասլամ	+				
26.	Քուլարիա					ըստ Նոյիի պայմանագրի (հոդված # 60)
27.	Քուրկինա Ֆաստ		+			
28.	Քուրունդի					
29.	Կամպուչիա		+			
30.	Կամերուն					
31.	Կանադա			+	+	
32.	Քաի Վեռլե		+			
33.	Աֆրիկայի Կենտրոնական Հանրապետություն		+			
34.	Չադ		+			
35.	Չիլի					
36.	Չինաստան			+		
37.	Կոլումբիա					
38.	Կոմորներ		+			
39.	Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն					որպես Բելգիայի մաս
40.	Կոնգոյի Հանրապետություն		+			
41.	Կոստա Ռիկա			+		
42.	Կոտդիվուար		+			
43.	Խորվաթիա					որպես Հարավսլավիայի մաս
44.	Կուբա			+		
45.	Կիպրոս	+				
46.	Չեխիա			+	+	
47.	Դանիա					
48.	Ջիբուտի		+			
49.	Դոմինիկա	+				
50.	Դոմինիկյան Հանրապետություն					
51.	Էկվադոր			+		
52.	Եգիպտոս	+				
53.	Էլ Սալվադոր					
54.	Հասարակածային Գվինեա					
55.	Էրիթրեա					որպես Իտալիայի գաղութ
56.	Էստոնիա					
57.	Եթովպիա					

I	II	III	IV	V	VI	VII
58.	Ֆիջի	+				
59.	Ֆինլանդիա			+		
60.	Ֆրանսիա			+	+	
61.	Գաբոն		+			
62.	Գամբիա	+				
63.	Վրաստան					
64.	Գերմանիա					ըստ Վերսալի պայմանագրի (հոդված #117)
65.	Գանա	+				
66.	Հունաստան			+	+	
67.	Գրենադա	+				
68.	Գվատեմալա			+		
69.	Գվինեա		+			
70.	Գվինեա-Բիսաու					որպես Պորտուգալիայի գաղութ
71.	Գայանա	+				
72.	Հայիթի			+		
73.	Հոնդուրաս			+		
74.	Հունգարիա					ըստ Տրիանոնի պայմանագրի (հոդվածներ # 70 և 72)
75.	Իսլանդիա					
76.	Հնդկաստան	+		+	+	
77.	Ինդոնեզիա					
78.	Իրանի Իսլամական Հանրապետություն					
79.	Իրաք					
80.	Իռլանդիա	+				
81.	Իսրայել					
82.	Իտալիա			+	+	
83.	Ջամայկա	+				
84.	Ճապոնիա			+	+	
85.	Հորդանան					
86.	Ղազախստան					
87.	Քենիա	+				
88.	Կիրիբատի	+				
89.	Կորեայի Դեմոկրատական Հանրապետություն					որպես Ճապոնիայի մաս
90.	Կորեայի Հանրապետություն					որպես Ճապոնիայի մաս
91.	Բուվեյթ	+				
92.	Ղրղզստան					
93.	Լատսի Դեմոկրատական Հանրապետություն		+			
94.	Լատվիա					
95.	Լիբանան					
96.	Լեսոտո	+				
97.	Լիբիա					

I	II	III	IV	V	VI	VII
98.	Լիբիայի Արաբական Հանրապետություն					որպես Իտալիայի մաս
99.	Լիխտենշտեյն					
100.	Լիտվա					
101.	Լյուքսեմբուրգ					
102.	Հարավսլավիայի նախկին հանրապետություն Մակեդոնիա					որպես Սերբիայի մաս
103.	Մարագասկար		+			
104.	Մալավի	+				
105.	Մալայզիա	+				
106.	Մադիվներ	+				
107.	Մայի		+			
108.	Մալթա	+				
109.	Մարշալյան կղզիներ					
110.	Մավրիտանիա		+			
111.	Մավրիտիուս	+				
112.	Մեքսիկա					
113.	Միկրոնեզիայի Դաշնակցային պետություններ					
114.	Մոլդովայի Հանրապետություն					որպես Ռումինիայի մաս
115.	Մոնակո		+			ըստ 1918թ. հուլիսի պայմանագրի
116.	Մոնղոլիա					որպես Չինաստանի մաս
117.	Չեռնոգորիա					որպես Սերբիայի մաս
118.	Մոնակո		+			
119.	Մոզամբիկ					որպես Պորտուգալիայի գաղութ
120.	Սիանմար	+			+	որպես Բրիտանական Հնդկաստանի մաս
121.	Նամիբիա					
122.	Նաուտու	+				
123.	Նեպալ	+				
124.	Նիդեռլանդներ					
125.	Նոր Զելանդիա	+			+	+
126.	Նիկարագուա				+	
127.	Նիգեր		+			
128.	Նիգերիա	+				
129.	Նորվեգիա					
130.	Օման					
131.	Պակիստան	+			+	
132.	Փայու					
133.	Պանամա				+	
134.	Պապուա Նոր Գվինեա	+				
135.	Պարագվայ					
136.	Պերու				+	

I	II	III	IV	V	VI	VII
137	Ֆիլիպիններ			+		ըստ Ֆիլիպիններ-ԱՄՆ ակտի 1902թ.
138	Լեհաստան				+	
139	Պորտուգալիա			+	+	
140	Ղաթար	+				
141	Ռումինիա			+	+	
142	Ռուսաստանի Դաշնություն					
143	Ռուանդա					
144	Սեն Քիթս և Նևիս	+				
145	Սեն Լուչիա	+				
146	Սեն Վինսենտ և Գրենադինս	+				
147	Սամոա					
148	Սեն Մարինա			+		
149	Սաո Տոմե և Փրինսիպե					որպես Պորտուգալիայի զաղութ
150	Սաուդյան Արաբիա					
151	Սենեգալ		+			
152	Սերբիա			+	+	
153	Սեյշելներ	+				
154	Սիերրա Լեոնե	+				
155	Սինգապուր	+				
156	Սլովակիա			+	+	
157	Սլովենիա			+	+	որպես Սերբիայի մաս
158	Սողոմոնի կղզիներ	+				
159	Սոմալի	+				
160	Հարավային Աֆրիկա	+		+	+	
161	Իսպանիա					
162	Շրի Լանկա	+				
163	Սուդան	+				որպես Բրիտանիայի զաղութ (Անգլո-եգիպտակա ն կոնդոմինիում)
164	Սուրինամ					
165	Սվազիլենդ	+				
166	Շվեդիա					
167	Շվեյցարիա	+				
168	Սիրիայի Արաբական Հանրապետություն					
169	Տաջիկստան					
170	Տանզանիայի Սիանյալ Հանրապետություն	+				
171	Թաիլանդ	+		+		
172	Արևելյան Թիմոր					որպես Պորտուգալիայի զաղութ
173	Տոգո					
174	Տոնգա	+				
175	Տրինիդադ և Տոբագո	+				
176	Թունիս		+			

I	II	III	IV	V	VI	VII
177	Թուրքիա				+	
178	Թուրքմենստան					
179	Տուվալու	+				
180	Ուզանդա					
181	Ուկրաինա					
182	Արարական Միացյալ Էմիրություններ					
183	Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլան- դիայի Միացյալ Թագավորություն	+		+	+	
184	Ամերիկայի Միացյալ Նահանգներ			+		որպես Գաշնակից ուժե- րի մաս և Իրավարար
185	Ուրուգվայ			+		
186	Ուզբեկստան					
187	Վանուատու	+				
188	Վենեսուելայի Բոլիվիական Հանրապետություն					
189	Վիետնամ		+			
190	Եմեն	+				
191	Չամբիա	+				
192	Զիմբաբվե	+				

**Ներկայումս Թուրքիայի Հանրապետության կողմից
վերահսկվող Հայաստանի Հանրապետության տարածքների
բնակչությունն ու մակերեսը**

(մգեցված հենքով տողերը վերաբերում են Նախկին Ռուսական կայսրության և
Հայաստանի Հանրապետության տարածքներին (1878-1918/20թթ.)/

№	Province	Նահանգը	Տարածքը (քկմ)	Բնակչությունը	Բնակչության խտությունը (1/քկմ)
1.	Agri	Ադրի	11 376	571 000	50
2.	Ardahan	Արդահան	5 661	120 000	21
3.	Artvin	Արդվին	7 436	192 000	26
4.	Bayburt	Բայբուրդ	4 043	97 400	24
5.	Bingol	Բինգյոլ	8 125	245 000	30
6.	Bitlis	Բիթլիս	6 707	414 000	62
7.	Erzurum	Էրզրում	25 066	959 000	38
8.	Giresun	Գիրեսուն	6 934	524 000	76
9.	Gumushane	Գյումուշխանե	6 575	192 000	29
10.	Igdir	Իգդիր	3 587	180 000	50
11.	Kars	Կարս	9 587	287 000	30
12.	Mus	Մուշ	8 196	489 000	60
13.	Rize	Ռիզե	3 920	362 000	92
14.	Trabzon	Տրապիզոն	6 685	1 061 000	159
15.	Van	Վան	19 069	1 013 000	53
Նախկին Ռուսական կայսրության և Հայաստանի Հանրապետության տարածք (1878-1918/20թթ.)			26 241	779 000	30
Ընդամենը			132 967	6 461 400	49

Վուդրո Վիլսոնի իրավարար վճիռը Հայաստանի և Թուրքիայի սահմանի վերաբերյալ



Տարեվերջին՝ դեկտեմբերի 28-ին [2006թ.], լրանում է ԱՄՆ 28-րդ նախագահ (1913-1921թթ.), Խաղաղության նոբելյան մրցանակի դափնեկիր (1920թ.), հայ ժողովրդի մեծագույն բարեկամ Վուդրո Թոմաս Վիլսոնի (Woodrow Thomas Wilson) ծննդյան 150-ամյակը:

Համաշխարհային քաղաքագիտական միտքը բազմիցս է անդրադարձել Վուդրո Վիլսոնի քաղաքական ժառանգությանը, սակայն գրեթե ոչինչ չի արվել վեր հանելու համար ԱՄՆ նախագահի հետևողական և աննկուն ջանքերը հանուն հայ ժողովրդի դարավոր իղձերի իրականացման և, ամենակարևորը, արժեվորելու համար այդ գործունեության բարձրակետը հանդիսացող Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև սահմանը որոշող և մեկընդմիջտ ամրագրող **իրավարար վճիռ (arbitral award)** քաղաքական անանց կարևորությունը մերօրյա Հայաստանի Հանրապետության ներկայի և ապագայի համար:

Իրավարար վճիռի նախընթացը

1920թ. ապրիլի 25-26-ին Գաշնակից և ընթերակա ուժերի Գերագույն խորհուրդը (Supreme Council of Allied and Associated Powers), բաղկացած Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի ներկայացուցիչներից, որոշում կայացրեց դիմել ԱՄՆ նախագահին երկու խնդրանքով.

- ա) ստանձնել Հայաստանի մանդատը,
- բ) իրավարար վճռով որոշել Հայաստանի և Թուրքիայի սահմանը¹:

Երկրորդ խնդրանքը նաև պաշտոնապես ամրագրվեց խաղաղության վեհաժողովի նախագահի՝ Ֆրանսիայի վարչապետ և արտգործնախարար Ալեքսանդր Միլերանի, 1920թ. ապրիլի 27-ի պաշտոնագրով²: Նույն խնդրանքը, 89-րդ հոդվածի տեսքով, ներառվեց Սևրի դաշնագրի մեջ և արդեն Հայաստանի և Թուրքիայի,

ինչպես նաև դաշնագիրը ստորագրած գրեթե 20 երկրի, անունից հղվեց ԱՄՆ նախագահին: ԱՄՆ նախագահը, իրավասու մարմինները (պետքարտուղարությունը, պաշտպանության նախարարությունը և նախագահի վարչակազմը) և համապատասխան աշխատանքային խումբը (պրոֆ. Վեստերմանի գլխավորությամբ), մանրակրկիտ ուսումնասիրեցին հայցը և կայացրին իրավարար վճիռը:

Վուդրո Վիլսոնը *իրավարար վճիռը* ստորագրեց 1920թ. նոյեմբերի 22-ին: Այն դեկտեմբերի 6-ին պաշտոնապես փոխանցվեց Փարիզ՝ դաշնակից ուժերի Գերագույն խորհրդին: Սույն վճռի պաշտոնական և ամբողջական անվանումն է. *«Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահի որոշումը Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանի, Հայաստանի դեպի ծով ելքի և հայկական սահմանին հարակից թուրքական տարածքի ապառազմականացման վերաբերյալ» 22 նոյեմբերի, 1920թ.:*

Իրավարար վճռի բովանդակությունը

Ըստ իրավարար վճռի, Հայաստանի Հանրապետության տիտղոսն ու իրավունքները ճանաչվում էին նախկին Օսմանյան կայսրության Վանի, Բիթլիսի, Էրզրումի և Տրապիզոնի նահանգների վրա՝ ընդհանուր առմամբ 103 599 քկմ: Դա կրկնակի քիչ էր այն տարածքից, որի վրա Մուդրոսի զինադադարի 24-րդ հոդվածով ճանաչվել էր հայկական տիտղոսը: Նման էական կրճատումը պայմանավորված էր այն հանգամանքով, որ արդեն այդ ժամանակ ի հայտ էին եկել հայերի հսկայական մարդկային կորուստները՝ Հայոց ցեղասպանության հետևանքով:

Իրավարար վճռի ներկա կարգավիճակը

Իրավարար վճիռը վերջնական է և պարտադիր է կատարման համար³: Այն չունի ժամանակային սահմանափակում⁴, և նրա կարգավիճակը կախում չունի վճռի հետագա ճակատագրից: Միջազգային իրավունքը, մասնավորապես Հասագայի կոնվենցիայի (1907թ.) 81-րդ հոդվածը, որով ամփոփվել և ամրագրվել է իրավարար վճիռների կարգավիճակը, ընդհանրապես չի նախատեսում վճռի չեղյալ հայտարարում⁵: Ըստ միջազգային իրավունքի՝ կողմերը, համաձայնվելով իրավարար որոշմանը ներկայացնել իրենց

վեճը, մեկընդմիջտ ընդունում են, որ իրենց կողմից կատարման համար պարտադիր կլինի իրավարարի ցանկացած վճիռ⁶: Կողմերից մեկի մերժումը ի կատար ածելու իրավարարությունը, չի ազդում վճռի վավերականության վրա: Ըստ այդմ, քանի որ իրավարարության հայցը ներկայացվել է ոչ միայն Հայաստանի և Թուրքիայի, այլև 16 այլ երկրի կողմից, ուստի վճիռը պարտադիր է բոլոր հայցվորների համար, որոնք ներկայումս հետևյալ երկրներն են՝ Միացյալ Թագավորություն, Կանադա, Ավստրալիա, Նոր Զելանդիա, Հարավային Աֆրիկա, Հնդկաստան, Պակիստան, Բանգլադեշ, Ֆրանսիա, Իտալիա, Ճապոնիա, Բելգիա, Հունաստան, Լեհաստան, Պորտուգալիա, Ռումինիա, Չեխիա, Սլովակիա, Սերբիա, Խորվաթիա, Սլովենիա, Բոսնիա, Հեթցեգովինա, Մակեդոնիա և Մոնտենեգրո: Այն պարտադիր է նաև իրավարարի՝ Միացյալ Նահանգների համար, քանի որ ԱՄՆ մախսագահի ցանկացած պաշտոնական դիրքորոշում հանդիսանում է երկրի դիրքորոշումը⁷ և իրավարարությունից բխող քայլերը պարտադիր են կատարման համար⁸:

Հայաստանը, որպես ՄԱԿ-ի անդամ երկիր, կարող է ՄԱԿ-ի միջազգային դատարանի միջոցով (Միջազգային դատարանի կանոնադրության 36-րդ հոդվածի 2 կետի (ա) և (բ) ենթակետերի հիման վրա) հավաստել Վիլսոնի իրավարար վճռի վավերականությունը և դրանով իսկ վերահաստատել իր տիտղոսը իրավարար վճռով Հայաստանին հատկացված տարածքի վրա:

Հղումներ և ծանոթագրություն

1. The Treaties of Peace, 1919-1923, vol. I, New York, 1924, p. xxxii.
2. Papers Relating to Foreign Relations of the United States, 1920, Washington, 1936, v. III, p. 780.
3. A Dictionary of Arbitration & its Terms, (ed. Seide K.), New York, 1970. p. 32.
4. Luzius Wildhaber, Treaty Making Power & Constitution, Basel & Stuttgart, 1971, p. 98.
5. Manual of Public International Law, (ed. Sorensen M.), New York, 1968, p. 693-4.
6. A Dictionary of Arbitration and its Terms, նշվ. աշխ. էջ 27:
7. Quincy Wright, The Control of American Foreign Relations, New York, 1922, p. 38.
8. John Collier, The Settlement of Disputes in International Law, Oxford, 1999, p. 265.

*առաջին անգամ տպագրվել է ԱԶԳ օրաթերթում,
28 դեկտեմբերի, 2006թ., էջ 3*

Հիմնավորում

նոյեմբերի 22-ը «Հայրենատիրության օր» հռչակելու

Արդեն մի քանի տասնամյակ է, ինչ **Ապրիլի 24-ը** հանդիսանում է հայ ժողովրդի նվիրական օրերից մեկը՝ հայոց միասնական քաղաքական վարքի թերևս ամենավառ դրսևորման օրը: Հայ իրականության մեջ այդ օրը մտավ նախ որպես հոգեհանգստի ու հիշատակի խնկարկման օր, ապա աստիճանաբար վերաճեց և դարձավ ոգեկոչման ու **Հայոց ցեղասպանությունը** ճանաչելու պահանջի օր: Այսուհանդերձ, այդ օրը կորստի օր է, առավելագույնը՝ կորուստը ճանաչել տալու օր:

Սակայն, որպես ազգ և որպես արդարությանը հետամուտ հանրություն, մենք կարիք ունենք հաղթանակի ու հատուցման օրվա, արդարության կայացման ու իրավունքի հաստատման օրվա: Մեր իրականության մեջ կա՛ այդ օրը. հաղթանակի անթեղված կրակը պահող այդ օրը **նոյեմբերի 22-ն** է՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահ **Վուդրո Վիլսոնի** կողմից Հայաստանի և Թուրքիայի սահմանը որոշող **Իրավարար վճռի (Arbitral Award)** կայացման օրը: Այդ օրն իրավարար վճռով Հայաստանի Հանրապետությանը հատկացվեց մեր բնօրրան-հայրենիքի մի մասը՝ հյուսիս-արևելյան հատվածը: Այդ օրը միջազգային իրավունքի հիման վրա կայացվեց և **մեկընդմիջտ** ուժի մեջ մտավ մի վճիռ, որը.

1. կատարման համար պարտադիր է,
2. իրավական տեսանկյունից անբեկանելի է և
3. իրավունքների գոյության առումով անժամանցելի է:

Քանի որ Իրավարար վճիռը կայացվել է Թուրքիայի և Հայաստանի, ինչպես նաև Բրիտանական Կայսրության, Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի, Կանադայի, Հնդկաստանի, Բելգիայի, Հունաստանի, Պորտուգալիայի, Լեհաստանի, Հարավային Աֆրիկայի, Ավստրալիայի, Նոր Զելանդիայի, Չեխոսլովակիայի, Հարավսլավիայի, Ռումինիայի անվերապահ հայցադիմումի

(*compromis*) հիման վրա և ուժի մեջ է մտել ստորագրման պահից, ուստի այն պարտադիր, անբեկանելի ու անժամանցելի է բոլոր վերոհիշյալ երկրների կամ նրանց իրավահաջորդների համար: Այն պարտադիր, անբեկանելի ու անժամանցելի է նաև Ամերիկայի Միացյալ Նահանգների համար, քանի որ Իրավարար վճիռը կրում է ԱՄՆ Մեծ կնիքը, ստորագրված է ԱՄՆ նախագահի և ենթաստորագրված է ԱՄՆ պետքարտուղարի կողմից:

Ըստ միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքի, որն ամրագրված է միջազգային բազմաթիվ փաստաթղթերում, Իրավարար վճիռն ի կատար ածումն այդ փաստաթղթին կողմ հանդիսացող, այսինքն՝ հայցադիմումը ստորագրած, բոլոր երկրների անսակարկ պարտավորությունն է, նրանց անօտարելի հանձնառությունը: Ըստ այդմ, մեր համազգային խնդիրը պետք է լինի յուրաքանչյուր տարի նոյեմբերի 22-ին այդ երկրներից պահանջել, որպեսզի նրանք տեր կանգնեն միջազգային իրավունքից բխող իրենց պարտավորությանը և դա անեն ոչ թե որպես բարեհաճություն, այլ որպես մոռացված և մասամբ ուրացված, սակայն անխաթար ու անբեկանելի միջազգային պարտավորություն:

ՆՈՅԵՄԲԵՐԻ 22-ը պետք է դառնա ոտնահարված արդարության վերականգնման, ազգային պահանջատիրության և մեզանից խլված իրավունքների վերահաստատման օրը: Մեծ հայորդի Գ-արեգին Նժդեհի մեկ բառով՝ **ՀԱՅՐԵՆԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՕՐԸ:**

Այսու, միանգամայն նպատակահարմար է, որ ՀՀ Ազգային ժողովը, համաձայն ՀՀ սահմանադրության 62-րդ հոդվածի 2-րդ պարբերության, ընդունի հայտարարություն, որով նոյեմբերի 22-ը հայտարարվի **ՀԱՅՐԵՆԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՕՐ:**

«Վուդրո Վիլսոնի 14 կետերը» և Հայաստանը

Վուդրո Վիլսոնն իր ձեռքում է պահել ԱՄՆ քաղաքական դեկր մի խռովահույզ ժամանակաշրջանում (1913-1921թթ.), երբ առաջին աշխարհամարտի փոթորիկների մեջ և դրան հաջորդած քաղաքական վերածնունդների ընթացքում կործանվում էին կայսրություններ, պատմական ասպարեզ էին իջնում նորանոր երկրներ, ի հայտ էր գալիս աշխարհի, որպես մի փոխկապակցված ընդհանրության, նոր ըմբռնումը: Անուրանալի է ԱՄՆ նախագահի և իրավագիտության դոկտորի դերը ազգերի ինքնորոշման իրավունքի քաղաքական հասկացության առաջադրման, մշակման և աներկբա սատարման ուղղությամբ, ինչպես նաև Ազգերի լիգայի, հետևաբար դրա իրավահաջորդը հանդիսացող ՄԱԿ-ի, ստեղծման գործում:

Գրեթե ինը տասնամյակ առաջ՝ 1918թ. հունվարի 8-ին, ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնը Կոնգրեսի համատեղ նիստին դիմեց մի ուղերձով, որը քաղաքական պատմության մեջ առավելաբար հայտնի է **«Վուդրո Վիլսոնի 14 կետերը»** անունով (*“14 Points of Woodrow Wilson”*), սակայն որի պաշտոնական անվանումն է **«Ուղերձ Կոնգրեսին, որը հայտարարում է Միացյալ Նահանգների պատերազմի նպատակներն ու խաղաղության պայմանները»** (*“Address to Congress, Stating the War Aims and Peace Terms of the United States”*): Այս ուղերձի մեջ, որը մինչ օրս ԱՄՆ արտաքին քաղաքականության հիմնարար փաստաթղթերից է¹, շարադրված էին ԱՄՆ բարձրագույն իշխանավորի և արտաքին քաղաքականության համար անմիջական պատասխանատուի հայացքները հետպատերազմյան աշխարհակարգի վերաբերյալ:

Սույն փաստաթղթի 12-րդ կետն անմիջականորեն վերաբերում էր հայ ժողովրդի ապագային և ստեղծվելիք Հայաստանի Հանրապետությանը: Այն միանշանակորեն շեշտում էր Օսմանյան կայսրության ոչ թուրք ազգերի, մասնավորապես հայության, ազատորեն ապրելու և սեփական ճակատագիրը տնօրինելու իրավունքը: Ուղերձի 12-րդ կետը հայտարարում էր. *«Ներկայիս»*

Օսմանյան կայսրության թուրքական մասի համար պետք է հավաստել անվտանգ ինքնիշխանություն, սակայն մյուս ազգերի համար, որոնք ներկայումս գտնվում են թուրքական իշխանության տակ, պետք է ապահովել կյանքի աներկբա անվտանգություն և ինքնավար զարգացման կատարելապես անխափան հնարավորություն, Դարդանելը, որպես ազատ ջրուղի, միջազգային երաշխիքների ներքո, մշտապես պետք է բաց լինի բոլոր երկրների նավերի և առևտրի համար»²:

Թեև Վիլսոնի ուղերձում առանձնանշված չէ որևէ երկիր, այսուհանդերձ, անտարակույս, ԱՄՆ նախագահի ուղերձը վերաբերում էր նաև Հայաստանին: Վիլսոնը սույն ուղերձի վրա, իր խորհրդական, գնդապետ Էդվարդ Հաուզի (Edward House) հետ միասին, աշխատել է 1918թ. հունվարի 4-ին, 5-ին և 7-ին: Այդ մասին վկայված է նախագահի խորհրդականի օրագրի մեջ: Ահա թե ինչ է արձանագրում Հաուզը 1918թ. հունվարի 7-ին. «*Երբ գրվել էր Թուրքիային վերաբերող պարբերությունը, նախագահը մտածեց, որ այն պետք է դարձնել ավելի հստակ, որ Հայաստանը, Միջագետքը, Սիրիան և այլ մասերը պետք է նշվեն անուններով: Ես չհամաձայնեցի սրա հետ, հավատացած լինելով, որ այն ինչ ասված է բավարար է ցույց տալու համար դա, և ի վերջո ամեն ինչ մնաց այնպես, ինչպես ձևակերպված էր սկզբում»³:*

Ի լրումն և ի հաստատումն այս վկայության, վերոհիշյալ ուղերձի պաշտոնական մեկնաբանության մեջ (*“Official American Commentary on the Fourteen Points”*), հղված Փարիզի խաղաղության վեհաժողովում ԱՄՆ պաշտոնական պատվիրակությանը (30 հոկտեմբերի, 1918թ.), նախագահ Վիլսոնը, անդրադառնալով իր ծրագրային ուղերձի 12-րդ կետին, տալիս է իր պատկերացումները Թուրքիայի ապագայի և նախնական դիրքորոշումը՝ Հայաստանի սահմանների վերաբերյալ. «*Հայաստանին պետք է տրվի նավահանգիստ Միջերկրականի ծովափում, և հաստատվի հովանավորող ուժ: Ֆրանսիան կարող է հավակնել դրան, սակայն հայերը կնախընտրեն Մեծ Բրիտանիան»⁴:* Իր հերթին, մեկնաբանելով

ԱՄՆ նախագահի հանձնարարականը, գնդապետ Հաուզը, ով նաև Փարիզի Խաղաղության վեհաժողովում ԱՄՆ պաշտոնական պատվիրակության ղեկավարն էր, գրում է. *«Մերձավոր արևելքում նախագահ Վիլսոնի նպատակն էր Կոնստանտինոպոլսի համար սպահովել միջազգային վերահսկողություն, Անատոլիան տալ թուրքերին և ստեղծել անկախ Հայաստան»*⁵:

Հայերին թուրքական լծից ազատագրված տեսնելու իր այս ձգտումը նախագահ Վիլսոնը վերահաստատել է Հռոմի Բենեդիկտոս XV պապին 1918թ. դեկտեմբերի 26-ին գրած նամակում. *«Վստահեցնում եմ Ձեզ, որ խոսում եմ ոչ միայն իմ, այլև ողջ ամերիկյան ժողովրդի անունից, երբ ասում եմ, որ ոչ մի այլ ժողովրդի տառապանք այդքան խորապես չի խռովել ամերիկացիներին, որքան հայերինը: Վստահաբար, իմ ամենամյիրական ձգտումներից է լինելու կարողությանս չափով մասնակցություն ունենալ, սպահովելու համար այդ անիրավիկած և տարաբախտ ժողովրդի օրինավոր և ամբողջական ազատագրումը անարդար լծից»*⁶:

ԱՄՆ նախագահ Վիլսոնն իր մեկ այլ ուղերձում (23 սեպտեմբերի, 1919թ.) հստակորեն նշում է. *«Հայաստանը մեկն է այն շրջաններից, որը պետք է լինի Ազգերի լիգայի խնամակալության ներքո: Հայաստանը պետք է ազատվի: Թուրքին պետք է արգելվի իշխանություն բանեցնել այնտեղ, և քրիստոնյա ժողովրդներին ոչ միայն պետք է թույլ տրվի օգնել Հայաստանին, այլև նրանց պետք է թույլ տրվի պաշտպանել Հայաստանը»*⁷: Ավելին, նույն ուղերձի մեջ նախագահ Վիլսոնը, վկայակոչելով հայոց ջարդերը Թուրքիայում, միանշանակորեն մեղադրում է Թուրքիայի կառավարությանը. *«Թուրքական կառավարությունը պետք է ասի, որ ի վիճակի չի եղել կանխելու ահավոր ջարդերը, որոնք այդ երկիրը դարձրել են գերեզմանոց»*⁷:

Անհրաժեշտ է ընդգծել, որ Թուրքիան Վուդրո Վիլսոնի առաջադրած սկզբունքները միանշանակորեն ճանաչել է որպես խաղաղության բանակցությունների հիմք: Օսմանյան կառավարությունը զինադադարի իր պաշտոնական գրության մեջ (14 հոկ-

տեմբերի, 1918թ.) հստակորեն հայտարարել է. «Ինքը (Օսմանյան կայսերական կառավարությունը) որպես բանակցությունների հիմք է ընդունում այն ծրագիրը, որն առաջադրվել է ԱՄՆ նախագահի կողմից Կոնգրեսին հոկտեմբեր 1918թ. հունվարի 8-ի ուղերձում»⁸: Միմիայն այս պարտավորությունն ի նկատի ունենալով է, որ ամերիկացիները միջնորդել են դադարացնելու ռազմական գործողությունները Թուրքիայի դեմ և կնքելու Մուդրոսի զինադադարը (30 հոկտեմբերի, 1918թ.)⁹:

Հղումներ և ծանոթագրություն

1. Basic Documents in the United States Foreign Policy, (by Thomas P. Brockway), New Jersey, 1968, p. 71-4.
2. President Woodrow Wilson, Address to Congress, Stating War Aims and Peace Terms (Delivered in Joint Session, 8 January 1918), p. 470. (In: The Messages and Papers of Woodrow Wilson, Vol. I, New York, 1924, p. 464-72).
3. The Diary of Colonel House, 7 January 1918, p. 332. (In: The Intimate Papers of Colonel House, (by Charles Seymour), Boston-New York, 1928, Vol. III).
4. Official American Commentary on the Fourteen Points, p. 199-200 (In: The Intimate Papers of Colonel House, (by Charles Seymour), Boston-New York, 1928, Vol. IV).
5. Commentary on Fourteen Points, Colonel House to the President [cablegram], p. 157. (In: The Intimate Papers of Colonel House, (by Charles Seymour), Boston-New York, 1928, Vol. IV).
6. Quoted in: Manoug Joseph Somakian, Empires in Conflict: Armenia and the Great Powers, 1895-1920, London, 1995, p. 256.
7. Addresses Delivered on Western Tour, at Tabernacle, Salt Lake City, Utah, 23 September 1919, p. 358-9. (In: War and Peace, Presidential Messages, Addresses, and Public Papers (1917-1924) by Woodrow Wilson. Vol. II. Edited by Ray Stannard Baker William E. Dodd, New York, 1927, p. 346-65).
8. Scott J.B., Official Statements of War and Peace Proposals, December 1916 to November 1918, Washington, 1921, p. 419.
9. The Time, London, 2 November 1918, p. 7.


Ամերիկայի Միացյալ Նահանգների սահմանադրությունը, Հայկական հարցը և Վուդրո Վիլսոնի իրավաբար վճիռը

Վերջին շրջանում հայաստանյան և համաշխարհային լրատվամիջոցները լայնորեն լուսաբանում են ԱՄՆ Կոնգրեսում Հայոց ցեղասպանության հնարավոր ճանաչման հարցը: Թուրքիան իր հերթին, ինչպես բազմաթիվ անգամներ անցյալում, փորձում է վիճարկել երկրների խորհրդարանների իրավունքը՝ գնահատականներ տալու անցյալում տեղի ունեցած իրադարձություններին:

Այս թոհուրոհի մեջ մեր ուշադրությունից վրիպում է մի շատ ավելի կարևոր հանգամանք՝ ԱՄՆ Կոնգրեսի սահմանադրական իրավասությունը գնահատականներ տալու միջազգային իրավունքի խախտումներին և քայլեր նախաձեռնելու մեղավորին պատժելու համար: Ըստ ԱՄՆ սահմանադրության առաջին հոդվածի 8-րդ մասի 10-րդ կետի, ԱՄՆ Կոնգրեսն իրավասու է որոշել միջազգային իրավունքի խախտումները և պատժել խախտողներին. *“The Congress shall have power ... to define and punish ... offenses against the law of nations”* (Article 1, Section 8, § 10): Առավել ևս սա վերաբերում է այն դեպքերին, երբ միջազգային իրավունքի հիման վրա որոշումների կայացմանը մասնակցել է ԱՄՆ բարձրագույն պաշտոնյան՝ երկրի նախագահ Վուդրո Վիլսոնը:

Ըստ այդմ, Կոնգրեսի ցանկացած անդամ կամ անդամների խումբ Կոնգրեսի պալատներից յուրաքանչյուրում կարող է հանդես գալ հետևյալ հարցապնդումով.

Արդյո՞ք Թուրքիայի կողմից ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի հայթորքական սահմանի վերաբերյալ իրավաբար վճիռի (22 նոյեմբերի, 1920թ.) չկատարումը հանդիսանում է



միջազգային իրավունքի խախտում: Եթե այո, ապա ինչպիսի՞ քայլեր է ձեռնարկում ԱՄՆ գործադիր իշխանությունը պատժելու համար միջազգային իրավունքը խախտողին:

Կոնգրեսը, վստահաբար, հաստատելու է Թուրքիայի կողմից միջազգային իրավունքի խախտումն առնվազն 2 հիմունքով.

• **Հիմունք առաջին – Սենատի նախադեպային դիրքորոշումը.**

Դեռևս 1927թ.-ին Սենատը հստակ դիրքորոշում է արտահայտել Վիլսոնի իրավարար վճռի վերաբերյալ: Այսպես, 1927թ. հունվարի 18-ին ԱՄՆ Սենատը, որի իրավասությունների շրջանակում է միջազգային պայմանագրերի վավերացումը, մերժել է վավերացնել ամերիկա-թուրքական պայմանագիրը (կնքված Լոզանում 1923թ. օգոստոսի 6-ին), հետևաբար ճանաչել ներկայիս Թուրքիայի հանրապետությունը¹: Ըստ այդմ, ամերիկա-թուրքական հարաբերությունները մնացել են առկախ վիճակում²: Պայմանագիրը մերժելու համար եղել է 3 պատճառ և դրանցից առաջինը եղել է ԱՄՆ նախագահ Վիլսոնի իրավարար վճռով Հայաստանի նկատմամբ Թուրքիայի ստանձնած պարտավորությունների չկատարումը. *“failed to provide for the fulfillment of the Wilson award to Armenia”*³: Հետագայում ԱՄՆ պետքարտուղարությունն այլևս փորձ չի արել Սենատում վավերացնել ամերիկա-թուրքական պայմանագիրը: Այն Սենատում մնացել է ևս 7 տարի՝ մինչև 1934թ. հունվարի 16-ը, երբ ԱՄՆ նախագահ Ֆրանկլին Ռուզվելտի խնդրանքով ետ է ուղարկվել նախագահի վարչակազմին⁴: Թուրքիան իր հերթին երբեք չի ամբողջացրել վավերացման գործընթացը⁵:

• **Հիմունք երկրորդ – Դեմոկրատական կուսակցության ծրագրային հիմնադրույթները.**

ԱՄՆ Դեմոկրատական կուսակցության 1924թ.-ի և 1928թ.-ի ծրագրային հիմնադրույթների (Party Platform) մեջ միանշանակորեն շեշտվել է Թուրքիայի կողմից ստանձնած պարտավորությունների կատարման անհրաժեշտությունը և Հայաստանի Հանրապետության իրավունքը «Վիլսոնյան Հայաստանի» նկատմամբ. *“Fulfillment of President Wilson’s arbitral award respecting Armenia”* (1924թ.-ի ծրագիր): Դեմոկրատական

կուսակցության 1928թ.-ի ծրագիրը ոչ միայն վերահաստատել է հայերի իրավունքները, այլև իր գորակցությունն է հայտնել ԱՄՆ այն հետևողական ջանքերին, որոնք նպատակամղված կլինեն Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ և դրանից հետո, ԱՄՆ և Գաշնակից ուժերի կողմից Հայաստանին ու հայ ժողովրդին տված խոստումների և պարտավորությունների կենսագործմանը. “*We favor the most earnest efforts on the part of the United States to secure the fulfillment of the promises and engagements made during and following the World War by the United States and the allied powers to Armenia and her people*”⁶: Անհրաժեշտ է ընդգծել, որ **Հայաստանին տված ԱՄՆ միակ անկատար խոստումը եղել և մնում է Վիլսոնի իրավարար վճիռը:**

Հաշվի առնելով այն, որ ԱՄՆ ներկա Կոնգրեսի երկու պալատներում էլ դեմոկրատները մեծամասնություն են կազմում, միանգամայն հնարավոր և տրամաբանական է, ԱՄՆ Սահմանադրության ընձեռած իրավասության հիման վրա, Ներկայացուցիչների պալատում և Սենատում որոշել-սահմանել (define) Թուրքիայի կողմից միջազգային իրավունքի խախտումը (offences against the law of nations)՝ ԱՄՆ նախագահի իրավարար վճռով ստանձնած պարտավորությունների չկատարումը, և գործադիրին դիմել իրավախախտին պատժելու (punish) համար:

Հղումներ և ծանոթագրություն

1. Unperfected Treaties of the United States of America (1776-1976), (ed. & annot. by Christian L. Wiktor), 1919-1925, New York, 1984, v. 6, p. 421. Leland J. Gordon, Turkish-American Political Relations, The American Political Science Review, 1928, Vol. 22, No. 3, p. 721.
2. Roger R. Trask, The United States Response to Turkish Nationalism and Reform 1914-1939, Minneapolis, 1971, p. 36.
3. Lausanne Treaty is Defeated, the Davenport Democrat, 19 January 1927, p. 1.
4. Roger R. Trask, *Ibid*, p. 48.
5. Unperfected Treaties, *Ibid*, p. 421.
6. National Party Platforms, 1840-1968, (compl. by Kirk Porter and Donald Johnson), Urbana-Chicago-London, 1972, p. 277.

*առաջին անգամ տպագրվել է ԱԶԳ օրաթերթում,
28 փետրվարի, 2007թ., էջ 5*

Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրի (16 մարտի, 1921թ.) փորձաքննությունն ըստ միջազգային իրավունքի

Այդ ժամանակ՝ 1921թ.-ի մարտի 16-ին, բոլշևիկները պայմանագիր կնքեցին Քենալի հետ, որով Թուրքիային հանձնեցին Հայաստանի Հանրապետության մի մասը, երկու այլ մասեր տվեցին Ադրբեջանին, և մնացորդի վրա փակցրեցին «Մովետական Հայաստան» պիտակն ու բռնակցեցին Ռուսաստանին:

Ջեյմս Ջերարդ, ԱՄՆ-ի դեսպան Գերմանիայում (1913-17թթ.)¹

Այսօր՝ մարտի 16-ին, լրանում է Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրի (16 մարտի, 1921թ.) 86-րդ տարելիցը: Հիրավի տարելիցը, քանի որ նշյալ պայմանագրից է ածանցվում Կարսի պայմանագիրը (13 հոկտեմբերի, 1921թ.), որով, ըստ ոմանց, «որոշվում է» հայ-թուրքական սահմանը:

Տասնյակ գրքեր ու հարյուրավոր հոդվածներ են գրվել Մոսկվայի պայմանագրի մասին, սակայն, որքան էլ տարօրինակ է, միջազգային իրավունքի տեսանկյունից երբեք չի կատարվել պայմանագրի փորձաքննություն՝ որոշելու համար նրա վավերական կամ ոչ վավերական (*valid or not valid*) լինելը:

Ըստ ՄԱԿ-ի պաշտոնական ուղեցույց-ձեռնարկի, «**միջազգային պայմանագրերը** համաձայնություններ են **միջազգային իրավունքի սուբյեկտների** միջև, որոնց միջոցով նրանք ստեղծում, փոփոխության են ենթարկում կամ դադարեցնում են փոխադարձ իրավունքներն ու պարտավորությունները»: (**International treaties** are agreements between **subjects of International Law** – creating, amending or terminating their mutual rights and obligations)²: Սա ամրագրված է Պայմանագրային իրավունքի վերաբերյալ 1969թ. Վիեննայի կոնվենցիայի (*Vienna Convention on Treaty Law, 1969*) մեջ: Կոնվենցիայի հոդված 2 {1} {ա}-ն պայմանագիրը բնորոշում է որպես «պետությունների միջև գրավոր կերպով կնքված և միջազգային իրավունքի վրա խարսխված միջազգային համաձայնություն» (*an*

international agreement concluded between States in written form and governed by international law): Այսինքն, պայմանագրի օրինականության համար վճռորոշ է միջազգային իրավունքին համապատասխանելը: Ըստ այդմ, անհրաժեշտ է, որ պայմանագիրը կնքող կողմերից յուրաքանչյուրը լինի միջազգայնորեն ճանաչված պետության օրինական կառավարության լիազոր ներկայացուցիչը:

Ինչպես գրված է Մոսկվայի պայմանագրի նախաբանում, այն կնքվել է *«Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Սովետական Հանրապետության կառավարության և Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարության»* միջև: Քանի որ ցանկացած պայմանագրի կարգավիճակ ածանցվում է այն ստորագրողների իրավական կարգավիճակից, ուստի առաջին հերթին անհրաժեշտ է հստակեցնել նրանցից յուրաքանչյուրի կարգավիճակը 1921թ. մարտի 16-ի դրությամբ:

I. Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Սովետական Հանրապետության (ԲՇՓՇ) կարգավիճակը 1921թ.-ին:

Պայմանագիրը կնքելու պահին չկար *«Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Սովետական Հանրապետություն» (ԲՇՓՇ)* ճանաչված պետություն, հետևաբար՝ միջազգային իրավունքի սուբյեկտ: Բնականաբար նրա կառավարությունը չուներ որևէ միջազգային պայմանագիր կնքելու իրավասություն: ՌՍՖՍՀ-ի, արդեն ՍՍՀՄ տարագրվ, միջազգային օրինական ճանաչումը սկսվել է միայն 1924թ.-ից՝ Մեծ Բրիտանիայի ճանաչումով (1 փետրվարի, 1924թ.)³: Մինչև 1924թ.-ը տեղի ունեցած, այսպես կոչված, «ճանաչումները», չեն առաջացրել որևէ իրավական հետևանք, քանի որ իրենց հերթին բխել են չճանաչված երկրներից կամ վարչախմբերից: Որպեսզի ճանաչումն օրինապես համարվի այդպիսին, այն պետք է կատարվի իր հերթին օրինականորեն ճանաչված միջազգային իրավունքի սուբյեկտի կողմից⁴: Օրինակ, 1920թ.-ին սովետական կառավարությունը ճանաչել է Բալթյան երկրները, սակայն այդ ճանաչումը չի ընդունվել Դաշնակից ուժերի

կողմից, այն հիմնավորմամբ, որ սովետական կառավարությունն իր հերթին օրինապես ճանաչված չէր^{5,6}: Նման մոտեցումը երկրորդվել է դատական վճիռներով: Այսպես, Ռ-ՍՖՍՀ-ն ընդդեմ Սիբրարիոյի (RSFSR vs. Cibrario) դատական գործում (1923թ.), ԱՄՆ դատարանը մերժել է ընդունել սովետական կառավարության հայցը այն հիմնավորմամբ, որ վերջինս ճանաչված չէ⁷: Նմանատիպ վճիռ, նույն հիմնավորմամբ կայացրել է Շվեդիայի Գերագույն դատարանը Սովետական կառավարությունն ընդդեմ Էրիքսոնի (*Soviet Government vs. Ericsson*) դատական գործում (1921թ.)⁸:

Վերոհիշյալ և տասնյակ այլ դատական վճիռներ և կառավարական որոշումներ վերահաստատում են միջազգային իրավունքի այն սկզբունքը, որ առանց ճանաչման կառավարություններն իրավական տեսանկյունից գոյություն չունեն, հետևաբար որևէ իրավական գործունեություն (պայմանագրերի կնքում, քաղաքացիության շնորհում կամ զրկում, մասնակցություն դատական գործընթացին և այլն) չեն կարող ծավալել⁹:

II. Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կարգավիճակը 1921թ.-ին:

Ըստ էության, սովետական իշխանության և կառավարության վերաբերյալ վերոգրյալը, ամբողջովին վերաբերում է նաև, այսպես կոչված, «Թուրքիայի Ազգային մեծ ժողովի» կառավարությանը, որի անունից թուրքական կողմը ստորագրել է Մոսկվայի պայմանագիրը: Հիշարժան է, որ անգամ քեմալականները որևէ հավակնություն չունեին օրինական իշխանությունների առկայության դեպքում իրենց համարելու Թուրքիայի լիազոր ներկայացուցիչներ: Նրանք պայմանագրերը կնքում էին ոչ թե Թուրքիայի կամ Թուրքիայի կառավարության անունից, այլ՝ «*Թուրքիայի Ազգային մեծ ժողով*» կառույցի «*կառավարության*»: Թուրքիայի Ազգային մեծ ժողովն իր կարգավիճակով հասարակական կազմակերպություն էր (NGO), և նրա մեջ միավորված էին նախկին պատգամավորներ, պաշտոնանկ զինվորականներ ու պաշտոնյաներ: Նմանօրինակ կազմակերպություններ եղել են ու կան աշխարհի զանազան երկրներում, այդ թվում նաև Հայաստանում: Մուստաֆա Քեմալի վարչախումբը որևէ իրավական հիմք չունեի միջազգային հարաբերու-

թյուններում ներկայացնելու թուրքական պետությունը: Աճերկբայորեն, առնվազն մինչև 1922թ.-ի նոյեմբերը, այսինքն սուլթան Մուհամմեդ VI-ի մեկնումը Թուրքիայից, վերջինիս կառավարությանն էր վերապահված Թուրքիայի անունից միջազգային հարաբերությունների մեջ մտնելու իրավունքը, և միայն սուլթանն էր կարող, ըստ Օսմանյան կայսրության սահմանադրության 7-րդ հոդվածի, լիազորել որևէ անձի՝ հանդես գալու երկրի անունից ¹⁰:

Ընդհանրապես քեմալականների շարժումը սկզբնավորվել ու ընթացել է օսմանյան սահմանադրության ոտնահարումով և միջազգային իրավունքի խախտումով, որոնք են երկրի օրինական իշխանության՝ սուլթան-խալիֆի, դեմ ապստամբությունը և Մուդրուսի զինադադարի (30 հոկտեմբերի, 1918թ.) ոտնահարումը: Մուստաֆա Քեմալը 1921թ.-ին պարզապես փախուստի մեջ գտնվող քրեական հանցագործ էր: Այդ իսկ պատճառով դեռևս 1920թ. ապրիլի 11-ին կայսրության բարձրագույն կրոնավորի՝ շեյխուլ-իսլամի, ֆեթվայով (կոնդակով) Մուստաֆա Քեմալը մահվան էր դատապարտվել: Նրա նկատմամբ նույն տարվա մայիսի 11-ին մահապատժի վճիռ էր կայացրել նաև թուրքական ռազմական դատարանը: Այս դատավճիռը 1920թ. մայիս 24-ին հաստատվել էր սուլթանի կողմից: Ի դեպ, Քեմալի և քեմալականների նկատմամբ քրեական հետապնդումը կարճվել է միայն 1923թ. հուլիսի 24-ին՝ ներման համապատասխան հայտարարագրով ¹¹:

Ի լրումն սրա, Մոսկվայի պայմանագրի Հայաստանին վերաբերող մասը միջազգային իրավունքի ևս մի խախտում է, քանի որ *«պայմանագրերը կարող են վերաբերել միայն պայմանագիրը ստորագրող կողմերին և որևէ պարտավորություն կամ իրավունք չեն ստեղծում պայմանագրին մաս չկազմող երրորդ կողմի համար առանց վերջինիս համաձայնության»* ¹²: Այս հիմնադրույթն ամրագրված է Պայմանագրային իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայի 34-րդ հոդվածում. *“A treaty does not create either obligations or rights for a third State without its consent”*:

Այսպիսով, ըստ վերոշարադրյալի, Մոսկվայի պայմանագիրը.

ա) անօրինական է ու անվավեր;

բ) այն չէր կարող որևէ պարտավորություն պարունակել Հայաստանի Հանրապետության համար, առավել ևս որոշել հայ-

թուրքական սահմանը (պայմանագրում՝ հոդված 1) կամ Նախիջևանը որպես պրոտեկտորատ հանձնել Ադրբեջանին (պայմանագրում՝ հոդված 3), քանի որ Մոսկվայի պայմանագիրը կնքվել է միջազգային իրավունքի դարեր ի վեր գործող պարտադիր և անբեկանելի մի քանի հիմնադրույթների (*jus cogens*) բացահայտ ոտնահարումով: Իսկ ինչպես ամրագրված է Պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիայի 53-րդ հոդվածում. «*Պայմանագիրն անվավեր է, եթե կնքվելու պահին հակասել է միջազգային հանրային իրավունքի անբեկանելի հիմնադրույթին*»: (Article 53. A treaty is void, if at the time of its conclusion, it conflicts with a peremptory norm (*jus cogens*) of general international law).

Հղումներ և ծանոթագրություն

1. Report [Pursuant to H. Res. 346 & H. Res. 438], Communist Takeover and Occupation of Armenia, 83rd Congress 2nd Session, House of Representatives, Rept. 2684, Part 8, 31 December 1954, p. 14.
2. Manual of Public International Law, (ed. by Max Sorensen), New York, 1968, p. 38.
3. Survey of International Affairs 1924, (Comp. by Arnold J. Toynbee), London, 1926, p. 491.
4. Moore J.B., Digest of International Law, Washington, 1906, v. I, p. 73.
5. Մինչև 1924թ.-ի փետրվարի 1-ը տեղի ունեցած, այսպես կոչված, ճանաչումները չեն ստեղծում որևէ իրավական հետևանք, քանի որ դրանք չճանաչված երկրների կամ իշխանությունների կողմից էին. Բառուխա 02.02.1920; Լիտվա 30.06.1920; Լատվիա 11.08.1920; Լեհաստան 12.10.1920; Ֆինլանդիա 14.10.1920; Պարսկաստան 26.02.1921; Աֆղանստան 28.02. 1921; Թուրքիա 16.03.1921; Մոնղոլիա 05.11.1921 (Frederick Lewis Schuman, American Policy toward Russia since 1917: A Study of Diplomatic History, International Law and Public Opinion, London, 1928, p. 351).
6. Papers Relating to the Foreign Relations of the United States, 1920, v. III, p. 462. (The Secretary of States (Colby) to the Ambassador in Great Britain (Davis), August 2, 1920, p. 461-3).
7. Hudson M.O., Annual Digest of Public International Law, Cambridge, 1931-1932, Case No. 28.
8. *Ibid*, Case No. 30.
9. Ti-Chiang Chen, The International Law of Recognition, London, 1951, p. 138.
10. O'Connell D.P., State Succession in Municipal Law and International Law, v. I, Cambridge, 1967, p. 211.
11. Amnesty Declaration and Protocol, signed 24 July 1923.
12. Branimir M. Jankovic, Public International law, New York, 1984, p. 302.

*առաջին անգամ տպագրվել է ԱԶԳ օրաթերթում,
16 մարտի, 2007թ., էջ 4*

Կարսի պայմանագիրն ու Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության իրավական կարգավիճակն ըստ միջազգային իրավունքի

Կարսի պայմանագիրը (13 հոկտեմբերի, 1921թ.) հույժ կարևոր նշանակություն ունի մերօրյա հայոց պետականության համար: Ոմանց թյուրըմբռնումների և տասնամյակներ տևած նենգափոխումների պատճառով այսօր տիրում է այն սխալ տեսակետը, որ, իբր, Կարսի պայմանագիրն է որոշում, այսպես կոչված, հայ-թուրքական սահմանը: Միջազգային իրավունքի տեսանկյունից այդ փաստաթղթի քննումն ակնհայտ է դարձնում, որ այն երբեք չի ունեցել և չունի իրավական ուժ, հետևաբար չի ստեղծում պարտավորություններ կողմերի համար:

Հայաստանի Սովետական (Խորհրդային) Սոցիալիստական Հանրապետության (հետայսու՝ ՀՍՍՀ) իրավական կարգավիճակի և Կարսի պայմանագրի (13 հոկտեմբերի, 1921թ.) օրինականության և իրավականության (legitimacy and legality) հարցերը սերտորեն շաղկապված են: Ըստ ՄԱԿ-ի պաշտոնական ուղեցույց-ձեռնարկի, «միջազգային պայմանագրերը համաձայնություններ են միջազգային իրավունքի սուբյեկտների միջև, որոնց միջոցով նրանք ստեղծում, փոփոխության են ենթարկում կամ դադարեցնում են փոխադարձ իրավունքներն ու պարտավորությունները»¹: Այսինքն, պայմանագրի օրինականության և իրավականության համար անհրաժեշտ է, որ պայմանագիրը կնքող կողմերից յուրաքանչյուրը լինի միջազգային իրավունքի սուբյեկտ, այն է՝ լինի միջազգայնորեն ճանաչված պետության օրինական կառավարության լիազոր ներկայացուցիչ²: Այս տեսանկյունից էլ անդրադառնանք Կարսի պայմանագիրը կնքած կողմերից մեկի՝ ՀՍՍՀ-ի, ինչպես նաև Հայաստանի անունից պայմանագիրը ստորագրողների, կարգավիճակներին, դրանց իրավական հետևանքներին կամ հետևանքների բացակայությանը:

ՀՄՍՀ-ի գոյությունը, հետևաբար նրա իրավական կարգավիճակը, բաժանվում է 2 ժամանակահատվածի.

ա) 1920թ. դեկտեմբերի 2-ից մինչև 1922թ. դեկտեմբերի 30-ը, «ՀՄՍՀ» կոչված տարածքի առանձին, բայց ոչ անկախ գոյության, ժամանակահատված և

բ) 1922թ. դեկտեմբերի 30-ից մինչև 1991թ. սեպտեմբերի 21-ը, Սովետական Սոցիալիստան Հանրապետությունների Միություն պետության կազմում «ՀՄՍՀ» վարչատարածքային միավորի գոյության ժամանակահատված:

Հարցի անգամ հպանցիկ քննումն ակնհայտ է դարձնում այն, որ միջազգային իրավունքի տեսանկյունից, երբեք չի եղել «ՀՄՍՀ» պետություն, հետևաբար չի եղել միջազգային իրավունքի նման սուբյեկտ: Պետության ճանաչումը մեկ այլ պետության կողմից վճռորոշ նշանակություն ունի պետության կայացման գործում³: ՀՄՍՀ-ն իր գոյության և ոչ մի հատվածում երբեք ճանաչված չի եղել որևէ օրինական ճանաչում ունեցող պետության լիազոր իշխանությունների կողմից: ՀՄՍՀ-ի, այսպես կոչված, ճանաչումները չեն առաջացրել որևէ իրավական հետևանք, քանի որ իրենց հերթին բխել են չճանաչված երկրներից կամ վարչախմբերից:

Որպեսզի ճանաչումն օրինապես համարվի այդպիսին, այն պետք է կատարվի իր հերթին օրինականորեն ճանաչված միջազգային իրավունքի սուբյեկտի կողմից⁴: Օրինակ, 1920թ.-ին սովետական կառավարությունը ճանաչեց Բալթյան երկրները, սակայն այդ ճանաչումը չընդունվեց Դաշնակից ուժերի կողմից, այն հիմնավորմամբ, որ սովետական կառավարությունն իր հերթին օրինապես ճանաչված չէր⁵: Աբխազիայի կողմից Օսեթիայի ճանաչումը, կամ հակառակը, չի առաջացնի իրավական հետևանք, քանի որ ճանաչող կողմն իր հերթին դեռ չունի միջազգային իրավական ճանաչում: Առանց ճանաչման կառավարություններն իրավական տեսանկյունից գոյություն չունեն, հետևաբար որևէ իրավական գործունեություն (պայմանագրերի կնքում, քաղաքացիության շնորհում կամ զրկում, մասնակցություն դատա-

կան գործընթացին և այլն) չեն կարող ծավալել⁶:

Կանխելով այն շահարկումները, թե իբր ՀՄՍՀ-ն անկախ երկիր էր, քանի որ այդպես էր գրված մի շարք ներքին օգտագործման փաստաթղթերում (օրինակ՝ ՀՄՍՀ կամ ՄՍՀՄ սահմանադրություններում)՝ անհրաժեշտ է ընդգծել, որ միջազգային իրավունքում միակողմանի իրավական փաստաթղթերը (unilateral legal acts), ինչ ձևով էլ դրանք արտահայտված լինեն (հռչակագրերի, հայտարարագրերի, հաղորդագրությունների, սահմանադրությունների և այլն), չեն կարող շնորհիվ ավելի շատ իրավունքներ, քան դա հասնում է ըստ միջազգային իրավունքի⁷:

Ընդհանրապես, միջազգային իրավունքը շատ հստակ է պետականության հարցում: Մասնավորապես, Մոնտեվիդեոյի Պետությունների իրավունքների և պարտականությունների մասին 1933թ. կոնվենցիայի (Convention on Rights and Duties of States, Montevideo, 1933) 1-ին հոդվածն ամրագրում է պետականության 4 չափորոշիչները, որոնք պարտադիր են միջազգային իրավունքի սուբյեկտ լինելու համար: Դրանք են.

- ա) մշտական բնակչություն,
- բ) որոշակիացված տարածք,
- գ) կառավարություն և
- դ) այլ պետությունների հետ հարաբերությունների մեջ մտնելու կարողություն:

(Article I: a) a permanent population; b) a defined territory; c) government; and d) capacity to enter into relations with the other States)⁸.

Վերջին չափորոշիչը համարվում է ամենակարևորը⁹: Ուզում են շեշտել, որ խոսքը գնում է ոչ թե պարզապես միջպետական հարաբերությունների իրավունքի դատարկախոս հայտարարության մասին, այլ դիվանագիտական հարաբերությունների մեջ մտնելու իրական կարողության մասին, այսինքն՝ օտար երկրներում, ինչպես նաև սեփական երկրում՝ օտար, դեսպանատների բացման և գործունեության ծավալման մասին:

Այսու, Կարսի պայմանագիրը կնքելու պահին (13 հոկտեմբեր-

րի, 1921թ.) չկար «ՀՍՍՀ» օրինականորեն ճանաչված պետություն, հետևաբար՝ միջազգային իրավունքի սուբյեկտ: Բնականաբար այդ տարածքային միավորը, ինչպես նաև նրանում իշխանություն հաստատած վարչախումբը, չունեի որևէ միջազգային պայմանագիր կնքելու իրավասություն:

Հիմա անդրադառնանք ՀՍՍՀ-ում 1920թ. դեկտեմբերի 2-ից իշխանություն հաստատած, ավելի ճիշտ իշխանության բերված, վարչախմբի իրավական կարգավիճակին: Սա կարևոր է, քանի որ այդ կարգավիճակից են ածանցվում Հայաստանի անունից Կարսի պայմանագիրը ստորագրած անձանց լիազորությունները:

Հանրահայտ իրողություն է, որ Հայաստանի Հանրապետության օրինական իշխանությունները, ռուս-թուրքական համադրված ռազմական գործողությունների հետևանքով¹⁰ հայտնվելով անելանելի վիճակում, ստիպված էին ընտրել չարյաց փոքրագույնը և իշխանության փոխանցման մասին համաձայնագիր կնքել «Ռ.Ս.Ֆ.Ս.Հ. լիազոր ներկայացուցիչ ընկ. Լեգրանի» հետ, որը հանդես էր գալիս «Ռ.Կ.Կ.Կ.Կ.-ի (Ռուսաստանի կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտե) լիազորությամբ, ի դեմս Ռուսաստանի Սովետական կառավարության»¹¹:

Միջազգային իրավունքի տեսանկյունից այստեղ կարևորն այն է, որ Հայաստանում իշխանության բերված մարդկանց խումբը, որը նախապես հանդես էր գալիս Հայհեղկոմ անունով¹², ակնհայտորեն օտարերկրյա, այն էլ անօրինական, վարչակարգի դրածո վարչախումբ էր: Կարսի պայմանագիրը ստորագրած վարչախմբի ներկայացուցիչների՝ Ասքանազ Մռավյանի և Պողոս Մակինցյանի, լիազորությունը խարսխված էր ոչ թե օրինական իշխանության, այլ երկիրը բռնազավթած օրարերկրյա բանակի քաղաքական ղեկավարության կամքի վրա և իրականացվում էր պարտադրանքի տակ: Դա է փաստում նաև այն իրողությունը, որ նման քաղաքական պարտադրանքի պարտավորությունը մինչ այդ ամրագրվել էր Մոսկվայի բոլշևիկ-քեմալական 1921թ. մարտի 16-ի պայմանագրի 15-րդ հոդվածում¹³: Պատմական անվիճելի փաստ է, որ Հայաստանի Հան-

րապետությունը բռնազավթվել էր 1920թ. օգոստոսի 24-ին կնքված ռազմական դաշնագրով¹⁴ նախատեսված բոլշևիկ-քեմալական գործողությունների հետևանքով¹⁵, և այդ միասնական ուժով Հայաստանում իշխանության էր բերվել անթաքույց խամանդիկային վարչախումբ: Այս առումով միջազգային իրավունքը միանշանակ է. *զավթիչ ուժի և նրա կողմից իշխանության բերված խամանդիկային կառավարության միջև (a puppet government) կնքած որևէ պայմանագիր կամ բռնազավթման ժամանակ երկրի տարածքի որևէ մասի գիջում հետևանքազուրկ է (are not effective)*¹⁶: Ավելին, երկրի համար ընդհանրապես իրավական հետևանք չի կարող առաջացնել որևէ պայմանագիր կամ պարտավորություն, եթե տվյալ երկրի պաշտոնյաները բացահայտորեն գործել են օտար ուժի հրահանգով¹⁷:

Խիստ խնդրահարույց է նաև Կարսի պայմանագրի օրինապես վավերացված լինելու հարցը: Ըստ պայմանագրի 20-րդ հոդվածի՝ պայմանագիրը, կնքված Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի և Թուրքիայի կառավարությունների միջև, ենթակա էր վավերացման: Սակայն մեզ չի հաջողվել տպագիր աղբյուրներում գտնել հիշատակում ՀՍՍՀ որևէ կառույցի կողմից Կարսի պայմանագրին պաշտոնական անդրադարձած, առավել ևս՝ վավերացրած, լինելու մասին: Կարսի պայմանագրի վերաբերյալ սովետական աղբյուրները¹⁸ նշում են միմիայն վավերագրերի փոխանակման մասին (Երևան, 11 սեպտեմբերի, 1922թ.), սակայն չեն նշում Հայաստանի, Վրաստանի կամ Ադրբեջանի կողմից պայմանագրի վավերացման մասին: Օտար աղբյուրները նշում են, որ Կարսի պայմանագիրը վավերացվել է Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կողմից (16 մարտի, 1922թ., օրենք թիվ 207)¹⁹ և, ի դեմս Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի՝ ՌՄՖՍՀ-ի կողմից²⁰: Եթե սա իրողություն է, ապա, ըստ այդմ, Կարսի պայմանագիրը անօրինական է ու անվավեր նաև վավերացման գործընթացի կոպիտ խախտման պատճառով: Ըստ միջազգային իրավունքի հստակ է. *յուրաքանչյուր երկիր կարող է որևէ պայմանագիր վավերացնել միմիայն իր անունից և իր համար ու չի կարող դա անել ուրիշի փոխարեն:*

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարելի է անել հետևյալ եզրակացությունները.

Կարսի պայմանագիրն անօրինական է ու անվավեր կնքման պահից, քանի որ.

1. *Պայմանագիրը կնքող կողմերից և ոչ մեկը չի հանդիսացել միջազգային իրավունքի սուբյեկտ:*

ա) ՀՍՍՀ երբեք չի եղել պետություն և, բնականաբար, երբեք ճանաչված չի եղել որպես այդպիսին: 1920-24թթ. Հայաստանն ունեցել է **քոնազավթված տարածքի**²¹ (*occupied territory*) կարգավիճակ²², իսկ 1924թ.-ից, սկսած Սովետական Միության ճանաչումից մինչև ՍՍՀՄ վախճանը՝ 1991թ., **քոնակցված տարածքի** (*annexed territory*) կարգավիճակ²³: Հետևաբար, միջազգային իրավունքի տեսանկյունից ՀՍՍՀ-ն ի սկզբանե չի ունեցել միջպետական հարաբերություն իրականացնելու որևէ կարողություն և իրավասություն, մասնավորապես՝ միջազգային պայմանագիր կնքելու լիազորություն:

բ) Կարսի պայմանագիրը ստորագրած Քյազիմ Կարաբեքիրը, 1921թ.-ին չէր հանդիսանում իրավականորեն ճանաչված թուրքական պետության լիազոր ներկայացուցիչը, այլ թուրքական ռազմական դատարանի կողմից մահվան դատապարտված, պատերազմի հանցագործ Մուստաֆա Քեմալի մարտախմբի ներկայացուցիչն էր: Մուստաֆա Քեմալը 1921թ.-ին պարզապես փախուստի մեջ գտնվող քրեական հանցագործ էր: Մուստաֆա Քեմալը, երկրի օրինական իշխանությունների դեմ խռովություն բարձրացնելու համար, դեռևս 1919թ. օգոստոսի 9-ին, զրկվել էր զինվորական և քաղաքացիական կոչումներից և բոլոր պարգևներից: Իսկ 1920թ. ապրիլի 11-ին կայսրության բարձրագույն կրոնավորի՝ շեյխ-ուլ-իսլամի, ֆեթվայով (կոնդակով) մահվան էր դատապարտվել: Նրա նկատմամբ նույն տարվա մայիսի 11-ին մահապատժի վճիռ էր կայացրել նաև թուրքական ռազմական դատարանը²⁴: Այս դատավճիռը 1920թ. մայիսի 24-ին հաստատվել էր սուլթանի կողմից: Ի դեպ, Քեմալի և քեմալականների նկատմամբ քրեական հետապնդումը կարճվել է միայն 1923թ. հուլիսի 24-ին՝ ներման համապատասխան հայտարարագրով²⁵:

2. *Կարսի պայմանագիրը ստորագրելու գործընթացը ոտնահարել է մի շարք jus cogens-ներ*: Ըստ այդմ, եթե սահմանի հասակեցման և հաստատման գործընթացը խախտել է միջազգային իրավունքի որևէ անբեկանելի սկզբունք՝ *jus cogens*, ապա տվյալ սահմանը անօրինական է և անվավեր (illegal and void)²⁶, քանի որ անօրինական և անվավեր է այն ամրագրող պայմանագիրը: Այս սկզբունքն ամրագրված է Վիեննայի Պայմանագրերի մասին օրենքի միջազգային կոնվենցիայի 53-րդ հոդվածի մեջ: (*Article 53. Treaties conflicting with a peremptory norm of general international law (“jus cogens”) - The treaty is void if, at the time of its conclusion, it conflicts with a peremptory norm of general international law.*)

Հղումներ և ծանոթագրություն

1. Manual of Terminology of Public International Law, (by Isaac Paenson), United Nations, New York, 1983, p. 38.
2. Այսպես կոչված «Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարության» իրավական կարգավիճակին անդրադարձել ենք մախրոդ հոդվածներից մեկում. տե՛ս՝ Մոսկվայի ռուսաթուրքական պայմանագրի (16 մարտի, 1921թ.) փորձաքննությունն ըստ միջազգային իրավունքի («Ազգ» , 16 մարտի, 2007թ., էջ 4):
3. Williams S.A., De Mestral A.L.C., An Introduction to International Law, Toronto and Vancouver, 1987, p. 44.
4. Moore J.B., Digest of International Law, Washington, 1906, vol. I, p. 73.
5. The Secretary of States (Colby) to the Ambassador in Great Britain (Davis), 2 August 1920, p. 462. (Papers Relating to the Foreign Relations of the United States, 1920, v. III. p. 461-3).
6. Ti-Chiang Chen, The International Law of Recognition, London, 1951, p. 138.
7. Branimir M. Jankovic, Public International Law, New York, 1984, p. 271.
8. Ian Brownlie, Principles of Public International Law, 5th edition, Oxford, 2001, p. 70.
9. Williams S.A., De Mestral A.L.C., *Ibid*, p. 45.
10. ԱՄՆ Սենատի թիվ 245 բանաձևը (3 հունիսի, 1924թ.) միանշանակորեն ամրագրել է, որ Թուրքիան և Ռուսաստանը միասնաբար են գործել Հայաստանի կործանման ուղղությամբ: (Turkey joined with Soviet Russia in the destruction of the Armenian State, brutally murdered hundreds of thousands of Armenians ... Senate Resolution, 245, June 3, 1924. The Armenian Review, vol. 30, No. 3-119, 1977, p. 286):
11. Վրացեան Ա., Հայաստանի Հանրապետություն, Թեհրան, 1982, էջ 501: Անգլերեն տեքստի համար տե՛ս՝ Simon Vratzian, How Armenia was Sovietized, (part IV), The Armenian Review, 1948, October, (vol. I No. 4), p. 89-90.
12. 1921թ. մայիսի 21-ին Հայեդկոնը վերանվանվել է ՀՍՄ Ժողովախորհի:
13. «Ռուսաստանը պարտավորվում է Անդրկովկասյան հանրապետությունների նկատմամբ դիմել քայլերի, որպեսզի այդ հանրապետությունների կողմից Թուրքիայի հետ կնքվելիք պայմանագրերում անպատճառ ճանաչվեն սույն Պայմանագրի այն հոդվածները, որոնք անմիջաբար վերաբերում են իրենց»: (Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, Երևան, 1972, էջ 504):
14. Տե՛ս Էնվեր փաշայի Մոսկվայից գրված նամակը (26 օգոստոսի, 1920թ.), գերմանացի գեներալ Ֆոն Սեկտին (Von Seckt): Նա մասնավորապես գրում է. «Երեկ չէ առաջին օրը մենք ստորագրեցինք թուրք-ռուսական բարեկամության դաշնագիր: Այդ դաշնագրի հիման վրա ռուսները մեզ օգնելու են փողով և բոլոր այլ միջոցներով»: (The other day we signed a Turco-Russian friendship pact. On the basis of that pact, the Russians will help us with money and all other friends.) (Venian V., Two Little Known Letters of Enver Pasha, Written

- from Moscow, *The Armenian Review*, vol. I, No. 3, Summer, July, 1948, p. 57):
15. Բողջիկների և քննախնամների սերտ համագործակցության մասին տե՛ս՝ Richard G. Hovannisian, *Armenia and the Caucasus in the Genesis of the Soviet-Turkish Entente*, *The Armenian Review*, vol. 27, 1-105, Spring, 1974, p. 33-52.
 16. Wilfried Fiedler, Continuity, in: R. Bernhardt (ed.), *Encyclopedia of Public International Law*, v. I, Amsterdam, 1992, p. 808.
 17. Ian Brownlie, *Աշխ.*, p. 449.
 18. Տե՛ս, օրինակ՝ Документы внешней политики СССР, т. 4, Москва, 1960, с. 429; Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, Երևան, 1972, էջ 527:
 19. Gunduz Okcun A., *A Guide to Turkish Treaties (1920-1964)*, Ankara, 1966, p. 4.
 20. *Soviet Treaty Series*, v. I (1917-28), (comp. & ed. by Shapiro L.), Washington, 1950, p. 136.
 21. Report [Pursuant to H. Res. 346 & H. Res. 438], *Communist Takeover & Occupation of Armenia*, 83rd Congress 2nd Session, House of Representatives, Rept. 2684, Part 8, 31 Dec 1954, p. 14.
 22. Ըստ միջազգային իրավունքի, բռնազավթող ուժը չի հանդիսանում տվյալ երկրի *de jure* իշխանությունը, այլ միայն իրականացնում է *de facto* կառավարում, հետևաբար այն լիազորված չէ հանդես գալու երկրի անունից: (“The authority exercised by an occupying power is, as far as international law is concerned, a *de facto*, not *de jure* authority. ... The occupying power’s ability to enforce respect for its legitimate interests is not an authority to create law.” Michael Bothe, *Occupation, Belligerent*, in: R. Bernhardt (ed.), *Encyclopedia of Public International Law*, vol. III, Amsterdam, 1997, p. 764):
 23. “Annexation is the forcible acquisition of territory by one State at the expense of another”. (Rudolf L. Bindschedler, *Annexation*, in: R. Bernhardt (ed.), *Encyclopedia of the Public International Law*, Amsterdam, 1992, v. I, p. 168).
 24. Кемаль Паша, *Дипломатический словарь*, Москва, 1948, т. 1, с. 776.
 25. *Amnesty Declaration and Protocol*, signed 24 July 1923, at Lausanne.
 26. Michael Bothe, *Boundaries*, in: R. Bernhardt (ed.), *Encyclopedia of Public International Law*, Amsterdam, 1992, v. I, p. 448.

Սևրի և Լոզանի պայմանագրերի իրավական փոխհարաբերությունները

1923թ. հուլիսի 24-ին կնքվել է Լոզանի պայմանագիրը: Այս պայմանագրով, ըստ էության, Քեմալ Աթաթյուրքն արեց այն, ինչ տարիներ հետո պիտի աներ Ադուլֆ Հիտլերը՝ վերատեսության ենթարկեց Առաջին համաշխարհային պատերազմի որոշ արդյունքներ¹: Այսուհանդերձ, Լոզանի պայմանագրի նշանակությունը գերազնահատվում է. այն փոփոխության չի ենթարկել, մինչևիսկ Թուրքիայի մասով, Առաջին աշխարհամարտի բոլոր արդյունքները, այլ միայն Լոզանի պայմանագիրը ստորագրած որոշ երկրների հետ վերատեսության է ենթարկել Սևրի պայմանագրի մի շարք դրույթներ:

Թեև Հայաստանի Հանրապետությունը մաս չի կազմել Լոզանի պայմանագրին, հետևաբար, վերջինս ուղղակիորեն չի վերաբերում մեր երկրին, այնուամենայնիվ այն սերտորեն առնչվում է հայ ժողովրդին: Ուստի քննենք Լոզանի պայմանագիրն ու նրա իրավական փոխհարաբերությունները Սևրի պայմանագրի հետ՝ ըստ միջազգային իրավունքի:

Իրավական տեսանկյունից Սևրի պայմանագիրը և Լոզանի պայմանագիրը երկու տարբեր փաստաթղթեր են՝ տարբեր ոչ միայն մասնակիցների շրջանակով ու հարցերի ընդգրկումով, այլև, ամենակարևորը՝ էությանը ու նպատակներով: Սևրի պայմանագիրը վերաբերում է Առաջին համաշխարհային պատերազմին, իսկ Լոզանի պայմանագիրը՝ 1919-1922թթ. տեղի ունեցած պատերազմական գործողություններին:

Այսպես, եթե Սևրի պայմանագրի առաջնային նպատակը մի կողմից Գլխավոր դաշնակից ուժերի² (Principal Allied Powers) և Դաշնակից ուժերի³ (Allied Powers), իսկ մյուս կողմից Թուրքիայի միջև Առաջին համաշխարհային պատերազմին պաշտոնապես վերջ տալն էր և նրա փոխարինումը կայուն, արդար ու տևական խաղաղությամբ (by a firm, just and durable peace), ապա Լոզանի պայմանագրի նպատակն ընդամենը Բարձր պայմանավորվող կողմերի⁴ (High Contracting Parties) և Թուրքիայի Ազգային մեծ

Ժողովի կառավարության (The Government of the Grand National Assembly of Turkey), և ոչ թե Թուրքիայի կառավարության, միջև սուկ պատերազմական իրավիճակի դադարեցումն էր: Վերոհիշյալից ակնհայտ է, որ Լոզանի պայմանագրում խոսքը չի գնում օրինապես հայտարարված պատերազմը, ինչպիսին էր, օրինակ, Առաջին համաշխարհայինը, խաղաղությամբ փոխարինելու մասին, այլ սուկ տարածաշրջանում 1914թ.-ից առկա պատերազմական իրավիճակին վերջ տալու մասին (...to bring to a final close the state of war which has existed in the East since 1914...): Այսինքն, Լոզանի պայմանագիրը վերաբերում է Մոդրոսի զինադադարը (30 հոկտեմբերի, 1918թ.) ռոմասհարող քեմալականների անօրինական ռազմական գործողությունները դադարեցնելուն: Մա փաստվում է նաև Լոզանի պայմանագրի 1-ին հոդվածով, որը խոսում է խաղաղության ոչ թե հաստատման, այլ վերահաստատման մասին (...the state of peace will be definitely re-established ...):

Այստեղ անհրաժեշտ է ընդգծել, որ միջազգային իրավունքը հստակորեն տարբերակում է պատերազմ (*war*) և պատերազմական իրավիճակ (*state of war*) հասկացությունները: Միայն ինքնիշխան երկրներն իրավունք ունեն մղելու պատերազմ. մնացած զինված բախումների (armed conflict) դեպքում այն բնորոշվում է որպես պատերազմական իրավիճակ ⁵: Լոզանի պայմանագրի մեջ Բարձր պայմանավորվող կողմերը հստակորեն արտահայտել են իրենց քաղաքական կամքն առ քեմալականները. վերջիններս չեն ճանաչվել որպես պետության օրինական ներկայացուցիչներ, այլ նրանց շնորհվել է միայն կովող կողմ լինելու կարգավիճակը (recognition of belligerency):

Ուրիշ բան, որ Լոզանի պայմանագիրը վերատեսության է ենթարկել 1919-1922թթ. ռազմական գործողություններին ուղղակի կամ անուղղակի մասնակից մի շարք երկրներին առնչվող դրույթներ, որոնց անդրադարձել էր նաև Սերի պայմանագիրը: Միջազգային իրավունքը չի արգելում նոր պայմանագրի կնքումը նախկինում կնքված պայմանագրի դրույթների փոփոխմամբ կամ բազմակողմ պայմանագրի


նորափոխումը (*modification*) պայմանագրին մաս կազմող 2 և ավելի կողմերի անունից: Սակայն միանշանակ է, որ նոր պայմանագիրը, ինչպես ամեն մի պայմանագիր, կարող է վերաբերել միմիայն տվյալ պայմանագրին մաս կազմող կողմերին⁶, իսկ պայմանագրի նորափոխումները կարող են վերաբերել միայն նորափոխումների մասնակիցներին և չեն կարող որևէ ազդեցություն ունենալ այլ երկրների իրավունքների և պարտավորությունների վրա⁷:

Գեռև XIX դարի կեսերից միջազգային իրավունքը զարգացրել էր հստակ դիրքորոշում՝ պայմանագրի ոչ մի փոփոխություն կամ նորափոխում չի կարող լինել իրավականորեն վավերական առանց նախկին պայմանագրի բոլոր կողմերի մասնակցության: Լոնդոնի կոնֆերանսի Առաջին արձանագրության առդիր Հռչակագիրը (13 մարտի, 1871թ.) (*The Declaration annexed to the First Protocol of the London Conference, 13 March 1871*), որին մաս են կազմել 7 երկիր⁸, այդ թվում նաև Թուրքիան, միանշանակորեն հռչակում է. «*Ազգերի իրավունքի էական սկզբունքն է, որ ոչ մի երկիր իրեն չի կարող ձերբազատել պայմանագրի պարտավորություններից և ոչ էլ կարող է նորափոխել դրա պայմանները, քանի դեռ չունի բոլոր մասնակիցների բարեհաճ համաձայնությունը*»⁹:

Այսու, Հայաստանի Հանրապետությունը, բռնազավթված լինելու պատճառով, չի մասնակցել Լոզանի կոնֆերանսին և չի ստորագրել այդ պայմանագիրը: Ըստ այդմ, Լոզանի պայմանագիրը որևէ իրավական պարտավորություն չի ստեղծել և չի ստեղծում Հայաստանի Հանրապետության համար: Գործում է միջազգային իրավունքի *Res inter alios acta* (մասն չես, պարտավոր չես) սկզբունքը:

Մյուս հարցը, որին հարկ ենք համարում անդրադառնալ, այն մոլորությունն է՝ իբր Լոզանի պայմանագիրը չեղյալ է հայտարարել Սևրի պայմանագիրը: Զննություն չբռնող և միանգամայն հիմնազուրկ տեսակետ: Վիեննայի Պայմանագրերի մասին կոնվենցիան (*Vienna Convention on the Law of Treaties, 1969*), որի մեջ ամրագրված է դարեր ի վեր միջազգային իրավունքում գործող ընթացակարգը, շատ հստակ է պայմանագրերի դադարեցման կամ կասեց-

ման վերաբերյալ: Մասնավորապես, նշյալ կոնվենցիայի 59-րդ հոդվածի 2-րդ կետը միանշանակորեն ամրագրում է. «Ավելի վաղ կնքված պայմանագրի գործունեությունը կհամարվի դադարեցված միայն այն դեպքում, եթե դա ակնհայտ է ավելի ուշ կնքված պայմանագրից կամ մեկ այլ ձևով հավաստվում է, որ այդպիսին է եղել կողմերի մտադրությունը» (The earlier treaty shall be considered as only suspended in operation if it appears from the later treaty or is otherwise established that such was the intention of the parties):



Լոզանի պայմանագրի ստորագրողները (24 հուլիսի, 1923 թ.): Հայաստանի Հանրապետությունը մասնակից չէր այդ պայմանագրին բռնազավթված լինելու պատճառով...

Լոզանի պայմանագրից ոչ միայն ակնհայտ չէ, որ կողմերը մտադիր էին չեղյալ հայտարարել Սևրի պայմանագիրը, այլև Լոզանի պայմանագրում ընդհանրապես հիշատակում չկա Սևրի պայմանագրի մասին: Ավելի պարզ ասած՝ պայմանագիրը կարող է չեղյալ հայտարարվել ոչ այլ կերպ, եթե ոչ պայմանագիրը կնքած կողմերի, անհրաժեշտ է շեշտել **բոլոր կողմերի**¹⁰, դրա մասին միանշանակ հայտարարումով: Միջազգային իրավունքի էական սկզբունքներից է, որ *ոչ մի պետություն չի կարող ձեռքբազատվել պայմանագրի պարտավորություններից և ոչ էլ կարող է նորափոխել դրա պայմանները, քանի դեռ չունի մյուս պայմանավորվող բոլոր կողմերի հստակ համաձայնությունը*¹¹:

Բերենք մի պարզ, բայց խոսուն օրինակ: Մյունխենի (1938թ.) պայմանագրով Սուդեթը (Sudetenland) Չեխոսլովակիայից անցել էր Գերմանիային: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Սուդեթը վերադարձվել էր Չեխոսլովակիային: Սակայն, չնայած պարտված Գերմանիայի կնքած բազմաթիվ ու բազմաբնույթ պայմանագրերին, Մյունխենի պայմանագիրը չեղյալ չէր հայտարարվել և, հետևաբար, այն մնում էր ուժի մեջ: Եվ միայն

1973թ. դեկտեմբերին Արևմտյան Գերմանիան, որպես Երրորդ Ռայխի իրավահաջորդ, պայմանագիր կնքեց Չեխոսլովակիայի հետ, որով կողմերը չեղյալ հայտարարեցին իրենց 1938թ. կնքած պայմանագիրը¹²:

Թեև, Սևրի պայմանագրի առումով մենք չեն կարող ասել, որ այն ուժի մեջ է, քանի որ վավերացման գործընթացի թերի մնալու պատճառով այն ի սկզբանե չի մտել ուժի մեջ, այսուհանդերձ սխալ է նաև այն պնդումը, որ Լոզանը չեղյալ է հայտարարել Սևրը: Լոզանը չէր կարող դա անել, քանի որ նշյալ պայմանագիրը և՛ իր բնույթով, և՛ ստորագրողների շրջանակով էապես տարբերվում է Սևրի պայմանագրից: Այսինքն, ներկայումս Սևրի պայմանագիրը միջազգային իրավունքի վավերական փաստաթուղթ է, որը բանակցվել և ստորագրվել է օրինական ընթացակարգի համաձայն, սակայն ուժի մեջ չի մտել (*valid but not in force*): Եթե պատկերացնենք անհնարինը, ասենք՝ Սևրի պայմանագիրը ստորագրած բոլոր երկրները վավերացնեն այն, ապա այն օրինապես կմտնի ուժի մեջ:

Այստեղ անհրաժեշտ է շեշտել, որ Սևրի պայմանագրի *անկատար* լինելը (*unperfected treaty*), ինչպես միջազգային իրավունքում կոչվում են չվավերացված պայմանագրերը¹³, չի խաթարում չ՛հ իրավունքները, քանի որ Թուրքիայի պարտավորությունները չ՛հ նկատմամբ բխում են ոչ թե Սևրի պայմանագրից, այլ այդ պայմանագրից ածանցվող ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի իրավաբար վճռից (22 նոյեմբերի, 1920թ.)¹⁴:

Չնայած Լոզանի պայմանագրում չկա որևէ հիշատակում Հայաստանի և հայերի մասին, սակայն այն 2 առումով առնչվում է մեզ: Լոզանի պայմանագրի ողջ Երրորդ բաժինը (հոդվածներ 37-45) վերաբերում է Թուրքիայի ոչ-մուսուլման փոքրամասնություններին: Ընդ որում, փոքրամասնություններին վերաբերող հոդվածներին տրվել է *հիմնարար օրենքի* (*fundamental law*) ուժ, այսինքն՝ դրանք անբեկանելի և անփոփոխելի պետք է լինեն: Սա մի առանձին հոդվածի նյութ է, որին կանդրադառնանք առաջիկայում:

Հայաստանի երկրող աղերսը Լոզանի պայմանագրի հետ ի հայտ է գալիս Թուրքիայի ստեղծվելիք հանրապետության տարածքի իրավական ձևակերպման առնչությամբ: Լոզանի պայմանագրի 16-րդ հոդվածի առաջին պարբերությունը հռչակում է. «*Այս Թուրքիան հրաժարվում է բոլոր այն տարածքների ու կղզիների տիրույթից և դրանց նկատմամբ իր բոլոր իրավունքներից, որոնք գտնվում են սույն պայմանագրով գծած սահմաններից դուրս, ի բացառյալ նրանց, որոնց նկատմամբ սույն պայմանագրով ճանաչվել է նրա ինքնիշխանությունը: Այդ տարածքների և կղզիների սպազան լուծել են կամ կլուծեն շահագրգիռ կողմերը*»:

(Turkey hereby renounces all rights and title whatsoever over or respecting the territories situated outside the frontiers laid down in the present treaty and the islands other than those over which her sovereignty is recognized by the said treaty, the future of these territories and islands being settled or to be settled by the parties concerned.)

Քանի որ Լոզանի պայմանագիրը հստակեցնում է Թուրքիայի սահմանը Բուլղարիայի (հոդված 2.1), Հունաստանի (հոդված 2.2), Սիրիայի (հոդված 3.1) և Իրաքի (հոդված 3.2) հետ, ուստի թուրքական իրավունքներն ու տիրույթը ճանաչվում են միմիայն այդ սահմանագծից ներս ընկած տարածքների վրա:

Լոզանի պայմանագիրը չի անդրադարձել հայ-թուրքական սահմանին: Սրա պատճառն այն է, որ այն արդեն իսկ և մեկընդմիջտ որոշված էր ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի անբեկանելի և կատարման համար պարտադիր **իրավարար վճռով** (22 նոյեմբերի, 1920թ.): Քանի որ իրավարար վճռով հայաստանապատկան դարձած տարածքները Լոզանի պայմանագրով ներառված չեն հետագայում (29 հոկտեմբերի, 1923թ.-ից) որպես Թուրքիայի Հանրապետություն ճանաչված երկրի սահմաններից ներս, ուստի Լոզանում Թուրքիայի անունից հանդես եկող պատվիրակությունը 16-րդ հոդվածով¹⁵ հրաժարվել է դրա տիրույթից և դրա նկատմամբ իրավունքներից: Լոզանի պայմանագրի 16-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը վերահաստատում է այդ իրողությունը. «*Սույն հոդվածի դրույթները չեն ներազդում բարիդրացիական հարաբերություններից բխող այն հատուկ պայմանավորվածություն-*

ների վրա, որոնք կայացել են կամ կարող են կայանալ Թուրքիայի և սահմանակից երկրներից որևէ մեկի միջև»:

(The provisions of the present Article do not prejudice any special arrangements arising from neighbourly relations which have been or may be concluded between Turkey and any other limitrophe countries.)

Պետք է ուշադրություն դարձնել այն կարևոր հանգամանքի վրա, որ 16-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը խոսում է սահմանները հստակեցնող ոչ թե պայմանագրի կամ համաձայնագրի, այլ «*հատուկ պայմանավորվածությունների*» մասին (*special arrangements*), որոնց թվին է պատկանում նաև իրավաբար վճիռը:

Այսպիսով, Լոզանի պայմանագրի 16-րդ հոդվածը վերահաստատել է Սևրի պայմանագրի 90-րդ հոդվածի Թուրքիայի հրաժարումը բոլոր այն տարածքներից, որոնք Վուդրո Վիլսոնի իրավաբար վճռով փոխանցվել էին Հայաստանի Հանրապետությանը:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարելի է անել հետևյալ եզրակացությունները.

- ☞ **Սևրի և Լոզանի պայմանագրերը իրավական երկու տարբեր փաստաթղթեր են:**
- ☞ **Լոզանի պայմանագիրն իրավասու չէր և չեղյալ չի հայտարարել Սևրի պայմանագիրը:**
- ☞ **Լոզանի պայմանագիրը, հիմնական օրենքի կարգավիճակով, ամրագրել է ոչ-մուսուլման փոքրամասնությունների իրավունքները:**
- ☞ **Լոզանի պայմանագիրը վերահաստատել է Թուրքիայի հրաժարումը իրավաբար վճռով Հայաստանի Հանրապետությանը փոխանցված տարածքների տիրոջույթից և իրավունքից:**

Հղումներ և ծանոթագրություն

1. Hudson G. F., Turkey, Greece and the Eastern Mediterranean, Oxford, 1939, p. 16.
2. Բրիտանական կայսրություն, Ֆրանսիա, Իտալիա և Ճապոնիա:
3. Հայաստան, Բելգիա, Հունաստան, Լեհաստան, Պորտուգալիա, Ռումինիա, Սերբ-Խորվաթ-Սլովենական պետություն, Չեխոսլովակիա և Հեջազ (ներկայումս՝ Սաուդյան Արաբիա) (վերջինս չի ստորագրել պայմանագիրը):
4. Բրիտանական կայսրություն, Ֆրանսիա, Իտալիա, Ճապոնիա, Հունաստան, Ռումինիա, Սերբ-Խորվաթ-Սլովենական պետություն (վերջինս չի ստորագրել պայմանագիրը):

5. Armed Conflict, in Encyclopedia of Public International Law, v. I, Amsterdam, 1992, p. 250.
6. Vienna Convention (1969), Article 34. “A treaty does not create either obligations or rights for a third State without its consent”.
7. Vienna Convention (1969), Article 41. “Two or more of the parties to a multilateral treaty may conclude an agreement to modify the treaty as between themselves alone if: (b) the modification in question is not prohibited by the treaty and: (b) (i) does not affect the enjoyment by the other parties of their rights under the treaty or the performance of their obligations”.
8. Արձանագրությունը ստորագրած մյուս երկրներն էին՝ Ավստրո-Հունգարիա, Ֆրանսիա, Վերնանիա, Մեծ Բրիտանիա, Իտալիա և Ռուսաստան:
9. McNair (Lord), Law of Treaties, Oxford, 1961, p. 230.
10. Տե՛ս Վիեննայի կոնվենցիայի (1969թ.) 59-րդ հոդվածի 1-ին կետը:
11. McNair (Lord), նշվ. աշխ., էջ 230:
12. Paul K. Huth, Standing Your Ground, Territorial Disputes and International Conflict, Detroit, 1996, p. 207-8.
13. Չվավերացված պայմանագրերի իրավական կարգավիճակի մասին ավելի հանգամայից տե՛ս՝ W. Michael Reisman, Unratified Treaties and Other Unperfected Acts in International Law: Constitutional Functions. Vanderbilt University, School of Law, Vanderbilt Journal of Transnational Law, Volume 35, Issue 3, 2002, p. 729.
14. Վուդրո Վիլսոնի իրավարար վճռի մասին ավելի հանգամանայից տե՛ս՝ Արա Պապյան, Վուդրո Վիլսոնի իրավարար վճիռը Հայաստանի և Թուրքիայի սահմանի վերաբերյալ, Ազգ, 28 դեկտեմբերի, 2006թ. էջ 3; և Արա Պապյան, Ամերիկայի Միացյալ Նահանգների սահմանադրությունը, Հայկական հարցը և Վուդրո Վիլսոնի իրավարար վճիռը, Ազգ, 28 փետրվարի, 2007թ., էջ 5:
15. Ուշագրավ գուգադիպոթյամբ միջազգային պայմանագրերում Հայկական հարցին առնչվող և՛ առաջին հոդվածը (տե՛ս՝ Սան Ստեֆանոյի պայմանագիրը, 3 մարտի, 1878թ.) և՛ վերջին հոդվածը (տե՛ս՝ Լոզանի պայմանագիրը, 24 հուլիսի, 1923թ.) կրում են միևնույն՝ 16 թիվը:

*առաջին անգամ տպագրվել է FRANCE-ARMENIE ամսագրում,
№ 300, 16-31 հուլիսի, 2007թ., էջ 19-21*

Հայ ժողովրդի նյութական կորուստները Հայոց ցեղասպանության ժամանակ

Հայ ժողովրդի դեմ իրականացված հանցագործությունը դեռևս Թուրքիայի կողմից պատասխանի է սպասում՝ ցեղասպանությունը պիտի ճանաչվի և վնասները պիտի հատուցվեն: Մրանք ուտոպիական նպատակներ չեն: Որպես Օսմանյան կայսրության իրավահաջորդ, թուրքական պետությունն ունի միջազգային իրավական պարտավորություններ: Համաձայն միջազգային իրավունքի, հանցագործությունների համար պատասխանատվությունն ընկնում է դրանք իրականացրած երկրի վրա, ինչպես նաև, ըստ շարունակականության և պատասխանատվության սկզբունքի՝ նրա իրավահաջորդի:

Ֆեդերիկո Անդրեու-Գուզման, ավագ իրավախորհրդատու,
Իրավաբանների միջազգային հանձնաժողով (ԺՄՆ)¹

Մարդկային կյանքը գերագույն և բացառիկ արժեք է: Այն անգին է: Բնականաբար, խոսելով Հայոց ցեղասպանության մասին, մենք առաջին հերթին, և գրեթե բացառապես, շեշտել ենք հայ ժողովրդի մարդկային կորուստները: Սակայն ցեղասպանության տարիներին հայ ժողովուրդն ունեցել է նաև հսկայական նյութական կորուստներ: Անվիճելի է, որ ցեղասպանության ածանցյալ նպատակներից է եղել հայ ժողովրդի անհատական և հավաքական սեփականության յուրացումը: Միջազգային իրավունքը հռչակում է՝ *Ex injuria non oritur jus* (լատ.)², այսինքն՝ հանցագործը չպիտի վայելի իր հանցագործության պտուղները: Այլ խոսքով, *erga omnes* հանցագործության³ հետևանքները չեն կարող ճանաչվել կամ օրինականացվել⁴:

Այս առումով, շատ կարևոր է հստակեցնել, թե գումարային դրսևորմամբ ինչքա՞ն են եղել հայ ժողովրդի նյութական կորուստները Հայոց ցեղասպանության տարիներին՝ 1915-1923թթ.: Բնության առնենք որոշ պաշտոնական փաստաթղթեր, որոնցում արձանագրվել են հայ ժողովրդի նյութական կորուստները, և ամրագրվել է նրա փոխհատուցում ստանալու իրավունքը:

1918թ. նոյեմբերի 11-ին Առաջին աշխարհամարտում ռազմական գործողությունները վերջնականապես դադարեցնող զինադադարը պաշտոնապես ստավ ուժի մեջ: Երկու ամիս անց՝ 1919թ. հունվարի 18-ին, Փարիզում իր աշխատանքներն սկսեց Փարիզի Խաղաղության վեհաժողովը (The Paris Peace Conference), որի նպատակն էր համապարփակ քննության ենթարկել պատերազմին առնչվող բոլոր հարցերը և նախապատրաստել խաղաղության պայմանագրերը: Կարևորագույն հարցերի թվին էր պատկանում պատերազմի հրահրման համար մեղավոր երկրների կողմից նյութական կորուստների փոխհատուցումը (reparations): Ըստ այդմ, Փարիզի վեհաժողովի կազմում կար հատուկ հանձնաժողով փոխհատուցումների հարցով (The Commission on Reparations of Damage (Valuation of Damage)): Գրեթե 2 ամիս տևած աշխատանքներից հետո պարզ դարձավ, որ նյութական կորուստներ են ունեցել ոչ միայն պատերազմին անմիջականորեն մասնակցած երկրները: Ուստի, մարտի 7-ին նշյալ հանձնաժողովը ձևավորեց առանձին մարմին՝ Հատուկ հանձնախումբ (Special Committee)⁵, որի նպատակն էր ի մի բերել հանձնաժողովում չներկայացված երկրների և ժողովուրդների նյութական կորուստները և դրանց հատուցմանը տալ պաշտոնական ընթացք (The Commission on Reparations of Damage, of the Preliminary Peace Conference, has charged a special Committee with the gathering together of claims which may be made against the enemy Powers): Հատուկ հանձնախումբն ուներ հետևյալ կազմը՝ անդամներ. գեներալ Մրք-Քինսթրի (McKinstry) ԱՄՆ, գեդապետ Փիլ (Peel) Մեծ Բրիտանիա, պրն. Ժուասե (Jouasset) Ֆրանսիա, քարտուղարներ. Հ. Ջեյմս (H. James) ԱՄՆ, պրն. Փ. Լոր (P. Laure) Ֆրանսիա: Հանձնախմբի ձևավորման հաջորդ իսկ օրը՝ մարտի 8-ին, այն դիմեց Բոլիվիայի, Բրազիլիայի, Չինաստանի, Էկվադորի, Գվատեմալայի, Հայիթիի, Հեջազի (ներկայումս՝ Սաուդյան Արաբիա), Լիբերիայի, Պանամայի, Պերուի, Սիամի (ներկայումս՝ Թաիլանդ) և Հայաստանի Հանրապետության (Delegation of the Armenian Republic of the Conference of Peace) պատվիրակություններին՝ տեղեկություններ խնդրելով կրած նյու-

թական կորուստների վերաբերյալ: Մեկ ամսվա ընթացքում Հատուկ հանձնախումբն ամփոփեց պատվիրակությունների ներկայացրած, ինչպես նաև այլ աղբյուրներից հայթայթած փաստաթղթերը և 1919թ. ապրիլի 14-ին ներկայացրեց իր նախնական զեկույցը: Թեև արևմտահայության և արևելահայության համար հաշվարկները կատարվել էին առանձին-առանձին, սակայն կորուստները ներկայացված էին միասնական վերջնական թվով: Ըստ այդմ, հայության ամբողջական նյութական կորուստը 1914-1919թթ.-ին 1919թ.-ի գնեթով կազմել է 19.130.982.000 ֆրանսիական ֆրանկ⁶ կամ 3.693.239.768 ԱՄՆ դոլար⁷: Ըստ զեկուցագրի, հայության նյութական կորուստներն ունեին հետևյալ պատկերը.

1. Արևմտահայաստան (կամ ինչպես փաստաթղթում է գրված՝ Turkish Armenia).

ա) գյուղաբնակների անհատական նյութական կորուստները	4 601 610 000
բ) քաղաքաբնակների անհատական նյութական կորուստները	3 235 550 000
գ) ոչ անհատական նյութական կորուստները	6 761 350 000
	Ընդամենը՝ 14 598 510 000 ֆրանկ

2. Հայաստանի Հանրապետություն և Կովկասի այլ հայաբնակ տարածքներ.

ա) այն բնակավայրերի բնակչության կորուստները, որոնց բնակչությունն ամբողջովին տեղահանվել է	1 831 872 000
բ) այն բնակավայրերի բնակչության կորուստները, որոնց բնակչությունը չի տեղահանվել	1 293 600 000
գ) այլ նյութական կորուստներ	1 407 000 000
	Ընդամենը՝ 4 532 472 000 ֆրանկ

Համընդհանուր նյութական կորուստները՝ 19 130 982 000 ֆրանկ

Անհրաժեշտ է ընդգծել, որ այս թվի մեջ ներառված չեն հայերի 1920թ., 1921թ., և 1922թ. (համապատասխանաբար՝ Արևելյան Հայաստան, Կիլիկիա, Ջմյուռնիա և այլն) նյութական կորուստները: Եթե հաշվառվեն մաս նշյալ ժամանակահատվածի կորուստները, ապա վերոնշյալ թիվն առնվազն պետք է 15-20%-ով մեծացվի:

Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունը երբեք չի հրաժարվել իրեն հասանելիք հատուցումից (reparation): Անգամ հայոց պետականության կորստից հետո, երբ այն ռազմակալվեց օտարերկրյա զինված ուժերի կողմից (ռուսական 11-րդ բանակ + թուրքական 3-րդ բանակ), Հայաստանի Հանրապետության օրինական ներկայացուցիչները շարունակել են պնդել հայ ժողովրդի իրավունքների, մասնավորապես նյութական փոխհատուցման վրա: Այսպես, Լոզանի պայմանագրի կնքումից (24 հուլիսի, 1923թ.) անմիջապես հետո Փարիզի վեհաժողովում Հայաստանի Հանրապետության պատվիրակության ղեկավար Ավետիս Ահարոնյանը պաշտոնական գրությամբ (8 օգոստոսի, 1924թ.)⁸ դիմել է Գլխավոր դաշնակից ուժերի արտաքին գործերի նախարարներին և վերահաստատել հայոց իրավունքներին հավատարիմ մնալը:

Հատուցումների հարցով անհրաժեշտ է առանձնացնել մի կարևոր հանգամանք. ժամանակային գործոնը բնավ հիմք չէ նյութական պարտավորություններից խուսափելու համար: Ֆինլանդիան ԱՄՆ նկատմամբ Առաջին համաշխարհային պատերազմից մնացած իր նյութական պարտավորությունների կատարումն ամբողջացրեց միայն 1969թ.-ին, Սեծ Բրիտանիան՝ միայն 1965թ.⁹: Ներկայիս Ռուսաստանը դեռևս խնդիրներ ունի ցարական Ռուսաստանի նյութական պարտավորությունների առումով: Թուրքիայի Հանրապետությունն ինքը, չնայած հսկայական զիջումներին, Օսմանյան կայսրության պարտքը կարողացավ փակել միայն 1944թ. հունիսին¹⁰: «Նյու Յորք Լայֆ» ապահովագրական ընկերությունն (NYLIC) իր 1875-1915թթ. շահառուների ժառանգներին փոխհատուցման հանձնառության մասին հայտարարեց միայն 2004թ. հունվարին, այն էլ երկարատև դատավարությունից հետո:

Սույն դատավարությունը¹¹, թեև անմիջականորեն չի վերաբերում Հայոց ցեղասպանության ընթացքում մեր ընդհանրական նյութական կորուստների փոխհատուցմանը, այնուհանդերձ խիստ կարևոր է: Այն դատական վճռով, նմանաբնույթ գործերի համար ամրագրեց հաշվարկային փոխարժեքը, այն է՝ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանի մեկ ֆրանսիական ֆրանկը ներկայումս հավասար է 2.17 ԱՄՆ դոլարի¹²: Այսինքն, դատական նախադեպի կիրառմամբ, մենք կարող ենք հաշվարկել հայության նյութական կորուստների չափը Հայոց ցեղասպանության հետևանքով՝ 19.130.982.000 ֆրանսիական ֆրանկ x 2.17 = 41.514.230.940 ԱՄՆ դոլար:

Այսպիսով, Թուրքիայի Հանրապետության, որպես Օսմանյան կայսրության իրավահաջորդի, փոխհատուցման պարտավորությունը ներկայիս Հայաստանի Հանրապետության նկատմամբ, որպես Հայաստանի առաջին հանրապետության իրավահաջորդի, կազմում է **առնվազն 41 միլիարդ 514 միլիոն 230 հազար 940 ամերիկյան դոլար:**

Հղումներ և ծանոթագրություն

1. Andreu-Guzman F., Senior Legal Advisor, International Commission of Jurists (Geneva), Preface, p. 9. In: Alfred de Zayas, *The Genocide against the Armenians 1915-1923 and the Relevance of the 1948 Genocide Convention*, Brussels-Geneva, 2005.
2. Ian Brownlie, *Principles of Public International Law*, 5th ed., Oxford, 2001, Glossary.
3. Միջազգային իրավունքի մեջ *erga omnes* (միջազգային ամբողջ հանրության դեմ) հանցագործություններ են համարվում *jus cogens*-ը (միջազգային իրավունքի անբեկանելի սկզբունքները) ոտնահարող հանցագործությունները: Միանշանակ է, որ ցեղասպանությունը *jus cogens*-ը ոտնահարող հանցագործություն է, հետևաբար Թուրքիայի պատասխանատվությունը, ոչ միայն հայության, այլև ողջ միջազգային հանրության առջև է:
4. Alfred de Zayas, նշվ. աշխ., էջ 11:
5. Հատուկ հանձնախմբի աշխատանքների մանրամասների համար տե՛ս՝ Philip Mason Burret, *Reparation at the Paris Peace Conference, From the Standpoint of the American Delegation*, Volume II, New York, 1965, p. 583-9.
6. Philip Mason Burret, նշվ. աշխ., էջ 585:
7. 1919թ. ապրիլի 14-ի դրությամբ 5,18 ֆրանսիական ֆրանկը հավասար է եղել 1 ԱՄՆ դոլարի (19.130.982.000 FFR / 5,18 = \$ 3.693.239.768 USD):
8. Պաշտոնական գրության անվերին թարգմանությունը տպագրվել է Նյու Յորք Թայմս օրաթերթում 1923թ. սետեմբերի 12-ին. Armenia Denounces Lausanne Treaty, Note to the

- Powers Formally Reserves All Grants under the Treaty of Sevres, The New York Times, September 12, 1923, p. 30.
9. Gilbert M., A History of the Twentieth Century, 1900-1933, Toronto, 1997, v. I, p. 551.
 10. Оттоманский долг, Дипломатический Словарь, т. 2, Москва, 1950, с. 295.
 11. Marootian et al. vs. New York Life Insurance Company, Case No. C99-12073 CAS (MCx), United States District Court, Central District of California (Los Angeles).
 12. "The Settlement Agreement requires that each claim be paid in the amount of the death benefit under the policy, converted to current U.S. dollars at the rate of \$2.17 U.S. Dollars per French Franc or \$24.96 U.S. Dollars per British Pound." (See - The Statement of Armenian Insurance Settlement Fund Board, September 9, 2005, p. 3.)

*առաջին անգամ տպագրվել է ԱԶԳ օրաթերթում,
24 ապրիլի, 2007թ. էջ 4*

Հայկական հուշարձանների կարգավիճակը Թուրքիայում ըստ միջազգային իրավունքի

Աղթամարի սբ. Խաչ եկեղեցու շենքի նորոգումը առիթ հանդիսացավ, որ հնչեն իրարամերժ կարծիքներ: Մինչևիսկ ոմանց կողմից փորձ արվեց հարցը ներկայացնել որպես «Թուրքիայի բարի կամքի դրսևորում»: Քանի որ Թուրքիայի Հանրապետության տիրույթում, ինչպես նաև Թուրքիայի կողմից վերահսկվող տարածքներում, գտնվող հայկական հազարավոր հուշարձանների կարգավիճակը և դրանց նկատմամբ Թուրքիայի պարտավորությունները հստակեցված են միջազգային օրենքով և ամրագրված են միջպետական փաստաթղթերում, ուստի անհրաժեշտ է հարցի մեջ պարզություն մտցնել միջազգային իրավունքի տեսանկյունից:



Թուրքիայի Հանրապետության, որպես միջազգային իրավունքի սուբյեկտի ճանաչումը, բխում է Լոզանի (24 հուլիսի, 1923թ.) պայմանագրից՝ մաս 1-ին, հոդված 1-ին: Նույն պայմանագրի 1-ին մասի 3-րդ բաժինը (հոդվածներ 37-44) ամբողջովին նվիրված է Թուրքիայում ազգային փոքրամասնությունների պաշտպանությանը, նրանց ինքնության ու ժառանգության պահպանմանը: Այստեղ անհրաժեշտ է ընդգծել, որ ազգային փոքրամասնություններին վերաբերող վերոնշյալ 37-44 հոդվածներին Լոզանի պայմանագրի 37-րդ հոդվածով տրվել է հիմնարար օրենքի (*fundamental law*) կարգավիճակ և բացարձակ գերակայություն բոլոր այլ օրենքների, կանոնակարգերի և պաշտոնական գործողությունների նկատմամբ. «Հոդված 37. Թուրքիան ընդունում է, որ 38-ից 44 հոդվածներում առկա պայմանավորվածությունները ճանաչվում են որպես հիմնարար օրենքներ, և որևէ

օրենք, կանոնակարգ կամ պաշտոնական գործողություն չի կարող հակասել դրանց կամ խոչընդոտել այդ պայմանավորվածություններին, ինչպես նաև ոչ մի օրենք, կանոնակարգ կամ պաշտոնական գործողություն չի կարող գերակա լինել դրանց նկատմամբ»:

(Article 37. Turkey undertakes that the stipulations contained in Articles 38 to 44 shall be recognized as fundamental laws, and that no law, no regulation, nor official action shall conflict or interfere with these stipulations, nor shall any law, regulation, nor official action prevail over them.)

Ինչպես ակնհայտ է նշյալ հոդվածից, վերոշարադրյալը խիստ կարևոր հանձնառություն է և հանդիսանում է Թուրքիայի համար միջազգային անբեկանելի պարտավորություն: Անհրաժեշտ է ընդգծել, որ իրավունքի մեջ հիմնարար օրենքի խմբին են դասվում սահմանադրությունները կամ դրանց հավասարեցված իրավական փաստաթղթերը:

Քանի որ սույն հոդվածի նպատակներից դուրս է քննել Լոզանի պայմանագրով ամրագրված ազգային փոքրամասնությունների, մասնավորապես հայերի, բոլոր իրավունքները, ուստի մենք կանդորադառնանք միայն խնդրո առարկային՝ ազգային փոքրամասնությունների կրոնական ազատություններին և նրանց կրոնական կառույցների նկատմամբ Թուրքիայի պարտավորություններին:

Լոզանի պայմանագրի 38-րդ հոդվածի երկրորդ մասով Թուրքիայի բոլոր բնակիչներին, մասնավոր կամ հանրային կյանքում, տրվում է հավատքի, կրոնի կամ դավանանքի ազատություն *(All inhabitants of Turkey shall be entitled to free exercise, whether in public or private, of any creed, religion or belief)*: Իսկ պայմանագրի 40-րդ հոդվածով նրանց տրվում է կրոնական հաստատություններ հիմնելու, գործածելու և վերահսկելու իրավունք:

Ավելին, Լոզանի պայմանագրի 42-րդ հոդվածի 3-րդ մասով *«Թուրքական կառավարությունը պարտավորվում է լիակատար պահպանության տակ առնել եկեղեցիները, սինագոգները, գերեզմաններն ու նշյալ փոքրամասնությունների այլ կրոնական հաստատությունները»* *(The Turkish Government undertakes to grant full protection to the churches, synagogues, cemeteries, and other religious establishments of the above-mentioned minorities)*: Բնականաբար *«լիակատար պահպանու-*

թյունն» իր մեջ ներառում է ոչ միայն եկեղեցիները չքանդելն ու չավիրելը, այլև դրանց ամրացումն ու նորոգումը:

Հետևաբար, սբ. Խաչ եկեղեցու շենքի մասնակի նորոգումը ոչ թե «քարի կամքի դրսևորում» է, այլ Թուրքիայի կողմից հիմնարար օրենքի կարգավիճակով ստանձնած միջազգային պարտավորությունների խիստ թերի և ուշացած կատարում՝ որոշակի քաղաքական շահարկման նկատառումով:

Հիմա ամենահետաքրքրականը: Իսկ ովքե՞ր են եղել և մնում Թուրքիայի կողմից ստանձնած պարտավորությունների կատարման երաշխավորները: Լոզանի պայմանագրի 44 հոդվածի 1-ին մասը նշում է. *«Թուրքիան համաձայնվում է, որ Թուրքիայի ոչ մուսուլմաններին վերաբերող սույն բաժնի նախորդող հոդվածները հանդիսանում են միջազգային պարտավորություններ և դրանց կատարումը պետք է երաշխավորվի Ազգերի լիգայի կողմից»* (Turkey agrees that, in so far as the preceding Articles of this Section affect non-Moslem nationals of Turkey, these provisions constitute obligations of international concern and shall be placed under the guarantee of the League of Nations): Հատուկ պարտականություններ են դրվում Ազգերի լիգայի Խորհրդի (Council of the League of Nations) անդամների վրա՝ Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Իտալիա և Ճապոնիա:

Այսինքն, ներկայումս Միացյալ ազգերի կազմակերպությունը (ՄԱԿ) և Անվտանգության խորհուրդը, որոնք ժառանգել են Ազգերի լիգայի և Խորհրդի ոչ միայն իրավունքները, այլև պարտականությունները, հանդիսանում են Թուրքիայում հայկական փոքրամասնության և, մասնավորապես, հայկական հուշարձանների պահպանման հովանավորներն ու երաշխավորները:

Ի լրումն այս ամենի, նշյալ 44-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է ցանկացած տարածայնությունը դատական կարգով լուծելու հնարավորությունը. *«Թուրքիան նաև համաձայնվում է, որ օրենքին կամ սույն հոդվածներից բխող որևէ փաստին վերաբերող ցանկացած տարակարծություն, որը կառաջանա թուրքական կառավարության և պայմանագիրը ստորագրած որևէ երկրի կամ Ազգերի լիգայի Խորհրդի որևէ անդամի միջև, պետք է համարվի միջազգային*

բնույթի վեճ, ինչպիսին ասրագրված է Ազգերի լիգայի կանոնակարգի 14-րդ հոդվածով: Թուրքական կառավարությունը սույնով իր համաձայնությունն է հայտնում, որ նման վեճը, եթե մյուս կողմն այդպես պահանջի, պետք է փոխանցվի Արդարության միջազգային մշտական դատարանի տնօրինմանը: Արդարության միջազգային մշտական դատարանի վճիռը պետք է լինի վերջնական և պետք է ունենա այնպիսի լիազորություն և հետևանք, ինչպիսին [Ազգերի լիգայի] Կանոնակարգի 13-րդ հոդվածով կայացված վճիռները»:

(Turkey further agrees that any difference of opinion as to questions of law or of fact arising out of these Articles between the Turkish Government and any one of the other Signatory Powers or any other Power, a member of the Council of the League of Nations, shall be held to be a dispute of an international character under Article 14 of the Covenant of the League of Nations. The Turkish Government hereby consents that any such dispute shall, if the other party thereto demands, be referred to the Permanent Court of International Justice. The decision of the Permanent Court shall be final and shall have the same force and effect as an award under Article 13 of the Covenant.)

Այսինքն, Լոզանի պայմանագիրը ստորագրած ցանկացած երկիր (Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Իտալիան, Ճապոնիան, Ռումինիան և Հունաստանը) կամ Խորհրդի (ներկայումս՝ Անվտանգության խորհրդի) անդամ որևէ երկիր (5 մշտական և 10 ոչ մշտական անդամներից յուրաքանչյուրը) հայկական հուշարձանների ավիրման հարցով իրավասու է Թուրքիայի դեմ հայցով դիմել Արդարության միջազգային մշտական դատարան (ներկայումս՝ Արդարության միջազգային դատարան): Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Իտալիան և Ճապոնիան մաս պարտավորված են վերահսկել Թուրքիայի կողմից ազգային փոքրամասնությունների, այդ թվում մաս հայերի, հանդեպ Թուրքիայի ստանձնած պարտավորությունների բարեխիղճ կատարումը:

Խախտելով ազգային փոքրամասնությունների իրավունքները՝ Թուրքիան սասանում է իր գոյության իրավական հիմքերը, քանի որ, ըստ միջազգային օրենքի, պայմանագրերը կատարվում են ամբողջության մեջ. պայմանագրի մասնակիցներից մեկի կողմից հանձնառությունների չկատարումն ազատում է մյուս կողմին հանձնառությունների կատարումից: Պայմանագիրը փոխադարձ պայմանա-

վորվածության արդյունք է, հետևաբար, եթե Լոզանի պայմանագիրը ստորագրած կողմերից մեկը (Բրիտանական կայսրությունը, Ֆրանսիան, Իտալիան, Ճապոնիան, Ռումինիան և Հունաստանը) ճանաչել է Թուրքիայի Հանրապետությունը, նրա արևմտյան ու հարավային սահմանները, ապա մյուս կողմը (Թուրքիան) դրա դիմաց ստանձնել է որոշակի պարտավորություններ՝ մասնավորապես 37-44 հոդվածների մեջ ամրագրված ազգային փոքրամասնության իրավունքների հարգումը: Հետևաբար, չկատարելով իր ստանձնած պարտավորությունները, Թուրքիան հարցականի տակ է դնում Լոզանի ողջ պայմանագրի վավերականությունը: Պայմանագրերի օրենքի վերաբերյալ Վիեննայի կոնվենցիան (*Vienna Convention on the Law of Treaties, 1969*) միանշանակ է այդ հարցում. «Հոդված 60, 2. Բազմակողմ պայմանագրի մասնակիցներից մեկի կողմից պայմանագրի կոպիտ խախտումը իրավունք է տալիս. (ա) մյուս մասնակիցներին, միաձայն համաձայնությամբ, կասեցնել պայմանագրի գործունեությունը ամբողջությամբ կամ մասամբ, կամ լիովին դադարեցնել այն»:

(Article 60, 2. The material breach of a multilateral treaty by one of the parties entitles: (a) the other parties by unanimous agreement to suspend the operation of the treaty in whole or in part or to terminate it either.)

Այսու, բուրբական իշխանությունների կողմից հայկական հուշարձանների նպատակային ավիրումը սոսկ բարոյականության հարց չէ, այլ միջազգային հանձնառությունների կոպիտ խախտում: Մեկ եկեղեցու շենքի մասնակի նորոգումը չի կարող փարատել Թուրքիայի Հանրապետության կողմից Լոզանի պայմանագրի հետևողական, բազմակի և շարունակվող ոտնահարումների փաստը:

Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը ժողովուրդների ինքնորոշման և տարածքային ամբողջականության լույսի ներքո

Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուծումը, ըստ ոմանց, հնարավոր է ժողովուրդների ինքնորոշման և տարածքային ամբողջականության պահպանման իբր իրարամերժ դրույթների հաշտեցմամբ: Խոսելով տարածքային ամբողջականության մասին՝ հիմնականում վկայակոչում են 2 փաստաթուղթ՝ ՄԱԿ-ի կանոնակարգը (1945թ.) և Եվրոպայում անվտանգության և համագործակցության եզրափակիչ ակտը (1975թ.): Քննենք այդ փաստաթղթերը և տեսնենք, թե որքանով են հիմնավորված այդ հղումները:

Ա. Նախ քննենք ժողովուրդների ինքնորոշման և տարածքային ամբողջականության դրույթներն ըստ ՄԱԿ-ի կանոնակարգի (Charter of the United Nations)՝ վեր հանելու համար տվյալ փաստաթղթում նրանց վերապահված իրավական բովանդակությունը, հետևաբար՝ նրանց կարևորության աստիճանն ըստ միջազգային իրավունքի: Քննությունն ըստ ՄԱԿ-ի կանոնակարգի կարևորվում է նաև այն հանգամանքով, որ նշյալ կանոնակարգը գերակայություն ունի մնացած բոլոր միջազգային փաստաթղթերի նկատմամբ: Սույն հիմնադրույթն ամրագրված է կանոնակարգի 103-րդ հոդվածում և, բնականաբար, ընդունվում է ՄԱԿ-ի անդամ բոլոր երկրների կողմից:

ՄԱԿ-ի կանոնակարգի առաջին իսկ հոդվածում ամրագրված են այդ կազմակերպության նպատակներն ու սկզբունքները: Առաջին հոդվածի 2-րդ կետն արձանագրում է. «Միավորված ազգերի նպատակներն են. 1. ... 2. զարգացնել ազգերի միջև բարեկամական հարաբերությունները՝ իրավահավասարության սկզբունքի հարգանքի և ժողովուրդների ինքնորոշման հիման վրա, ինչպես նաև ձեռնարկել այլ համապատասխան քայլեր ամրապնդելու համար համընդհանուր խաղաղությունը¹»:

(The Purposes of the United Nations are: 1. ... 2. To develop friendly relations among nations based on respect for the principle of equal rights and self-determination of peoples, and to take other appropriate measures to strengthen universal peace.)

Վերոշարադրյալից հստակ է, որ ՄԱԿ-ը ժողովուրդների ինքրորշումը (շեշտում եմ՝ ինքնորոշումը և ոչ թե պարզապես ինքնորոշման իրավունքը, այսինքն՝ այդ իրավունքի կենսագործումը) դիտարկում է ոչ միայն որպես իր հիմնարար սկզբունքներից մեկը, այլև հիմք ազգերի միջև բարեկամական հարաբերությունների զարգացման, ինչպես նաև համընդհանուր խաղաղության ամրապնդման համար: Հետևաբար ինքնորոշման մերժումը բարեկամությունը խաթարող և համընդհանուր խաղաղությունը սասանող քայլ է:

Ի լրումն, ՄԱԿ-ի կանոնակարգը (Հոդված 24, կետ 2) միանշանակորեն շեշտում է, որ «*Այս պարտականությունները [նկատի ունի խաղաղության և անվտանգության պահպանումը] կատարելիս, ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը պիտի գործի Միավորված ազգերի նպատակներին և սկզբունքներին համապատասխան*»:

(In discharging these duties [the maintenance of international peace & security] the Security Council shall act in accordance with the Purposes & Principles of the United Nations.)

Այսինքն, Անվտանգության խորհուրդը պարտավորված է խաղաղության և անվտանգության պահպանումը զուգորդել և իրականացնել ժողովուրդների ինքնորոշման ճանապարհով, քանզի վերջինս հանդիսանում է ՄԱԿ-ի հոշակած նպատակներից մեկը:

Ինչ վերաբերում է տարածքային ամբողջականության պահպանմանը, ապա նման հասկացություն ներառված չէ ՄԱԿ-ի նպատակների կամ սկզբունքների մեջ: ՄԱԿ-ի կանոնակարգը (հոդված 2-րդ, կետ 4) խոսում է միայն միջազգային հարաբերություններում, արտաքին ուժի կողմից զավթումի ճանապարհով, տարածքային ամբողջականության խաթարման անընդունելության մասին. «*Բոլոր անդամներն իրենց միջազգային հարաբերություններում պետք է ձեռնպահ մնան որևէ պետության տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության դեմ ուղղված ուժի սպառնալիքից կամ օգտագործումից...*»:

(All Members shall refrain in their international relations from the threat or use of force against the territorial integrity or political independence of any state...)

Այսինքն, խոսքը չի գնում պետության տարածքային ամբողջականության բացարձակ և անվերապահ պահպանման մասին, այլ միայն ՄԱԿ-ի անդամ մեկ պետության կողմից այլ պետության տարածքային ամբողջականության ուժային խախտման անընդունելության մասին: Սա բնավ կապ չունի մի որևէ առանձնացող հանրության կողմից իր ինքնորոշման իրավունքի կենսագործման, այսինքն՝ սեփական տարածքով անջատման հետ, եթե, իհարկե, տվյալ հանրությունը կուզի ինքնորոշման իրավունքն իրականացնել անկախության ձևով: Անհրաժեշտ է ընդգծել, որ միմիայն տվյալ հանրության իրավունքն է որոշելու իր ինքնորոշման վերջնաձևը՝ կլինի դա անկախ երկիր, անդամակցում դաշնային պետությանը, ինքնավարություն, թե լրիվ տարրալուծում որևէ պետության կազմում²:

Միջազգային իրավունքի մասնագետների մեծ մասը ներկայումս ընդունում է, որ ինքնորոշումն իրավական սկզբունք է, ի տարբերություն, այսպես կոչված, տարածքային ամբողջականության: Ըստ այդմ, ակնհայտ է, որ հարցի քաղաքական կողմը չի կարող խաթարել դրա իրավական էությունը³: Ավելին, ինքնորոշման սկզբունքը միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքի՝ *jus cogens*-ի, մաս է հանդիսանում⁴, հետևաբար այն անսակարկելի է ու անբեկանելի:

ՄԱԿ-ի Գլխավոր համաժողովը 637A(VII) բանաձևով (16 դեկտեմբերի, 1952թ.) հայտարարել է. «ՄԱԿ-ի անդամ երկրները պետք է սատարեն բոլոր ժողովուրդների և ազգերի ինքնորոշման սկզբունքի [իրականացումը]»⁵:

(“The States Members of the United Nations shall uphold the principle of self-determination of all peoples and nations.”)

Խիստ կարևոր է, որ ՄԱԿ-ի կողմից ընդունած փաստաթղթերն ինքնորոշման իրավունքը [հարգումը] մեկնաբանում են որպես ՄԱԿ-ի կանոնակարգից բխող պարտավորությունների մաս⁶:

(... regards the principle of self-determination as a part of the obligations stemming from the Charter.)

Բ. Մյուս կարևորագույն միջազգային փաստաթուղթը, որը հաճախ է վկայակոչվում տարածքային ամբողջականության

մասին խոսելիս, Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդաժողովի եզրափակիչ ակտն է (1 օգոստոսի, 1975թ.) (Conference on Security and Co-operation in Europe, Final Act): Վերջինս առավելապես հայտնի է Հելսինկիի եզրափակիչ ակտ անունով (Helsinki Final Act):

Ասվում է՝ իբր նշյալ փաստաթուղթն հռչակում է տարածքային ամբողջականության և սահմանների անձեռնմխելիության դրույթները: **Բնավ ոչ և ճիշտ հակասակը**: Հելսինկիի եզրափակիչ ակտը (բաժին 1-ին, ենթաբաժին ա, մաս I, պարբերություն 2-րդ) միանշանակորեն հայտարարում է, որ պետությունների սահմանները կարող են փոփոխվել, և նշված են փոփոխման ուղիները. «Նրանք [մասնակից պետությունները] *համարում են, որ իրենց սահմանները կարող են փոփոխվել միջազգային իրավունքին համապատասխան, խաղաղ միջոցներով և համաձայնությամբ*»:

(They [the participating States] consider that their frontiers can be changed, in accordance with international law, by peaceful means and by agreement):

Եզրափակիչ ակտը հստակեցնում է (բաժին 1-ին, ենթաբաժին ա, մաս II, պարբերություն 1-ին), որ անընդունելի են արտաքին ուժի կողմից զավթման միջոցով տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության ոտնահարումը. «[Եզրափակիչ ակտին] *Մասնակից-երկրներն իրենց փոխհարաբերություններում, ինչպես նաև ընդհանրապես միջազգային հարաբերություններում, ձեռնպահ կմնան որևէ երկրի տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության դեմ ուղղված ուժի սպառնալիքից կամ կիրառումից...*»:

(The participating States will refrain in their mutual relations, as well as in their international relations in general, from the treat or use of force against the territorial integrity or political independence of any State ...):

Այսու, ակնհայտ է, որ Հելսինկիի Եզրափակիչ ակտը, ինչպես վերը նշվեց ՄԱԿ-ի կանոնակարգի դեպքում, խոսում է ոչ թե տարածքային ամբողջականության բացարձակ և անվերապահ պահպանման մասին, այլ միայն արտաքին զինված ներխուժման հետևանքով տարածքային ամբողջականության խաթարման անըն-

դրուելության մասին: Այսինքն, խոսքը գնում է Հելսինկիի եզրափակիչ ակտը ստորագրած մի երկրի կողմից նույն ակտը ստորագրած մեկ այլ երկրի վրա ռազմական հարձակման կամ նման սպառնալիքի կիրառմամբ տարածքային ամբողջականությունը խախտելու կամ տվյալ երկրի քաղաքական կարգը փոխելու անընդունելության մասին: Պետք է մշտապես հիշել, որ Հելսինկիի եզրափակիչ ակտի, ինչպես նաև դրանից առաջ ՄԱԿ-ի կանոնակարգի, բուն նպատակը եղել է մնում է, միջպետական հարաբերություններում ուժի կամ ուժի սպառնալիքն արգելելու միջոցով, խաղաղության և անվտանգության սպառնալույթ, և ոչ թե սահմանների հավերժացումը կամ պետությունների տարածքներին սրբազան կովի կարգավիճակի շնորհումը: Ազգային ինքնորոշումը միջազգային իրավունքի այն հիմնարար սկզբունքներից է, որի միջոցով օրինապես փոփոխվել (ՍՄՀՄ, Չեխոսլովակիա, Գերմանիա, Հարավսլավիա և այլն) և փոփոխվելու են (Սերբիա) պետությունների սահմանները:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարելի է եզրակացնել, որ ո՛չ ՄԱԿ-ի կանոնակարգի մեջ և ո՛չ էլ Հելսինկիի եզրափակիչ ակտում չկան **«տարածքային ամբողջականության»** կամ **«սահմանների անձեռնմխելիության»** հիմնադրույթներ: Նշյալ փաստաթղթերում առկա է միայն փաստաթղթերը ստորագրած երկրների կողմից ուժի կամ ուժի սպառնալիքի միջոցով տարածքային ամբողջականությունը չխախտելու և սահմանները չփոփոխելու հանձնառություն:

Այսպիսով, եթե Ադրբեջանը Լեռնային Գարաբաղի ժողովրդի կամքի ազատ և խաղաղ դրսևորմանը (ցույցեր, հանրահավաքներ, հանրաքվեներ, հայցադիմումներ, կոչեր և այլն) հակադրել է բռնի ուժը, խաղաղ բնակչության դեմ ներքին գորքերի օգտագործմամբ ձեռնարկել է ոչ համարժեք պատժիչ գործողություններ, պետականորեն կազմակերպել է Ադրբեջանի հայ քաղաքացիների ջարդեր (Մումգայիթ, Բաքու, Կիրովաբադ և այլն), իր իսկ քաղաքացիների նկատմամբ, վարձկանների օգտագործմամբ (ուկրաինացիներ, աֆղաններ, ռուսներ և այլն), սանձազերծել է անողոր Կատերազմ ու խայտառակ պարտություն է կրել, որի հետևանքով կորցրել է վերա-

հսկողությունը իրենը համարվող տարածքի մի մասի նկատմամբ, ապա դա բնավ կապ չունի նշածս փաստաթղթերում հիշատակվող տարածքային ամբողջականության պահպանման կամ սահմանների անձեռնմխելիության հասկացությունների հետ:

Հղումներ և ծանոթագրություն

1. Նույն ձևակերպումը տեղ է գտել նաև ՄԱԿ-ի կանոնակարգի 55-րդ հոդվածում, որը վերաբերում է կայունության և բարեկեցության համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը:
2. Ian Brownlie, Principles of Public International Law, 5th edition, Oxford, 2001, p. 599.
3. Նույն տեղում, էջ 600:
4. Նույն տեղում, էջ 475-6:
5. Նույն տեղում, էջ 600:
6. Նույն տեղում:

*առաջին անգամ տպագրվել է ԱԶԳ- օրաթերթում,
22 մայիսի, 2007թ., էջ 4*

Կրկին Հայաստանի Հանրապետության սահմանների և Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման մասին

Միջազգային իրավունքում սահման տերմինը բնորոշում է այն գիծը, որը որոշում է պետության կամ մեկ այլ միջազգային կարգավիճակ ունեցող միավորի իրավասության տարածքային ոլորտի վերջնագիծը¹:

(In International law, the term “boundary” means a line which determines the limit of the territorial sphere of jurisdiction of States or other entities having an international status.)

Ավելի պարզ ասած՝ սահմանում է այն գիծը, մինչև ուր գործում են տվյալ պետության օրենքները, իսկ դրանից անդին գործում են, անպայմանորեն միջազգային իրավունքի սուբյեկտ հանդիսացող, մեկ այլ պետական միավորի օրենքները: Այստեղից ակնհայտ է, որ սահմանն ածանցվում է պետականությունից, այսինքն՝ որպես միջազգային իրավունքի սուբյեկտ ճանաչված լինելուց: Անվիճելի է, որ այսօր գործող Միմսկի խմբի եռանախագահության երկրներից և ոչ մեկը՝ ներառյալ՝ ԱՄՆ և Ֆրանսիան, նախկին Սովետական Միության մեջ ընդգրկված և ոչ մի վարչական միավոր երբեք չեն ճանաչել որպես միջազգային իրավունքի սուբյեկտ²: Հետևաբար այդ միավորների վարչական բաժանարար գծերը միջազգային իրավունքի առումով երբեք չեն ունեցել սահմանի կարգավիճակ, որպեսզի այսօր հիմք լիներ խոսելու սահմանների անձեռնմխելիության մասին: Առավել ևս սա վերաբերում է բոլոր այն վարչական միավորների (ինքնավար հանրապետություններ, մարզեր և օկրուգներ) և սովետական սոցիալիստական հանրապետությունների բաժանարար գծերին, որոնց վարչական ենթակայության տակ էին գտնվում տվյալ միավորները: Միմիայն՝ վարչական ենթակայության: Անհրաժեշտ է ընդգծել, որ ՄՍՀՄ ինքնավար միավորները մաս էին կազմում միասնական և մեկ միջազգային ինքնություն (*international personality*) ունեցող ՄՍՀՄ-ին և բնավ ոչ այն հանրապետություններին, որոնց միջոցով նրանց ենթակայությունը միջնոր-

դավորված էր պետությանը: Պետությունը մեկն էր՝ ՍՍՀՄ: Ինչպես, օրինակ Հայաստանի Հանրապետության ցանկացած բնակավայր այսօր մաս է կազմում Հայաստանի Հանրապետությանը, թեև նրա ենթակայությունը միջնորդավորված է մարզային ենթակայությամբ:

Այսու, միջազգային իրավունքի տեսանկյունից անհեթեթ է Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքը սահմանափակել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի, այսպես կոչված, սահմանով: Սա նշանակում է ստալինյան սահմանադրությանը գերակայություն տալ միջազգային իրավունքի անբեկանելի սկզբունքների, տվյալ դեպքում *jus cogens*-ի կարգավիճակ ունեցող ազգային ինքնորոշման իրավունքի նկատմամբ³:

Ընդհանրապես, եռանախագահներից ոմանց հայտարարություններն առ այն, որ ճանաչում են Ադրբեջանի, այսպես կոչված, տարածքային ամբողջականությունը, կամ Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման սկզբունքի Լեռնային Ղարաբաղի Մարզի տարածքով սահմանափակելու փորձը, միջազգային իրավունքի կոպիտ խախտում է: Դա նրանց չվերաբերող հարց է և նրանք գործում են *ultra vires*, այսինքն՝ ակնհայտորեն գերազանցում են իրենց վերապահված լիազորությունները: Նրանց մանդատը միայն միջնորդությունն է, ոչ թե սեփական երկրների քաղաքական տեսակետների արտահայտումը: Այսինքն՝ նրանք պետք է միջնորդեն, որպեսզի գտնվի փոխադարձաբար ընդունելի լուծում 2 հարցում՝

- ա) Լեռնային Ղարաբաղի ժողովուրդն իրականացնի իր ինքնորոշման իրավունքը;
- բ) երկու նորանկախ պետությունների՝ Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության, միջև որոշվի փոխադարձաբար ընդունելի սահման:

Եթե Լեռնային Ղարաբաղի ժողովուրդն իր ինքնորոշման իրավունքն իրականացնի Հայաստանի Հանրապետությանը միանալու տարբերակով, ընդ որում ինքնորոշման դրսևորման ձևը բացառապես նրանց որոշելիքն է, ապա վերոնշյալ հարցերը կմիանան: Սահմանի փաստացի ուղեգծի հարցը 2 հարակից պետությունների

որոշելիք խնդիր է՝ 2 պետությունների բացառիկ իրավասության ներքո գտնվող հարց: Այլ պետությունները չեն կարող անել այլ բան, քան ընդունել այդ երկու պետությունների որոշածը⁴:

(The actual course of a boundary is a matter to be determined by the two adjacent States, a question subject to the exclusive competence of the two States. Other States cannot but accept what these two States decide.)

Այստեղ անհրաժեշտ է հիշեցնել, որ միջազգային հանրության հայ-ադրբեջանական, ինչպես նաև հայ-վրացական, սահմանների վերաբերյալ քաղաքական կամքի վերջին օրինական դրսևորումը եղել է Փարիզի վեհաժողովում (1919-1920թթ.): Դրանից հետո ինչ տեղի է ունեցել տարածաշրջանում, ըստ միջազգային իրավունքի, անօրինական է (unlawful) և չի կարող ստեղծել իրավական հետևանքներ, քանզի Հարավային Կովկասի 3 անկախ երկրներն էլ նախ բռնազավթվել են (occupied), ապա և բռնակցվել են (annexed), Սովետական Միություն անունով հանդես եկող Ռուսաստանին⁵:

Այսպես, Փարիզի վեհաժողովն իր «Հայաստանի սահմանները որոշող հանձնաժողովի առաջարկների և զեկույցի» մեջ (24 փետրվարի, 1920թ.) (*Report and Proposals of the Commission for the Delimitation of the Boundaries of Armenia, 24 February 1924*)⁶, որը ստորագրել են Բրիտանական կայսրության, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի ներկայացուցիչները, հայտարարում է.

«Ինչ վերաբերում է Հայաստանի պետության և Վրաստանի, ինչպես նաև Ադրբեջանի սահմանին, ապա Հանձնաժողովը գտնում է, որ ներկայումս նախընտրելի է սպասել վերոնշյալ սահմանների հստակեցման վերաբերյալ այնպիսի համաձայնության արդյունքներին, որոնց երեք հանրապետություններն իրենք կհանգեն պայմանագրերի մեջ:

Այն դեպքում, եթե սույն հանրապետություններն իրենց սահմանների վերաբերյալ չեն հանգի որևէ համաձայնության, ապա հարցը պետք է փոխանցվի Ազգերի լիգայի իրավաբարությանը, որը կստեղծի միջդաշնակցային Հանձնաժողով՝ տեղում որոշելու վերոնշյալ սահմանները՝ հաշվի առնելով, որպես սկզբունք, ազգագրական տվյալները:»

(As regards the boundary between the State of Armenia and Georgia and Azerbaijan, the Commission considers that, it is advisable for the present to await the results of the agreement, provided for in the treaties existing between the three Republics, in regard to the delimitation of their respective frontiers by the States themselves.

In the event of these Republics not arriving at an agreement respecting their frontiers, resort must be had to arbitration by the League of Nations, which would appoint an interallied Commission to settle on the spot the frontiers referred to above, taking into account, in principle, of ethnographical data.)

Հուլիս կարևոր է, որ նշյալ փաստաթուղթն ընդգրկվել է ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռի (22 նոյեմբերի, 1920թ.) (Arbitral Award, November 22, 1920) *Ամբողջական զեկույցի* մեջ, որպես 1-ին հավելվածի 2-րդ փաստաթուղթ (*Full Report, Annex I, No 2*), որը վկայում է, որ Սիագյալ Նահանգները ճանաչել են նշյալ փաստաթղթի իրավական էությունն ու օրինականությունը⁷:

Նշյալ դրույթները ներառվել են նաև Սևրի պայմանագրի (10 օգոստոսի, 1920թ.) մեջ, որը ստորագրել են 18 երկիր: Պայմանագրի 92-րդ հոդվածն ամրագրում է.

Հայաստանի և Ադրբեջանի, ինչպես նաև Վրաստանի, միջև սահմանները կորոշվեն շահագրգիռ երկրների ուղղակի համաձայնության միջոցով:

Այն դեպքում, երբ շահագրգիռ երկրները մինչև 89-րդ հոդվածում հիշատակված որոշման օրը⁸ չեն կարողանա համաձայնությամբ որոշել սահմանները, ապա խնդրո առարկա սահմանը կորոշվի Գլխավոր դաշնակից ուժերի կողմից, որոնք էլ տեղում կիրականացնեն նաև սահմանանշումը:

(The frontiers between Armenia and Azerbaijan and Georgia respectively will be determined by direct agreement between the states concerned.

In the either case the States concerned have failed to determine the frontier by agreement at the date of the decision referred to in Article 89, the frontier line in question will be determined by the Principal Allied Powers, who will also provide for its being traced on the spot)⁹.

Առնվազն տարօրինակ է, որ այսօր փորձ է արվում ներպետական և կուսակցական որոշումներին, որոնք առավելագույնը կարող են ունենալ միակողմ օրենսդրական փաստաթղթի (*unilateral legal act*) կարգավիճակ, գերակա կարգավիճակ տալ

միջազգային փաստաթղթերի նկատմամբ, որոնք այսօր արտահայտում են ավելի քան 20 երկրի, այդ թվում Մինսկի եռանախագահության երկու անդամ երկրների՝ Ֆրանսիայի և ԱՄՆ-ի, քաղաքական կամքը:

Վերոշարադրյալը կարելի է ամփոփել հետևյալ կերպ.

1. Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության և Ադրբեջանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության վարչական բաժանարար գիծը երբեք սահման չի եղել, հետևաբար տեղին չէ խոսել *«սահմանների անձեռնմխելիության»* մասին:
2. Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի և Ադրբեջանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության վարչական բաժանարար գիծը երբեք սահման չի եղել, հետևաբար տեղին չէ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքը սահմափակել ստալինականերտ մարզի վարչարարության պարագծով:
3. Մինսկի եռանախագահության անդամները լիազորված չեն դատողություններ անելու տարածքների պատկանելության կամ սահմանների վերաբերյալ. նրանք իրավարարներ չեն, նրանք միայն միջնորդներ են:
4. Հայ-ադրբեջանական, ինչպես նաև հայ-վրացական, սահմանների վերաբերյալ միջազգային հանրության քաղաքական կամքի վերջին օրինական դրսևորումը եղել է Փարիզի խաղաղության վեհաժողովի (1919-1920թթ.) *ad hoc* հանձնաժողովի 1920թ.-ի փետրվարի 24-ի գեկույց-առաջարկը:
5. Վերոնշյալ փաստաթղթի դրույթները ամրագրված են Սկրի պայմանագրում, հետևաբար հանդիսանում են այն ստորագրած երկրների քաղաքական կամքի դրսևորումը:

Եզրակացություն

Հայ-ադրբեջանական սահմանի վերաբերյալ միակ օրինական փաստաթուղթը Փարիզի վեհաժողովի հատուկ հանձնաժողովի 1920թ.-ի փետրվարի 24-ի զեկույց-առաջարկն է, որով Ազգերի լիգային էր վերապահված հայ-ադրբեջանական սահմանազատումը: Ուստի, ՄԱԿ-ը՝ որպես Ազգերի լիգայի իրավահաջորդ, և մասնավորապես ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը՝ որպես Գլխավոր դաշնակից ուժերի տեղապահ, պարտավորություն ունեն կենսագործել այդ սահմանազատումը՝ հիմք ընդունելով 1920թ. նոյեմբեր-դեկտեմբերի ազգային տեղաբաշխման տվյալները: Ներկայիս ազգային տեղաբաշխումը չի կարող հիմք հանդիսանալ սահմանազատման համար, քանզի այն առաջացել է Ադրբեջանի հանցավոր հայաթափման՝ էթնիկ զտման, քաղաքականության հետևանքով, իսկ հանցագործության հետևանքները չեն կարող առաջացնել իրավունքներ՝ *Ex injuria non oritur jus*¹⁰:

Հղումներ և ծանոթագրություն

1. Michael Bothe, Boundaries, in R. Bernhardt (ed.), Encyclopedia of the Public International Law, Volume I (1992), p. 443.
2. Միջազգային իրավունքը միանգամայն հստակ է պետականության հարցում: Մասնավորապես, Մոնտեվիդեոյի Պետությունների իրավունքների և պարտականությունների մասին 1933թ.-ի կոնվենցիայի (*Convention on Rights and Duties of States, Montevideo, 1933*) առաջին հոդվածն ամրագրում է պետականության 4 չափորոշիչները, որոնք պարտադիր են միջազգային իրավունքի սուբյեկտ լինելու համար: Դրանք են. ա) մշտական բնակչություն, բ) որոշակիացված տարածք, գ) կառավարություն, և դ) այլ պետությունների հետ հարաբերությունների մեջ մտնելու կարողություն: (Article I: (a) a permanent population; (b) a defined territory; (c) government; and (d) capacity to enter into relations with the other States). (Ian Brownlie, Principles of Public International Law, 5th edition, Oxford, 2001, p. 70.) Վերջին չափորոշիչը համարվում է ամենակարևորը: (Williams S.A., De Mestral A.L.C., An Introduction to International Law, Toronto and Vancouver, 1987, p. 45): Ուզում եմ շեշտել, որ խոսքը գնում է ոչ թե պարզապես միջպետական հարաբերությունների իրավունքի դատարկախոս հայտարարության մասին, այլ դիվանագիտական հարաբերությունների մեջ մտնելու իրական կարողության մասին, այսինքն՝ օտար երկրներում, ինչպես նաև սեփական երկրում՝ օտար, դեսպանատներին բացման և գործունեություն ծավալման մասին:
3. Այս մասին ավելի հանգամանալից տես՝ Արա Պապյան, Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը ժողովուրդների ինքնորոշման և տարածքային ամբողջականության լույսի ներքո, Ազգ, 22 մայիսի, 2007թ., էջ 4:
4. Michael Bothe, Boundaries, նշվ. աշխ., էջ 448:

5. Shi'u` Report [Pursuant to H. Res. 346 and H. Res. 438], Communist Takeover and Occupation of Armenia, 83d Congress 2d Session, House of Representatives, Rept. 2684, Part 8, December 31, 1954.
6. United States National Archives, Records of the Department of State Relating to Political Relations between Armenia and other States, 1910-1929, 760J.6715/60-760J.90C/7
7. Հիշատակելի է, որ Միացյալ Նահանգները երբեք չի ճանաչել Վրաստանի և Ադրբեջանի առաջին հանրապետությունների անկախությունը, ի տարբերություն Հայաստանի առաջին Հանրապետության անկախության, որը ճանաչել է 1920թ. ապրիլի 23-ին: Սա պայմանավորված էր նաև այն հանգամանքով, որ նշյալ երկու պետությունները, նկրտումներ ունենալով հայաբնակ տարածքների նկատմամբ, ոտնահարում էին ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի հռչակած ինքնորոշման սկզբունքը (Papers Relating to Foreign Relations of the United States, 1920, v. III, Washington, 1936. p. 778; H. Lauterpacht, Recognition in International Law, Cambridge, 1947, p. 11):
8. Նկատի ունի ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճիռը, որն ուժի մեջ է մտել 1920 թ. նոյեմբերի 22-ին:
9. Treaty of Peace with Turkey, Signed at Sevres, August 10, 1920. London, Printed and Published by His Majesty's Stationery Office, 1920, p. 26.
10. Ian Brownlie, Principles of Public International Law, 5th ed., Oxford, 2001, Glossary.

*առաջին անգամ տպագրվել է ԱԶԳ օրաթերթում,
28 հունիսի, 2007թ., էջ 4*

*տե՛ս նաև FRANCE-ARMENIE ամսագրում,
№ 300, 16-31 հուլիսի, 2007թ., էջ 21-22*

Նախկին սովետական հանրապետությունների ճանաչման, ինքնորոշման և սահմանների մասին

Հայ քաղաքական մտքի դաշտում կան բազմաթիվ դեգերող մոլորություններ, այսինքն՝ շատերը կրկնում են մտքեր, որոնք բնավ չեն համապատասխանում իրականությանը և որևէ հիմք չունեն միջազգային իրավունքի մեջ: Դրանցից է այն թյուրըմբռնումը՝ իբր Եվրամիության պետությունները, 1991-1992թթ. ճանաչելով նախկին Սովետական Միության հանրապետությունների անկախությունը, միաժամանակ ճանաչել են այդ պետությունների սահմանների անձեռնմխելիությունը:

1991թ. դեկտեմբերի 16-ին Բրյուսելում Եվրոպական համայնքի (European Community)¹ երկրների արտաքին գործոց նախարարները Եվրոպական խորհրդի խնդրանքով² իրենց դիրքորոշումն ամփոփեցին անկախության ուղին բռնած երկրների ճանաչման գործընթացի նկատմամբ մեկ միասնական հռչակագրի մեջ: Փաստաթուղթը պաշտոնապես անվանված է. *Հռչակագիր «Արևելյան Եվրոպայում և Սովետական Միության [տարածքում] նոր պետությունների ճանաչման ուղեցիկների» վերաբերյալ (Declaration on the “Guidelines on the Recognition of New States in Eastern Europe and in the Soviet Union”)*: Միջազգային իրավունքում հռչակագիրը (*declaration*)³, անկախ ստորագրողների քանակից, միակողմանի փաստաթուղթ է (*unilateral act*): Այսինքն, այն քաղաքական դիրքորոշման արտահայտում է, սակայն կատարման համար պարտադիր իրավական փաստաթուղթ չէ, թեև կարող է լինել նաև այդպիսին⁴: Քանի որ Եվրախորհուրդը, որի խնդրանքով մշակվել է միասնական դիրքորոշումը, ինչպես նաև արտգործնախարարների հավաքը, պաշտոնական կառույցներ չեն (որովհետև նրանց գոյությունն ու լիազորությունները ամրագրված չեն եվրամիութենական պայմանագրերի մեջ), ուստի նշյալ փաստաթուղթը առավելապես քաղաքական բնույթի է, քան իրավական:

Հռչակագրի նախաբանում արտահայտված է փաստաթղթի էությունը. «Համայնքը և նրա անդամ երկրները վերահաստատում

են իրենց հավատարմությունը Հելսինկիի եզրափակիչ փաստաթղթի և Փարիզի ուխտի սկզբունքների նկատմամբ, հատկապես՝ ինքնորոշման»։ (The Community and its Member States confirm their attachment to the principles of the Helsinki Final Act and the Charter of Paris, in particular the principle of the self-determination.)

Այստեղ առկա է կարևոր մի քանի հանգամանք.

ա) վերոնշյալ փաստաթղթի հիմքը հավատարմությունն է ազգերի ինքնորոշման սկզբունքի նկատմամբ, քանի որ նախաբանում առանձնանշված է միայն այդ սկզբունքը;

բ) անկախացող երկրների ճանաչումը ինքնորոշման սկզբունքի իրականացում է;

գ) անկախության ճանաչումը պայմանավորված չէ տվյալ երկրի մեջ գոյություն ունեցող վարչական միավորի կարգավիճակով կամ ընդհանրապես որևէ վարչական միավորի առկայությամբ կամ սահմաններով;

դ) չկա որևէ հիշատակում, այսպես կոչված, տարածքային ամբողջականության մասին:

Մինչև փաստաթղթի կետերի վերլուծմանն անցնելը, անհրաժեշտ են համարում շեշտել միջազգային իրավունքի մի խիստ կարևոր սկզբունք. փաստաթղթերը գործում են ամբողջության մեջ և նրա կետերը փոխկապակցված են: Այսինքն, եթե կողմերից մեկը չի իրականացնում պարտավորություն պարունակող որևէ դրույթ, դրանով նա խաթարում է փաստաթղթի ողջ էությունը և չի կարող վկայակոչել տվյալ փաստաթղթի իր համար իրավունքները պարունակող կետերը: Կարճ ասած՝ **ամեն ինչ կամ ոչինչ**:

Հռչակագրի առաջին կետն իր «հարգանքն է հայտնում ՄԱԿ-ի կանոնակարգի հիմնադրույթների, Հելսինկիի եզրափակիչ փաստաթղթի և Փարիզի ուխտի պարտավորությունների նկատմամբ, հատկապես նրանց, որոնք վերաբերում են օրենքի իշխանությանը, ժողովրդավարությանը և մարդկային իրավունքներին» (especially with regard to the rule of law, democracy and human rights):

Ակնհայտ է՝ այստեղ առանձնանշված են **օրենքի իշխանությունը, ժողովրդավարությունը և մարդկային իրավունքները**:

Սկզբունքներ, որոնք ո՛չ անկախացումից առաջ, և ո՛չ էլ անկախացումից հետո երբեք չեն հարգվել Ադրբեջանի կողմից, հատկապես այդ երկրի հայազգի քաղաքացիների նկատմամբ:

Երկրորդ կետը խոսում է «*էթնիկ, ազգային խմբերի և փոքրամասնությունների իրավունքների երաշխավորման մասին*» (*guarantees for the rights of ethnic and national groups and minorities*): Իրավունքներ, որոնք դարձյալ երբեք չեն հարգվել Ադրբեջանի կողմից:

Միայն երրորդ կետում կա հիշատակում «*բոլոր սահմանների անձեռնմխելիության հարգանքի*» (*respect for the inviolability of all frontiers*) մասին և միաժամանակ նշված է դրանց փոփոխելու հնարավորությունը՝ «*խաղաղ ճանապարհով և ընդհանուր համաձայնությամբ*» (*by peaceful means and by common agreement*): Քանի որ, ինչպես նշեցինք վերը, Հռչակագիրը խարսխված է Հելսինկիի եզրափակիչ փաստաթղթի, Փարիզի ուխտի, ինչպես նաև ՍԱԿ-ի կանոնակարգի, սկզբունքների վրա, ուստի «*սահմանների անձեռնմխելիություն*» հասկացությունը պետք է մեկնաբանվի ըստ այդ փաստաթղթերի: Իսկ այդ փաստաթղթերում խոսքը բնավ էլ չի գնում սահմանների բացարձակ անձեռնմխելիության մասին, այլ «*ուժի կամ ուժի սպառնալիքի*» կիրառմամբ դրանց փոփոխելիության անընդունելիության մասին⁵: Եվրամիության երկրները խնդրո առարկա Հռչակագրով, հաշվի առնելով, որ ՍՍՀՄ կազմալուծումով առաջանում էր իրավական վակուում, մինչև անկախացող երկրների կողմից վերոհիշյալ հիմնարար փաստաթղթերի ստորագրումը, այդ փաստաթղթերի երաշխիքները տարածում էին անկախացող երկրների վրա, որպեսզի վերջիններիս գերծ պահեին արտաքին զինված հարձակումներից: Օրինակ, Աֆղանստանը չհարձակվեր Թուրքմենստանի վրա, կամ Ֆինլանդիան Ռուսաստանի: Այստեղ անհրաժեշտ է ընդգծել, որ «*սահման*» ասածը այն է, ինչ սովետական իրականության մեջ հիշատակվում էր և ամրագրված էր օրենքով որպես «*պետական սահման*» (*государственная граница*): Այսինքն կար սովետա-թուրքական սահման և չկար հայ-թուրքական սահման, կար սովետա-լեհական սահման և չկար

բելառուս-լեհական սահման: Հետևաբար չկար, միջազգային իրավունքի առումով և ոչ թե կենցաղային ընկալմամբ, հայ-ադրբեջանական սահման, կամ բելառուս-ռուսական սահման:

Ամփոփելով Եվրամիության կողմից նախկին սովետական և արևելաեվրոպական մի շարք երկրների ճանաչման ուղենիշների քննությունը՝ կարելի է անել հետևյալ եզրակացությունները.

1. Փաստաթղթի հիմքն ինքնորոշման սկզբունքն է, որը չի սահմանափակված միայն կամ որևէ միութենական հանրապետություններով կամ վարչական այլ միավորով:

2. Հաջորդականության սկզբունքի կիրառմամբ օրենքի իշխանությանը, ժողովրդավարությանը և մարդկային իրավունքներին մնացած բոլոր սկզբունքների նկատմամբ տրվել է առաջնային կարգավիճակ:

3. Որպես երկրորդ հիմնական սկզբունք Հռչակագիրը վկայակոչում է էթնիկ, ազգային խմբերի և փոքրամասնությունների իրավունքների երաշխիքը:

4. Ուղենիշների մեջ չկա ճանաչվող կազմավորումների սահմանների բացարձակ անձեռնմխելիության սկզբունք, այլ հարգանք այդ սկզբունքի նկատմամբ և սահմանների փոփոխման հնարավորություն խաղաղ ճանապարհով և ընդհանուր համաձայնությամբ:

Հետևաբար.

ա) «սահման» ասածը և «սահմանների անձեռնմխելիություն» ասածը պետք է հասկանալ միջազգային իրավունքի տեսանկյունով և չցուցաբերել կամայական մոտեցում;

բ) Ադրբեջանը, որը կոպտորեն, բազմիցս և հետևողականորեն ոտնահարել և ոտնահարում է Հռչակագրի մեջ ամրագրված սկզբունքները, չի կարող վկայակոչել նույն փաստաթղթի միայն մի կետը և փորձ անել իր իրավունքները պաշտպանել դրանով:

Հղումներ և ծանոթագրություն

1. Եվրոպական Միության անվանումը մինչև 1993թ.-ի նոյեմբերի 1-ը:
2. Չլիոթել Եվրոպայի խորհրդի (Council of Europe) կամ Եվրոպական Միության խորհրդի (Council of the European Union) հետ: Եվրոպական խորհուրդը, որը հաճախ վկայվում է

որպես Եվրոպական զագաթաժողով (European Summit) գումարվում է տարին առնվազն չորս անգամ և ներառում է Եվրամիության անդամ երկրների պետության կամ կառավարության ղեկավարներին և Եվրահանձնաժողովի նախագահին (President of European Commission):

3. C.-A. Fleischhauer, Declaration, in: R. Bernhardt (ed.), Encyclopedia of Public International Law, Amsterdam, v. I (1992) p. 971.
4. W. Fiedler, Unilateral Acts in International Law, in: R. Bernhardt (ed.), Encyclopedia of Public International Law, Amsterdam, v. IV (2000) p. 1018.
5. Այդ մասին ավելի հանգամանալից տես՝ Արա Պապյան, Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը ժողովրդների ինքնորոշման և տարածքային ամբողջականության լույսի ներքո, Ազգ, 22 մայիսի, 2007թ., էջ 4; Արա Պապյան, Կրկին Հայաստանի չանրապետության սահմանների և Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման մասին, Ազգ, 28 հունիսի, 2007թ., էջ 4:

Հ ա յ տ ա ռ ա ը ո թ յ ո Ւ Ն

միջազգային իրավունքով Հայաստանի Հանրապետությանը վերապահված տարածքի մի մասի վրա Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության վերականգնման վերաբերյալ

1. Գեկավարվելով Հայաստանի Հանրապետության, Ադրբեջանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության նախագահների կողմից ստորագրված Մոսկվայի հռչակագրի (2 նոյեմբերի, 2008թ.) այն հիմնադրույթով, որ Լեռնային Դարաբաղի հակամարտության քաղաքական լուծումը դիտարկվում է *«միջազգային իրավունքի նորմերի ու սկզբունքների և այդ շրջանակներում ընդունված որոշումների ու փաստաթղթերի հիման վրա»*,
2. համոզված լինելով, որ միջազգային իրավունքով Հայաստանի Հանրապետությանը հատկացված կամ վերապահված տարածքի վրա ՀՀ ռոտնահարված ինքնիշխանության վերականգնումն է միայն հայոց պետականության հարատևման և հայ ժողովրդի գոյատևման երաշխիքը,
3. վստահ լինելով, որ քաղաքացիների անվտանգության ապահովումը, երկրի տնտեսական զարգացման ու բարեկեցության համար նպաստավոր պայմանների ստեղծումը հնարավոր է միայն որոշակի կենսապայմանների առկայության դեպքում,
4. նպատակ ունենալով ողջ տարածաշրջանում հաստատել հարատև ու կայուն խաղաղություն, որը կարող է խարսխված լինել միայն արդարության և Հայաստանի Հանրապետության հանդեպ միջազգային կազմակերպությունների ու առանձին պետությունների կողմից ստանձնած պարտավորությունների լիակատար իրականացման վրա,

5. ի մտի ունենալով, որ որևէ սահման անվավեր և անօրինական է, եթե այն կայացել կամ ամրագրվել է անվավեր և անօրինական պայմանագրի կամ նման այլ փաստաթղթի հիման վրա և, ըստ այդմ, նրա վրա չեն կարող տարածվել միջազգային իրավունքի սկզբունքները, այդ թվում նաև, այսպես կոչված, սահմանների անձեռնմխելիության սկզբունքը,
6. հավաստելով, որ *«սզգերի միջև իրավահավասարության և ժողովուրդների ինքնորոշման վրա հիմնված քարեկամական հարաբերությունների զարգացումը»* որպես նպատակ ներառված է ՄԱԿ-ի կանոնադրության մեջ (հոդված 1, § 2),
7. վկայակոչելով, որ ըստ *ՄԱԿ-ի կանոնադրությունից բխող միջազգային իրավունքի սկզբունքների, պետությունների միջև քարեկամական հարաբերությունների և համագործակցության մասին հռչակագրի* (17 հոկտեմբերի, 1970թ.) *«Յուրաքանչյուր պետություն պարտավորված է միասնական և անհատական գործունեությամբ աջակցել իրավահավասարության և ժողովուրդների ինքնորոշման սկզբունքի իրականացմանը»*,
8. առանձնանշելով, որ Ադրբեջանական Հանրապետությունը հայոց պետության դեմ իրականացնելով լիակատար շրջափակում, և ի հետևանք Հայկական ՄՍՀ և հետագայում Հայաստանի Հանրապետության դեմ իրականացրած չիրահրված և չարանենգ նախահարձակումների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքի մի մասի զավթման պատճառով (Արծվաշեն բնակավայրը), այսինքն *«պետության տարածքային ամբողջականության և քաղաքական անկախության դեմ ուժի սպառնալիքից կամ ուժի կիրառումից»* ձեռնպահ մնալու սկզբունքի ոտնահարումը ի չիք է դարձրել վերոհիշյալ սկզբունքի իրավունքը Ադրբեջանական Հանրապետության համար,
9. նշելով, որ Արցախը (Գաշտային և Լեռնային Գարաբաղը) և Նախիջևանը Ադրբեջանական ՄՍՀ ենթակայության ներքո են հայտնվել միջազգային իրավունքի և ներպետական օրենսդրության կոպիտ խախտումներով, համապատասխանաբար Ռու-

սաստանի կոմունիստական (բանվորական) կուսակցության կենտրոնական կոմիտեի Կովկասյան բյուրոյի 1921թ. հուլիսի 5-ի որոշմամբ և Մոսկվայի (16 մարտի, 1921թ.) ու նրանից ածանցվող Կարսի (13 հոկտեմբերի, 1921թ.) անվավեր ու անօրինական պայմանագրերի 3-րդ և 5-րդ հոդվածների հիման վրա,

10. վկայաբերելով Պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի 1969թ. կոնվենցիայի 53-րդ հոդվածը, որով պայմանագիրն անվավեր է համարվում, եթե կնքման պահին հակասել է միջազգային իրավունքի անբեկանելի սկզբունքի՝ *jus cogens-ի*,
11. ճանաչելով վերոհիշյալ Մոսկվայի (16 մարտի, 1921թ.) և Կարսի (13 հոկտեմբերի, 1921թ.) պայմանագրերի անվավերությունը ստորագրման պահից, քանի որ երկուսն էլ կնքվել են միջազգային իրավունքի անբեկանելի սկզբունքների՝ *jus cogens-ների*, բացահայտ, բազմակի և կոպիտ խախտումներով,
12. առաջնորդվելով ՄԱԿ-ի իրավանախորդի՝ Ազգերի լիգայի, Հայաստանի սահմանները որոշող Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի անդամությամբ հանձնաժողովի զեկույցի առաջարկներով (24 փետրվարի, 1920թ.), որը նախատեսում էր Հարավային Կովկասում սահմանազատումն իրականացնել ազգային տեղաբաշխման սկզբունքով,
13. ընդունելով, որ Հարավային Կովկասում սահմանազատումն ու սահմանանշումը, ըստ Սևրի պայմանագրի (10 օգոստոսի, 1920թ.) 92-րդ հոդվածի, վերապահված է Գլխավոր դաշնակից ուժերին (Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, ԱՄՆ և Իտալիա), որոնք էլ, իրենց հերթին, պետք է ղեկավարվեն Հայաստանի սահմանները որոշող վերոնշյալ հանձնաժողովի առաջադրած ազգային տեղաբաշխման սկզբունքով՝ հիմք ընդունելով հայ-թուրքական սահմանը որոշելու պահին (22 նոյեմբերի, 1920թ.) եղած ժողովրդագրական իրավիճակը,
14. կարևորելով, որ Ամերիկայի Միացյալ Նահանգները ճանաչել են նշյալ սկզբունքը, ներառելով այն ընդգրկող փաստաթուղթն

ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռի Ամբողջական գեկույցի մեջ (22 նոյեմբերի, 1920թ.), որպես 1-ին հավելվածի 2-րդ փաստաթուղթ,

15. գիտակցելով, որ Սևրի պայմանագիրը (10 օգոստոսի, 1920թ.) ստորագրվել է *«քարծր պայմանավորվող կողմերի»* միջև, հետևաբար, ըստ *Վիեննայի Պայմանագրերի մասին կոնվենցիայի* (1969թ.) 2-րդ հոդվածի 6-րդ կետի, և *Պայմանագրերի նկատմամբ պետությունների իրավահաջորդության մասին Վիեննայի միջազգայնագրի* (1978թ.) 2-րդ հոդվածի 11-րդ կետի, կողմերը պարտավորվում են պայմանագիրն ընդունել որպես կատարման համար պարտադիր փաստաթուղթ, անկախ պայմանագրի ուժի մեջ մտած կամ չմտած լինելուց,
16. նկատի ունենալով, որ Ադրբեջանի Հանրապետությունը *Պետական անկախության վերականգնման սահմանադրական ակտով* (18 հոկտեմբերի, 1991թ.) իրեն հայտարարել է Ադրբեջանի առաջին հանրապետության (1918-1920թթ.) ուղղակի իրավահաջորդը, ըստ այդմ չեղյալ է հայտարարել միջևիսկ Լեռնային Ղարաբաղի իր հետ ունեցած վարչական կապը, որը գոյություն է ունեցել Ադրբեջանական ՍՍՀ գոյության մի ժամանակահատվածում (1921-1991թթ.),
17. հաշվի առնելով, որ 1991թ.-ի դեկտեմբերի 16-ին Բյուրսելում Եվրոպական համայնքի (ներկայումս՝ Եվրոպական Միություն) երկրների արտաքին գործերի նախարարները *«Արևելյան Եվրոպայում և Սովետական Միության [տարածքում] նոր պետությունների ճանաչման ուղեկիշների»* վերաբերյալ հռչակագրով ընդունել են սահմանների փոփոխելիության հնարավորությունը *«խաղաղ միջոցներով և ընդհանուր համաձայնությամբ»*,
18. շեշտելով, որ նույն հռչակագրով *«բոլոր սահմանների անձեռնմխելիության»* նկատմամբ հարգանքը պայմանավորված է եղել *«օրենքի իշխանության, ժողովրդավարության և մարդկային իրավունքների»* հարգանքով, ինչպես նաև *«էթնիկ, ազգային խմբերի և փոքրամասնությունների իրավունքների երաշխա-*

վորմամբ», որոնցից և ոչ մեկը չի իրականացվել աղբբեջանական պետության կողմից,

19. հիշելով, որ 1918-1920թթ. և 1991-1994թթ. Աղբբեջանական Հանրապետությունն իր հայազգի քաղաքացիների և բնակիչների նկատմամբ իրականացրել է ռազմական միջոցներով էթնիկ գտման, իսկ 1920-1991թթ.՝ ազգային խտրականության բիրտ քաղաքականություն,
20. չմոռանալով նաև, որ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի կամքի ազատ և խաղաղ դրսևորմանը (ցույցեր, հանրահավաքներ, հանրաքվեներ, հայցադիմումներ, կոչեր և այլն) Աղբբեջանը հակադրել է բռնի ուժ, խաղաղ բնակչության դեմ ներքին գորքերի օգտագործմամբ ձեռնարկել է ոչ համարժեք պատժիչ գործողություններ, պետականորեն կազմակերպել է Աղբբեջանի հայ բնակիչների ջարդեր (Սումգայիթ, Բաքու, Կիրովաբաղ և այլն), վարձկանների օգտագործմամբ (ուկրաինացիներ, աֆղաններ, ռուսներ և այլն) խաղաղ բնակչության դեմ սանձազերծել է անողորք պատերազմ և ի վերջո խայտառակ ռազմական պարտություն է կրել,
21. ընդգծելով այն հանգամանքը, որ Աղբբեջանական ՍՍՀ-ն ՍՍՀՄ-ից անկախացել է ՍՍՀՄ այդ ժամանակ գործող օրենսդրության ոտնահարումով, մասնավորապես *ՍՍՀՄ-ից սովետական հանրապետությունների անջատման մասին օրենքի* (3 ապրիլի, 1990թ.) 3-րդ հոդվածի խախտումով, որով ինքնավար միավորներին տրվում էր առանձին հանրաքվեով իրենց ճակատագիրը տնօրինելու իրավունք,

Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովը, գործելով իր իրավասությունների շրջանակում (ՀՀ Սահմանադրություն, հոդված 62), սույն հայտարարությամբ դիմում է Հայաստանի Հանրապետության նախագահին, որպես Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության երաշխավորի (ՀՀ Սահմանադրություն, հոդված 49), քայլ անել Հայաստանի

Հանրապետության տարածքային ամբողջականության վերականգնման ուղղությամբ՝ վերականգնել Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունը Լեռնային Ղարաբաղի Հարապետության կողմից վերահսկվող ողջ տարածքի վրա և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը հռչակել որպես Հայաստանի Հանրապետության Արցախի մարզ:

Միևնույն ժամանակ Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովը դիմում է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին, առանձին երկրների օրենսդիր և գործադիր իշխանություններին, մասնավորապես այն երկրներին, որոնք Հայաստանի Հանրապետության նկատմամբ ունեն միջազգային իրավունքով ամրագրված պարտավորություններ, անել ամեն ինչ՝ վերականգնելու ՀՀ ոտնահարված ինքնիշխանությունը միջազգային իրավունքի, միջազգային առաջարկների և պարտավորությունների կիրառման պարագային աներկբայորեն ՀՀ մասը հանդիսացող այն տարածքների նկատմամբ, որոնք ստալինա-սովետական վարչատարածքային բաժանման և ռուս-թուրքական քաղաքական գործարքի հետևանքով հայտնվել են Ադրբեջանական ՍՍՀ վարչական ենթակայության ներքո և ներկայումս էլ շարունակվում են ռազմակարված մնալ Ադրբեջանական Հանրապետության կողմից:

կատարված է անկախ փորձագետ
Արա Պապյանի կողմից,
19 նոյեմբերի, 2008թ.
Երևան, Հայաստան

Заявление о восстановлении суверенитета Республики Армения над частью территории, отведенной для Республики Армения согласно международному праву

1. Руководствуясь тем положением подписанной президентами Республики Армения, Азербайджанской Республики и Российской Федерации в Москве (2 ноября, 2008г.) декларации, что политическое разрешение Нагорно-Карабахского конфликта рассматривается *«на основе международного права и норм и принятых в данной рамке резолюций и документов»*,
2. Будучи уверенными, что только восстановление пограничного суверенитета Республики Армения над территорией, принадлежащей или отведенной Республике Армения согласно международному праву, является гарантией сохранения Армянской государственности и выживания армянского народа,
3. Будучи убежденными, что обеспечение безопасности граждан, создание условий, способствующих экономическому развитию страны и благосостоянию граждан, возможно только при наличии определенных жизненных условий,
4. Имея целью установление длительного мира и стабильности в регионе, которые могут основываться только на справедливости и реализации взятых на себя международными организациями и отдельными государствами обязательств по отношению к Республике Армения,
5. Имея ввиду, что любая граница является недействительной и незаконной, если она состоялась или была определена на основе недействительных и незаконных договоренностей, на которые не могут распространяться принципы международного права, в том числе и, так называемый, «принцип нерушимости границ»,

6. Уверяя, что «развитие дружественных отношений, основанных на равноправии и самоопределении народов» включено в качестве цели в Конституции ООН (статья 1, § 2),
7. Ссылаясь на то, что согласно принципам международного права, исходящих из Конституции ООН, а также Декларации о сотрудничестве и дружественных отношениях между государствами (17 октября, 1970г.) «Каждая страна обязана совместной и индивидуальной деятельностью содействовать реализации принципа равноправия и самоопределения народов»,
8. Особо отмечая факт полной блокады армянского государства Азербайджанской Республикой, злобных нападок на Армянскую ССР и позже на Республику Армения, а также факт оккупации части Республики Армения (поселение Арцвашен), т.е. нарушение принципов «территориальной целостности государства и отказа от угрозы или применения силы против политической независимости» отменило право Азербайджана на указанные принципы,
9. Подтверждая, что Арцах (Нагорный и Равнинный Карабах) и Нахиджеван оказались в административном подчинении АзССР с грубыми нарушениями международного права и внутригосударственного законодательства, соответственно решением Кавказского бюро центрального комитета коммунистической (рабочей) партии России от 5-го июля и на основе статей 3 и 5, производных от него недействительных и незаконных Московского (16 марта, 1921г.) и Карского (13 октября, 1921г.) договоров,
10. Ссылаясь на статью 53 Венской конвенции о праве о Договорах (1969г.), согласно которой договор считается незаконным, если на момент его заключения он противоречил хотя бы одному *jus cogens*-у – нерушимому принципу международного права,
11. Признавая недействительность вышеупомянутых Московского (16 марта, 1921г.) и Карского (13 октября, 1921г.) договоров с момента их подписания, поскольку оба эти договора были заключены с неприкрытыми, многочисленными и грубыми нарушениями *jus cogens*-ов – нерушимых принципов международного права,

12. Руководствуясь предложениями доклада (24 февраля, 1920г.), определяющих границы Армении, комиссии правопредшественника ООН Лиги Наций с участием Великобритании, Франции, Италии и Японии, предполагавшими реализовать делимитацию границ в Южном Кавказе в соответствии с принципом этнического распределения населения,
13. Принимая, что делимитация и демаркация границ в Южном Кавказе, согласно статье 92 Севрского договора (10 августа, 1920г.), закреплена за Главными союзными силами (Великобритания, Франция, США и Италия), которые, в свою очередь, должны были руководствоваться установленным вышеупомянутой комиссией принципом этнического распределения, принимая за основу существовавшую на момент определения армяно-турецкой границы (22 ноября, 1920г.) этнотерриториальную ситуацию,
14. Придавая важность тому обстоятельству, что США признали упомянутый принцип, включив его в *Полный доклад арбитражного решения президента США Вудро Вильсона* (22 ноября, 1920г.) в качестве Приложения I, документ №2,
15. Осознавая, что Севрский договор (10 августа, 1920г.) был подписан между «высокими договаривающимися сторонами», соответственно, согласно пункту 6 статьи 2 международной Венской конвенции о Договорах (1969г.) и пункту 11 статьи 2 Венской конвенции о Правопреемственности государств по отношению к договорам (1978г.), стороны обязываются принять договор в качестве обязательного для исполнения документа, вне зависимости от его вхождения или не вхождения в силу,
16. Принимая во внимание, что Азербайджанская Республика конституционным актом о восстановлении государственной независимости (18 октября, 1991г.) объявила себя прямой правопреемницей первой Азербайджанской Республики (1918-1920гг.), чем денонсировала свою административную связь с Нагорным Карабахом, существовавшую в одном из периодов бытности Азербайджанской ССР,

17. Учитывая, что 16-го декабря 1991 года в Брюсселе министры иностранных дел Европейского Сообщества (ныне Европейского Союза) декларацией о *«Руководящих принципах по признанию новых государств в Восточной Европе и на территории Советского Союза»* признали возможность изменения границ *«мирными средствами и всеобщим согласием»*,
18. Подчеркивая, что декларация привязывает уважение по отношению к «нерушимости всех границ» к уважению «власти закона, демократии и правам человека», равно как и к «обеспечению гарантий прав этнических и национальных групп и меньшинств», что ни коим образом не было реализовано азербайджанским государством,
19. Неизменно помня, что в 1918-1920 и в 1991-1994 годах Азербайджанская Республика по отношению к своим гражданам и жителям армянской национальности военными методами осуществляла политику этнических чисток, а в 1920-1991 годах политику грубой этнической дискриминации,
20. Не забывая, что свободному и мирному волеизъявлению народа Нагорного Карабаха (митинги, демонстрации, прошения, воззвания и т.д.) Азербайджан противопоставил грубую силу, с использованием внутренних войск против мирного населения предпринял непропорциональные карательные операции, на государственном уровне организовал резню армян Азербайджана (Сумгаит, Баку, Кировабад и т.д.), с привлечением иностранных наемников (украинцы, афганцы, пакистанцы, россияне и др.) развязал против мирного населения беспощадную войну и в последствии потерпел сокрушительное поражение,
21. Обращая внимание на то обстоятельство, что Азербайджанская ССР обрела независимость от СССР с поправками действовавшего тогда законодательства, в частности статьи 3 «Закона о выходе советских республик из состава СССР» (3 апреля, 1990г.), согласно которой автономным образованиям предоставлялось право отдельным референдумом решать собственную судьбу,

Национальное Собрание Республики Армения, действуя в рамках своей компетенции (статья 62 Конституции РА), обращается к президенту Республики Армения, как к гаранту территориальной целостности Республики Армения (статья 49 Конституции РА), предпринять шаг по восстановлению территориальной целостности Республики Армения, восстановив суверенитет Республики Армения над всей территорией, контролируемой Нагорно-Карабахской Республикой и провозгласить Нагорно-Карабахскую Республику Арцахским марзом Республики Армения.

В то же время Национальное Собрание Республики Армения обращается к Совету Безопасности ООН, к законодательным и исполнительным властям отдельных стран, в частности государств, имеющих по отношению к Армении закрепленные международным правом обязательства, предпринять все шаги для восстановления пограничного суверенитета Республики Армения на территориях, которые в случае претворения в жизнь международного права, без всякого сомнения должны являться частью Республики Армения и которые в следствии советско-сталинского территориально-административного деления и большевицко-турецкого политического сговора оказались в административном подчинении Азербайджанской ССР и поныне продолжают оставаться оккупированными Азербайджанской Республикой.

Ереван, 19 ноября, 2008г.

D e c l a r a t i o n
for reclaiming the sovereignty of the Republic of Armenia
on part of the territory stipulated to the Republic of Armenia
by international law

1. Governed by the stipulation stated in the declaration, signed by the Presidents of the Republic of Armenia, the Azerbaijani Republic and the Russian Federation in Moscow on November 2nd, 2008, that the political solution of the Nagorno-Karabakh conflict is considered *“on the basis of international law and norms, and decisions and documents accepted within this framework”*;
2. Being convinced that only upon reclaiming the disrupted sovereignty of the Republic of Armenia over the territory, which is provided for or stipulated by international law to the Republic of Armenia, is the guarantee of the Armenian statehood’s persistence and survival of the Armenian nation;
3. Being certain that the ensuring our citizens’ security, ensuring and establishing favorable conditions for the country’s economic development and welfare are possible only in the presence of reliable essential conditions;
4. Having for an object seeking the establishment of long-term and permanent peace in the entire region, which can be anchored only on justice and the full realization of obligations and the engagements of international organizations and states upon the Republic of Armenia;
5. Considering that any border is illegal and void if it has taken place or been approved on the basis of an illegal and void treaty or any other such international instrument, and thus the principles of international law, including the principle of inviolability of borders, cannot be applied on that border;

6. Evoking that the purpose “*to develop friendly relations among the nations based on respect for the principle of equal rights and self-determination of peoples*” is enshrined in the Charter of the UNO (Article 1, § 2);
7. Reaffirming, in accordance with the *Declaration on Principles of International Law, Friendly Relations and Co-operation among States in accordance with the Charter of the United Nations (October 24, 1970)*, that “*Every State has the duty to promote, through joint and separate action, realization of the principle of equal rights and self-determination of peoples*”;
8. Recalling that the Azerbaijani Republic by imposing total blockade against the Armenian state and by virtue of unprovoked and malicious attacks first against the territory of the Armenian Soviet Socialist Republic and the Republic of Armenia later on, and by occupying part of the territory of the Republic of Armenia (township Artsvashen) i.e. violating the principle of refraining “*from the treat or use of force against the territorial integrity and political independence of any state,*” Azerbaijani Republic has vanished the right to render the above mentioned principle regarding to Azerbaijani Republic;
9. Observing that Artsakh (Upper and Lower Karabagh) and Nakhichevan were arbitrarily placed under the control of the Azerbaijani SSR with gross infringements of international law and national legislation, i.e. by the decision of the Caucasian bureau of the Central Committee of Russia’s Communist party on July 5th, 1921, and on the basis of Articles 3 and 5 of the illegal and void Treaties of Moscow (March 16, 1921) and Kars (October 13, 1921), correspondingly;
10. Referring to the Article 53 of the Vienna Convention on the Law of Treaties (1969), according to which “*The treaty is void if, at the time of its conclusion, it conflicts with a peremptory norm (“jus cogens”) of general international law*”;
11. Noting the illegality of the above-mentioned Moscow (March 16, 1921) and Kars (October 13, 1921) Treaties from the point of their inception, as they have having been concluded with evident, multiple

and gross infringements of peremptory norms (“*jus cogens*”) of general international law;

12. Guided by the proposal of the League of Nations’ (predecessor of the UNO) *Commission for the Delimitation of the Boundaries of Armenia* (Commission members: – Great Britain, France, Italy and Japan; February 24, 1920), which envisaged the realization of border delimitation in the Southern Caucasus “*taking into account, in principle, of ethnographical data*”;
13. Recognizing that responsibility for the delimitation and demarcation in the Southern Caucasus was and is granted to the Principal Allied Powers: Great Britain, France, USA and Italy (Article 92 of the Treaty of Sevres, August 10, 1920), which, for their part, must follow the above-mentioned Commission’s principle of ethnographical data, on the basis of the demographical situation at the time of delimitation of the Armenian-Turkish boundary (November 22, 1920);
14. Underscoring the fact that the United States of America has recognized this principle, and incorporated the document containing it into the *Full Report of the Committee upon the Arbitration of the Boundary between Turkey & Armenia* (Done by Woodrow Wilson, the President of the United States on November 22nd, 1920) as Annex I, Document No 2;
15. Realizing that the Treaty of Sevres (August 10, 1920) was signed between *High Contracting Parties*, therefore the parties having consented to be bound by the treaty, whether or not the treaty has entered into force, according to the Article 2, § 6 of the Vienna Convention on the Law of Treaties (1969) and Article 2, § 11 of the Vienna Convention on Succession of States in respect of Treaties (1978);
16. Taking into account that the Azerbaijani Republic proclaimed itself as a direct legal successor of the first republic of Azerbaijan (1918-1920) by *The Constitutional Act on Restoration of the State Independence of the Azerbaijani Republic* (October 18, 1991) and thereby invalidated even its’ administrative connection with

- Nagorno-Karabakh, which had existed during a period of existence the era of the Azerbaijani Soviet Socialist Republic (1921-1991);
17. Knowing that the foreign ministers of the European Community (currently European Union) by the *Declaration on the “Guidelines on the Recognition of New States in Eastern Europe and in the Soviet Union”* (Brussels, 16 Dec 1991) have accepted that the frontiers can be changed “*by peaceful means and by common agreement*”;
 18. Emphasizing that “*the respect for the inviolability of all frontiers*”, which is mentioned in the same *Declaration*, has been due to respect for “*the rule of law, democracy and human rights*”, as well as the “*guarantees for the rights of ethnic and national groups and minorities*”, neither of which has not been complied with the Azerbaijani state;
 19. Keeping in mind that the Azerbaijani Republic's employed arm-twisting repeated application of a policy of ethnic cleansing by military means (1918-1920 and 1991-1994) and discriminatory policy (1920-1991) against its' Armenian citizens and residents;
 20. Unable to forget also that in response to the free and peaceful expression of the will of Nagorno-Karabakh's people (as expressed in peaceful demonstrations, mass-meetings, referendums/polls, applications, appeals etc.), Azerbaijan applied violent force against the peaceful civilian population, has launched indiscriminate penalizing operations by domestic security forces which were brutal and disproportionate in their retaliation against civilians, also organized at the state-level massacres of the Armenian population of Azerbaijan (in Sumgait, Baku, Kirovabad etc.), and levied a merciless war against the peaceful Armenian population using foreign mercenaries (including Ukrainians, Afghans, Russians etc.), and has finally sustained an ignominious military defeat;
 21. Underlining the circumstance that the Azerbaijani Soviet Socialist Republic became independent from the USSR, violating USSR legislation of that time, particularly violating Article 3 of the Law on Secession of Soviet Republics from the USSR (April 3, 1990),

which gave to the autonomous units and ethnic regions the right to choose their fate by a separate referendum;

The National Assembly [Parliament] of the Republic of Armenia, acting within the framework of its authorization (RA Constitution, Article 62), addresses the present Declaration to the President of the Republic of Armenia, as the guarantor of territorial integrity of the Republic of Armenia (RA Constitution, Article 49), to take a step in the direction of reclaiming the territorial integrity of the Republic of Armenia: to reclaim the sovereignty of the Republic of Armenia on the whole territory under the Nagorno-Karabakh Republic's control, and to proclaim the Nagorno-Karabakh Republic as Nagorno-Karabakh marz [region] of the Republic of Armenia.

At the same time, the National Assembly of the Republic of Armenia applies to the UN Security Council, to national legislatures and executive powers of particular countries, especially those having obligations stipulated by international law, to support with every means the reclaiming of the violated sovereignty of the Republic of Armenia on those territories. These territories were surely a part of the Republic of Armenia in case of application of international law and international proposals and obligations and which were placed under the administrative control of the Azerbaijani Soviet Socialist Republic by Stalin's Soviet administrative division, and by the Russian-Turkish political bargain (1921), and which continued to remain occupied by the Azerbaijani Republic until today.

Done by independent expert *Ara Papian*,

at the city of Yerevan, Armenia, on November 19th, 2008.

Հայաստանի Հանրապետության և Վրաստանի սահմանն ըստ միջազգային իրավունքի

Խնդրո առարկա հարցը լուսաբանելու համար պետք է պատասխանենք առնվազն երեք ենթահարցի.

- ա) Ինչպե՞ս է Ջավախքը հայտնվել Վրաստանի վարչական ենթակայության տակ;
- բ) Ինչքանո՞վ է Վրաստանի ենթակայության տակ Ջավախքի ընդգրկումը խարսխված միջազգային իրավունքի վրա; և
- գ) Միջազգային հանրությունն իր լիազոր կառույցների միջոցով ի՞նչ դիրքորոշում է արտահայտել և ի՞նչ սկզբունքներ է մշակել հայ-վրացական սահմանագատման համար:

Նախ՝ ինչպե՞ս Ջավախքը հայտնվեց Վրաստանի վարչական ենթակայության տակ:

1921թ. հուլիսի 7-ին Թիֆլիսում տեղի ունեցավ Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական (քանվորական) Կուսակցության Կովկասյան բյուրոյի պլենումի նիստ, մասնակցությամբ՝ Մտալինի, Օրջոնիկիձեի, Մախարաձեի, Կիրովի, Նարիմանովի, Մյասնիկյանի, Նազարեթյանի՝ ձայնի իրավունքով, և Օրախելաշվիլու, Սվանիձեի, Մռավյանի՝ առանց ձայնի իրավունքի: Օրակարգում դրված էր երկու հարց. 1. Վրաստանին կամ Հայաստանին Լոռվա Չեզոք գոտու¹ միացման մասին: 2. Հայաստանին (*sic!* Հայաստանին) Ախալքալաքի և Խրամի (Ծավկայի) շրջանների միացման մասին:

Առաջին հարցի շուրջ Կավբյուրոյի պլենումը 6 կողմ, 1 ձեռնպահ քվեներով որոշեց Լոռու չեզոք գոտին միացնել Հայաստանի Սովետական [Խորհրդային] Սոցիալիստական Հանրապետությանը: Երկրորդ հարցը որոշվեց փոխանցել Վրաստանի Կոմկուսի կենտրոն, վեջինիցս այդ մասին ստացվելիք եզրակացությունը դնել Կավբյուրոյի հաջորդ նիստի քննարկմանը²: 1921թ. հուլիսի 16-ին տեղի ունեցավ Վրաստանի կոմկուսի կենտրոնի բյուրոյի նիստ՝ Մախարաձեի, Մդիվանու և Օրախելաշվիլու մասնակցությամբ: Նիստում քննարկվեցին վերոհիշյալ երկու հարցերը: Առաջին հարցի

կապակցությամբ, հաշվի առնելով Կապբյուրոյի արդեն կայացված հստակ դիրքորոշումը, որոշվեց համաձայնություն տալ Լոռու Չեզոք գոտու՝ Սովետական Հայաստանին միացմանը: Անրաժեշտ է նշել, որ տվյալ որոշումը կայացնելու պահին Լոռվա Չեզոք գոտին արդեն 5 ամիս՝ 1921 թ. փետրվարի 16-ից, գտնվում էր 11-րդ բանակի հայկական զորամիավորումների վերահսկողության ներքո: Երկրորդ հարցի՝ Ջավախքի, վերաբերյալ ընդունվեց հետևյալ որոշումը. *«Թիֆլիսի հետ Ախալքալաքի շրջանի ունեցած քաղաքական, ինչպես նաև տնտեսական կապերի նկատառումներից ելնելով՝ ընկերներ հայերի առաջարկությունը համարել անընդունելի»*³: Առանձնանշելի է, թե որքանով է սույն ձևակերպումը նման Լեռնային Գարաբաղը Ադրբեջանին հանձնելու Կապբյուրոյի ընդամենը 11 օր առաջ՝ 1921թ. հուլիսի 5-ին, կայացված, որոշմանը:

Ահավասիք, այսպես կոչված իրավական հիմքը, որով Ջավախքը դրվել է Վրաստանի ՍՍՀ ենթակայության ներքո: Հարց է ծագում. Արդյո՞ք վրացի երեք կոմունիստների կարծիքը բավարար իրավական հիմք է՝ որոշելու հայության մի ստվար հատվածի՝ ջավախահայության, ճակատագիրը: Արդյո՞ք երեք կոմունիստների որոշումը բավարար հիմք է տարածքի տիրոջ (title to territory) հստակեցնելու համար: Արդյո՞ք այս երեք կոմունիստների կարծիքը իրավասու էր չեղյալ հայտարարելու Փարիզի խաղաղության վեհաժողովի հատուկ հանձնաժողովի 1920թ. փետրվարի 24-ի հայվրացական և հայ-ադրբեջանական սահմանագատման (delimitation) առաջարկված սկզբունքները: Իհարկե՝ Ո՛Չ:

Անհրաժեշտ է ընդգծել, որ հետսովետական Վրաստանի բոլոր ղեկավարներն ու կառավարությունները միանշանակ բացասական գնահատականներ են տվել Վրաստանում կոմունիստական տիրապետության ժամանակաշրջանին (1921-1991թթ.), մերժել են այն, իրավացիորեն այդ ժամանակաշրջանը համարել օտարերկրյա ռազմական ուժի կողմից վրաց ժողովրդի պետականազրկման, երկրի ապօրինի բռնազավթման (1921թ. փետրվարից), ապա և բռնակցման (1922թ. դեկտեմբերից) տարիներ: Միջազգային իրավունքի

տեսանկյունից միանգամայն օրինաչափ գնահատականներ, քանի որ նույն միջազգային իրավունքի հիմնադրույթներից է, որ զավթիչ վարչախմբի (օկուպացիոն ռեժիմի) գործողությունները չեն կարող և չեն ծնում իրավական հետևանքներ տվյալ երկրի համար, անկախ այն բանից՝ այդ հետևանքները դրական են, թե՛ բացասական:

Սա է վերը նշած մեր երկրորդ հարցի պատասխանը: Վրացկոմկուսի որոշման անօրինականության փաստը ամրապնդվում է նաև այն հանգամանքով, որ ներկայիս Վրաստանի ուղղակի իրավահաջորդությունը Վրաստանի առաջին հանրապետությանը ամրագրված է «*Վրաստանի պետական անկախության վերականգնման ակտով*» (9 ապրիլի, 1991թ.), որն էլ վկայակոչման ճանապարհով ներառված է Վրաստանի գործող սահմանադրության 1-ին հոդվածի 1-ին մասում:

Հիմա անդրադառնանք երրորդ հարցին. Միջազգային հանրության լիազոր կառույցների առաջարկին Հարավային Կովկասի սահմանների վերաբերյալ:

Հարավային Կովկասի երկրների փոխադարձ սահմանների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի սահմանի, հարցերը քննության առարկա են դարձել Փարիզի խաղաղության վեհաժողովում (1919-1920թթ.): Հայաստանի և Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի սահմանների վերաբերյալ համապատասխան զեկույց է ընդունել Հայաստանի սահմանները որոշող հատուկ հանձնաժողովը: Սույն հանձնաժողովի զեկույցի տակ դրված են Ազգերի լիգայի Խորհրդի անդամ երկրների՝ Ֆրանսիայի, Բրիտանական կայսրության, Իտալիայի և Ճապոնիայի, լիազոր ներկայացուցիչների ստորագրությունները: Այս զեկույցը, որը թվագրված է 24 փետրվարի, 1920թ.-ով և վերնագրված է «*Ձեկույց և առաջարկներ՝ Հայաստանի սահմանները որոշող հանձնաժողովի*» (Report and Proposals of the Commission for the Delimitation of the Boundaries of Armenia, 24 February, 1920)⁴ հստակեցրել և ամրագրել է Հայաստանի Հանրապետության սահմանազատման սկզբունքները նրա հյուսիսային հարևանների հետ: Այն մասնավոր-

րապես արձանագրում է. «Ինչ վերաբերում է Հայաստանի պետության և Վրաստանի, ինչպես նաև Ադրբեջանի սահմանին, ապա Հանձնաժողովը գտնում է, որ ներկայումս նախընտրելի է սպասել վերոնշյալ սահմանների հստակեցման վերաբերյալ այնպիսի համաձայնության արդյունքներին, որոնց երեք հանրապետություններն իրենք կհանգեն պայմանագրերի մեջ: Այն դեպքում, եթե սույն հանրապետություններն իրենց սահմանների վերաբերյալ չեն հանգի որևէ համաձայնության, ապա հարցը պետք է փոխանցվի Ազգերի լիգայի իրավաբարությանը, որը կստեղծի միջդաշնակցային Հանձնաժողով՝ տեղում որոշելու վերոնշյալ սահմանները՝ հաշվի առնելով, որպես սկզբունք, ազգագրական տվյալները»:

(As regards the boundary between the State of Armenia and Georgia and Azerbaijan, the Commission considers that, it is advisable for the present to await the results of the agreement, provided for in the treaties existing between the three Republics, in regard to the delimitation of their respective frontiers by the States themselves. In the event of these Republics not arriving at an agreement respecting their frontiers, resort must be had to arbitration by the League of Nations, which would appoint an interallied Commission to settle on the spot the frontiers referred to above, taking into account, in principle, of ethnographical data.)

Հուլիս 1-ին կարևոր է, որ նշյալ փաստաթուղթն ընդգրկվել է ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի իրավաբար վճռի (22 նոյեմբերի, 1920թ.) (Arbitral Award, November 22, 1920) *Ամբողջական զեկուլցի* մեջ, որպես 1-ին հավելվածի 2-րդ փաստաթուղթ (Full Report, Annex I, No 2), որը վկայում է, որ Սիագյալ Նահանգները ճանաչել են նշյալ փաստաթղթի իրավական էությունն ու օրինականությունը:

Նշյալ դրույթները ներառվել են նաև Սևրի պայմանագրի (10 օգոստոսի, 1920թ.) մեջ⁵, որպես Պայմանագրի 92-րդ հոդված. «Հայաստանի և Ադրբեջանի, ինչպես նաև Վրաստանի, միջև սահմանները կորոշվեն շահագրգիռ երկրների ուղղակի համաձայնության միջոցով: Այն դեպքում, երբ շահագրգիռ երկրները մինչև 89-րդ հոդվածում հիշատակված որոշման օրը չեն կարողանա համաձայնությամբ որոշել սահմանները, ապա խնդրո առարկա սահմանը կորոշվի Գլխավոր դաշնակից ուժերի կողմից, որոնք էլ տեղում կիրականացնեն նաև սահմանանշումը»:

(The frontiers between Armenia and Azerbaijan and Georgia respectively will be determined by direct agreement between the states concerned. In the either case the States concerned have failed to determine the frontier by agreement at the date of the decision referred to in Article 89, the frontier line in question will be determined by the Principal Allied Powers, who will also provide for its being traced on the spot).

Բնականաբար Գլխավոր դաշնակից ուժերը, որոնք նաև մաս էին կազմում Ազգերի լիգայի խորհրդին, առաջնորդվելու էին իրենց իսկ մշակած և որդեգրած սկզբունքներով:

Անհրաժեշտ է նշել, որ Փարիզի վեհաժողովում ԱՄՆ-ի պատվիրակության հետազոտական բաժինը (Intelligence Section of the American Delegation) նախագահ Վիլսոնին հասցեագրված նախնական առաջարկների մեջ [թվագրված՝ 21 հունվարի, 1919թ.] (Tentative Recommendations for President Wilson by the Intelligence Section of the American Delegation to the Peace Conference, 21 January, 1919) ⁶ միանշանակորեն արտահայտվել է Ախալքալաքի և Ախալցխայի ենթաշրջանները Հայաստանին միացնելու օգտին: Հայաստանի Հանրապետության սահմանները հստակեցնող առաջարկների մեջ մասնավորապես գրված է. *«Թեև տեղակայված համաշխարհային առևտրի հիմնական հոսանքներից հեռու, այնուհանդերձ Հայաստանի երկու ելքերը դեպի Սև ծով և Միջերկրական կապահովեն այն կենսունակ կապը, որն անհրաժեշտ է տնտեսական անվտանգության համար: Տեղագրության և առևտրի տեսանկյունից Ադանայի [նահանգի] Կիլիկիայի տարածաշրջանը պատկանում է Հայկական բարձրավանդակին և ոչ թե նրա երկու կողմերում գտնվող թուրքական Անատոլիային կամ Սիրիային: Նախկին Ռուսական [կայսրության] Կարսի և Երևանի նահանգների, Ախալքալաքի և Ախալցխեի ենթաշրջաններով հանդերձ, ներառումը պայմանավորված է այն հանգամանքով, որ նրանք են պարունակում հայ ժողովրդի ամենաստվար զանգվածը»:*

(Although remote from the main currents of the world's trade, Armenia's two outlets on the Black Sea and the Mediterranean would ensure that vitalizing contact needed for economic security. Topographically and commercially the Cilician region of Adana belongs to the Armenian highlands, and not to Turkish Anatolia or Syria on either side. The inclusion of former Russian provinces of

Kars and Erivan, with the sub-districts of Akhalkalaki and Akhaltsikh, is determined by the fact that they contain the largest block of Armenian peoples.)

Նշյալ առաջարկված և ամրագրված սկզբունքները, ինչպես նաև Վիլսոնի Իրավարար վճիռը, ի կատար չեն անվել, քանի որ Հարավային Կովկասի բոլոր երեք երկրներն էլ բռնազավթվել, ապա և բռնակցվել են բոլշևիկյան Ռուսաստանին, այսինքն կորցնելով իրենց ինքնիշխանությունը, դադարել են միջազգային իրավունքի սուբյեկտներ լինելուց: Մեկ անգամ ևս պետք է կրկնել, որ բռնազավթման (1920/21-1922թթ.) ապա և բռնկցման տարիներին (1922-1991թթ.) տեղի ունեցած որևէ գործողություն՝ սահմանազատում, վարչա-տարածքային բաժանում, վարչական միավորների ստեղծում, չէր կարող և չի ստեղծել իրավական հետևանք, քանի որ բոլոր այդ գործողությունները ի սկզբանե խարսխված են եղել միջազգային իրավունքի կոպիտ ոտնահարման հետևանքով առաջացած իրավիճակի վրա, այն է միջազգայնորեն ճանաչված անկախ երկրների՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեյջանի հանրապետությունների (1918-1920/21թթ.) անօրինական պետականագրկումը: Հանցագործությունը չի ծնում իրավունք՝ *Ex injuria non oritur jus*:

Այսպիսով, միանգամայն հստակ է, որ չկա որևէ միջազգային փաստաթուղթ (international instrument), որը միջազգային իրավունքի հիման վրա և միջազգային իրավունքի ընթացակարգի կիրառմամբ որոշած լինի սահմանը Հայաստանի Հանրապետության և Վրաստանի միջև: Ավելին, չկա որևէ միջազգային փաստաթուղթ, որը հիմք կհանդիսանա Ջավախքի տարածաշրջանի (կամ ինչպես ամերիկացիներն էին գրում, *Ախալքալաքի և Ախալցխեի ենթաշրջանների*) վրա վրացական տիտղոսի ամրակցման համար (for the consolidation of the Georgian title to territory): Ընդհակառակը, կան միջազգային փաստաթղթեր,⁷ որոնց մեջ ընդգրկված սկզբունքները և առաջարկները ամրակցել են հայկական տիտղոսը խնդրո առարկա տարածքի վրա: Առնվազն տարօրինակ է, որ այսօր փորձ է արվում կուսակցական որոշումներին գերակա կարգավիճակ տալ միջազգային փաստաթղթերի նկատմամբ:

Հարավային Կովկասում սահմանների, ինչպես նաև հայ-թուրքական սահմանի, հարցը, կարող է և պետք է լուծվի միայն միջազգային իրավունքի հիման վրա արդեն իսկ կայացված վճռի (22 նոյեմբերի, 1920թ.) և հստակեցված սկզբունքների (24 փետրվարի, 1920թ.) կենսագործմամբ: Անհրաժեշտ է հիշեցնել, որ այսօրվա Եվրոպայի և Միջին արևելքի քաղաքական քարտեզը գրեթե ամբողջովին ձևավորվել է Փարիզի 1919-1920թթ. վեհաժողովի որոշումների, սկզբունքների և առաջարկների հիման վրա: Եթե որևէ մեկը այսօր կփորձի կասկածի տակ դնել Փարիզի վեհաժողովի որոշումները Հայաստանի մասով, ուրեմն նա կասկածի տակ կդնի այսօրվա Եվրոպայի և Միջին արևելքի ողջ քաղաքական և իրավական համակարգը:

Հղումներ և ծանոթագրություն

1. Լոռվա Չեզոք գոտի – Լոռու Բորչալուի գավառի Ալավերդու, Ուզունլարի և Վորոնցովկայի շրջաններից կազմված գոտի՝ 09.01.1919-16.02.1921թթ.:
2. ՀՀ ՀԶԿՓ ԿՊԱ, Հավաքածու 1, գ. 7, ք. 45:
3. ՀՀ ՀԶԿՓ ԿՊԱ, Հավաքածու 1, գ. 7, ք. 43:
4. United States National Archives, Records of the Department of State Relating to Political Relations between Armenia and other States, 1910-1929, 760J.6715/60-760J.90C/7, Appendix I, No. 2.
5. Պետք է շեշտել, որ Սևրի պայմանագիրը կատարման համար պարտադիր փաստաթուղթ է, քանի որ այն ստորագրվել է «*քարձր պայմանավորվող կողմերի*» միջև և ինչպես ամրագրված է *Վիեննայի Պայմանագրերի մասին միջազգայնագրի [կոնվենցիայի]* (1969թ.) 2-րդ հոդվածի 6-րդ կետով, և *Պայմանագրերի նկատմամբ պետությունների իրավահաջորդության մասին Վիեննայի միջազգայնագրի [կոնվենցիայի]* (1978թ.) 2-րդ հոդվածի 11-րդ կետով, կողմերը պարտավորվում են պայմանագիրն ընդունել որպես կատարման համար պարտադիր փաստաթուղթ, անկախ պայմանագրի՝ ուժի մեջ մտած կամ չմտած լինելուց:
6. The Middle East and North Africa in World Politics, A Documentary Record, v. 2 British-French Supremacy, 1914-1945 [ed. by J.C.Hurewitz], New Haven and London, Yale University Press, 1979, pp. 132-137.
7. Օրինակ՝ 1. Tentative Recommendations for President Wilson by the Intelligence Section of the American Delegation to the Peace Conference, 21 January 1919; 2. League of Nations Council, Report and Proposals of the Commission for the Delimitation of the Boundaries of Armenia, 24 February 1924; 3. Woodrow Wilson, Arbitral Award, Full Report, November 22, 1920, Annex I, No 2.

Թուրքիայի Հանրապետության կողմից Հայաստանի Հանրապետության շրջափակումը որպես միջազգային իրավունքի և ստանձնած պարտավորությունների կոպիտ խախտում

Թուրքիայի Հանրապետությունը 1993թ. հուլիսից Հայաստանի Հանրապետության նկատմամբ իրականացնում է դասական պատերազմական գործողություն (*War Measure*)¹, քանի որ միջազգային իրավունքը շրջափակումը դիտարկում է որպես այդպիսին: Առ այսօր Հայաստանի ձգտումը՝ ապաշրջափակել իր արևմտյան և հարավային սահմանը, ոչ մի արդյունք չի տվել: Քանի դեռ մեր արդարացի պահանջը չի խարսխվել միջազգային իրավունքի վրա, այսինքն՝ չեն գործադրվել որոշակի լծակներ, մեր լավահառաչ կոչերը Թուրքիային՝ բացելու, այսպես կոչված, «հայ-թուրքական սահմանը», շարունակվելու են արհամարհվել կամ պայմանագրվելու են բացարձակապես անընդունելի նախապայմաններով: Իսկ միջազգային իրավունքի ընձեռած լծակներն առկա են: Այսպես.

1. Թուրքիայի Հանրապետությունն իր կնքած առաջին իսկ միջպետական փաստաթղթով՝ Լոզանի պայմանագրով (24 հուլիսի, 1923թ.), իր հավատարմությունն է հայտնել ազատ և ոչ խտրական տարանցիկ փոխադրումներն ապահովող Բարսելոնի կոնվենցիային (միջազգայնագրին), կանոնակարգին և առդիր արձանագրությանը (Բարսելոնի կոնֆերանս, ապրիլ, 1921թ.) (Convention, Statute and supplementary Protocol, Conference of Barcelona, April 1921):

Լոզանի պայմանագրի 101-րդ հոդվածն արձանագրում է.

«Թուրքիան պարտավորվում է հավատարիմ մնալ Տարանցիկ փոխադրումների ազատության վերաբերյալ կոնվենցիային և կանոնակարգին, որոնք ընդունվել են Բարսելոնում կայացած կոնֆերանսի կողմից 1921թ. ապրիլի 14-ին, ինչպես նաև միջազգային հետաքրքրություն ներկայացնող ջրուղիների աշխատակարգի վերաբերյալ նույն կոնֆերանսում 1921թ. ապրիլի 19-ին ընդունված կոնվենցիային, կանոնակարգին և առդիր արձանագրությանը:»

Լոզանի պայմանագրի 101-րդ հոդվածում հիշատակվող Տարանցիկ փոխադրումների ազատության վերաբերյալ Բարսելոնի կանոնակարգի (*Statute on Freedom of Transit, Barcelona*) 2-րդ հոդվածը միանշանակորեն հայտարարում է, որ հանձնառու կողմը պետք է «նպաստի իր ինքնիշխանության (*sovereignty*) կամ իշխանության (*authority*) տակ գտնվող տարածքով՝ երկաթուղով, ջրային ճանապարհով կամ ցամաքային ուղով, միջազգային փոխադրումների իրականացմանը: Ոչ մի խտրականություն չպիտի դրվի անձանց քաղաքացիության, նավերի պատկանելության (*flag*), ապրանքի ծագման, մեկնակետի, մուտքի, ելքի կամ վերջնահասցեի, կամ որևէ այլ հանգամանքի պատճառով, որը վերաբերում է ապրանքների կամ նավերի սեփականությանը, բեռների պահեստավորմանը կամ բեռնափոխադրման եղանակին»:

Լոզանի պայմանագրի մեկ այլ՝ 104-րդ հոդվածով, Թուրքիան պարտավորվում է «հավատարիմ մնալ Բարսելոնի կոնֆերանսի կողմից միջազգային երկաթուղիների վերաբերյալ արված (20-ը ապրիլի, 1921թ.) հանձնարարականներին (*recommendations*):

Թուրքիան վերահաստատել է Բարսելոնի Տարանցիկ փոխադրումների ազատության կոնվենցիային և կանոնակարգին հավատարիմ մնալու իր պարտավորությունը 1933թ.-ի հուլիսի 27-ին՝ ուղղակիորեն միանալով վերոհիշյալ փաստաթղթերին:

2. ՄԱԿ-ի Գլխավոր համաժողովի 656 լիագումար նիստն (20 փետրվարի, 1957թ.) իր 1028(XI) բանաձևով առաջին անգամ անդրադարձել է Ծով ելք չունեցող երկրների խնդրին² և միջազգային առևտրի ընդլայնմանը (*Land-locked countries and the expansion of international trade*): Բանաձևը, ճանաչելով միջազգային առևտրի զարգացման համար անձով երկրներին համապատասխան տարանցիկ հնարավորությունների տրամադրման անհրաժեշտությունը, «կոչ է անում [ՄԱԿ-ի] անդամ երկրների կառավարություններին տարանցիկ առևտրի առումով լիակատար ընթրնում դրսևորել ծով ելք չունեցող անդամ երկրների կարիքներին, ուստի և տրամադրել համապատասխան տարանցիկ հնարավորություններ միջազգային

իրավունքի և պրակտիկայի հիման վրա» (Invites the Governments of Member States to give full recognition to the land-locked Member states in the matter of transit trade and, therefore, to accord them adequate facilities in terms of international law and practice in this regard):

3. Թուրքիայի Հանրապետությունը 1969թ. մայիսի 25-ին միացել է Ծով ելք չունեցող երկրների տարանցիկ առևտրի կոնվենցիային (Նյու Յորք, 8 հուլիսի, 1965թ.) (Convention on Transit Trade of Land-locked States):

Սույն կոնվենցիայի 1-ին սկզբունքը ճանաչում է, որ «*ծով ելք չունեցող երկրներից յուրաքանչյուրի համար դեպի ծով ազատ ելքը վճռորոշ սկզբունք է միջազգային առևտրի ընդլայնման և տնտեսական զարգացման համար» (Principle I. The recognition of the right of each land-locked State of free access to the sea is an essential principle for the expansion of international trade and economic development):*

Նույն կոնվենցիայի 3-րդ սկզբունքը միանշանակորեն ճանաչում է անծով երկրների դեպի ծով ազատ ելքի իրավունքը. «*Որպեսզի ծովեզերք չունեցող երկրները ծովեզերք ունեցող երկրների հետ հավասարապես օգտվեն ծովերի ազատությունից, նրանք պետք է ունենան ազատ ելք դեպի ծով» (Principle III. In order to enjoy the freedom of the seas on equal terms with coastal States, States having no sea coast should have free access to the sea):*

Ավելին, նշյալ կոնվենցիայի 4-րդ սկզբունքը հաստատակամորեն պնդում է, որ «*տարանցիկ ապրանքների համար չպիտի գանձվի որևէ մաքս»*: Իսկ «*տարանցիկ փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցները չպիտի վճարեն հատուկ տուրքեր կամ ենթարկվեն գանձումների, որոնք ավելի բարձր են, քան վճարում են տարանցիկ երկրի տրանսպորտային միջոցները» (Goods in transit should not be subject to any customs duty. Means of transport in transit should not be subject to special taxes or charges higher than those levied for the use of means of transport of the transit country):*

Ի դեպ, Վրաստանը ևս միացել է Ծով ելք չունեցող երկրների տարանցիկ առևտրի կոնվենցիային (1999թ. հունիսի 2-ից): Հետևաբար վրացական իշխանությունները, վրացականի համե-

մատ հայկական բեռնափոխադրողներից կատարելով ավելի մեծ զանձումներ, աներկբայորեն ոտնահարում են իրենց իսկ միջազգայնորեն ստանձնած պարտավորությունները:

Վերոհիշյալ սկզբունքներն ամրագրված են նշյալ կոնվենցիայի 2-րդ և 3-րդ հոդվածներում: Հոդված 2-րդի 1-ին կետը նշում է. «Համաձայն սույն կոնվենցիայի պայմանների, ազատ տարանցման իրավունք պետք է տրվի փոխադրումներին և տրանսպորտի միջոցներին: (...) Համաձայն սույն կոնվենցիայի պայմանների, ոչ մի խտրականություն չպիտի դրվի ասպրանքների ծագման, մեկնակետի, մուտքի, ելքի կամ վերջնահասցեի, կամ որևէ այլ հանգամանքի պատճառով, որը վերաբերում է ասպրանքների կամ նավերի սեփականությանը, ցամաքային փոխադրամիջոցներին կամ տրանսպորտի այլ օգտագործվող միջոցներին»:

(Article 2, Freedom of transit, 1. Freedom of transit shall be granted under the terms of this Convention for traffic in transit and means of transport. (...) Consistent with the terms of this Convention, no discrimination shall be exercised which is based on the place of origin, departure, entry, exit or destination or on any circumstances relating to the ownership of the goods or the ownership, place of registration or flag of vessels, land vehicles or other means of transport used.)

3-րդ հոդվածը վերաբերում է մաքսատուրքերին և տարանցման զանձումներին. «Տարանցիկ փոխադրումները տարանցման երկրի իշխանությունների կողմից չպիտի ենթարկվեն մաքսատուրքերի, որևէ ներմուծման կամ արտահանման հարկերի վճարման, կամ տարանցմանն առնչվող որևէ այլ հատուկ զանձման»:

(Article 3: Customs duties & special transit dues, Traffic in transit shall not be subjected by any authority within the transit State to customs duties or taxes chargeable by reason of importation or exportation nor to any special dues in respect of transit.)

Հայաստանի Հանրապետությունը առայժմ չի միացել *Ծով ելք չունեցող երկրների տարանցիկ առևտրի կոնվենցիային (Convention on Transit Trade of Land-locked States)*: Որպեսզի Հայաստանի Հանրապետությունը լիարժեքորեն ի վիճակի լինի իր շահերը պաշտպանել ազատ տարանցման հարցում, առաջին հերթին պետք է միանալ նշյալ և առդիր փաստաթղթերին:

Այսուհանդերձ, հաշվի առնելով այն, որ Թուրքիայի Հանրապետությունը, շրջափակելով Հայաստանի Հանրապետությանը, կոպտորեն ոտնահարում է.

- Լոզանի պայմանագրի (Treaty of Lausanne) (24 հուլիսի, 1923թ.) 101-րդ և 104-րդ հոդվածները;
- Բարսելոնի Տարանցման ազատության կանոնակարգի (Statute on Freedom of Transit) (20 ապրիլի, 1921թ.) 2-րդ հոդվածը;
- ՄԱԿ-ի Գլխավոր համաժողովի (Resolution of General Assembly of the UN) (20 փետրվարի, 1957թ.) №1028(XI) բանաձևը;
- Ծով ելք չունեցող երկրների տարանցիկ առևտրի կոնվենցիայի (Convention on Transit Trade of Land-locked States) (8 հուլիսի, 1965թ.) 1-ին, 3-րդ և 4-րդ սկզբունքները, ինչպես նաև 2-րդ և 3-րդ հոդվածները;

և նկատի ունենալով,

- որ ՄԱԿ-ի կանոնակարգը (հոդված 55, կետ <բ>) ՄԱԿ-ից պահանջում է խրախուսել այնպիսի պայմանների ստեղծումը, որոնք կնպաստեն *«միջազգային տնտեսական, ինչպես նաև սոցիալական, առողջապահական և հարակից խնդիրների լուծմանը և միջազգային մշակութային ու կրթական համագործակցությանը»*
(*The United Nations shall promote solutions of international economic, social, health, and related problems; and international cultural and educational co-operation*);
- որ Հելսինկիի եզրափակիչ փաստաթուղթը (մաս 10-րդ, պարբերություն 1-ին) հանձնառու երկրներից պահանջում է միջազգայնորեն ստանձնած պարտավորությունների *«քարտեզիղճ կատարումը, լինեն դրանք ածանցված միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում գտած սկզբունքներից և կանոններից, թե լինեն ածանցված պայմանագրերից կամ այլ համաձայնագրերից, որոնց այդ երկրները մաս են կազմում համաձայն միջազգային օրենքի»*
(*X. The participating States will fulfill in good faith their obligations under international law, both those obligations arising from the generally*

recognized principles & rules of international law & those obligations arising from treaties or other agreements, in conformity with international law, to which they are parties),

ուստի, Հայաստանի Հանրապետությունը կարող է և պարտավոր է միջազգային իրավունքի հիման վրա պաշտպանել իր շահերը. նպատակաճանձմբ ու հետևողական քայլեր իրականացնել Հայաստանն ապաշրջափակելու ուղղությամբ:

Հայաստանի Հանրապետությունը որպես ՄԱԿ-ի անդամ երկիր, ՄԱԿ-ի կանոնակարգի 35-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա, լիովին իրավասու է «Անվտանգության խորհրդի կամ Գլխավոր համաժողովի ուշադրությանը բերել ցանկացած վեճ կամ իրավիճակ, որն իր բնույթով համապատասխանում է [սույն կանոնակարգի] 34-րդ հոդվածում վկայակոչվածին:

(Article 35. 1. Any Member of the United Nations may bring any dispute, or any situation of the nature referred to in Article 34, to the attention of the Security Council or of the General Assembly.)

ՄԱԿ-ի կանոնակարգի 34-րդ հոդվածն արձանագրում է. «Անվտանգության խորհուրդը կարող է քննության առնել ցանկացած վեճ կամ իրավիճակ, որը կարող է հանգեցնել միջազգային դիմակայության կամ առաջ բերել վեճ՝ որոշելու համար, թե արդյո՞ք տվյալ վեճի կամ իրավիճակի շարունակումը կարող է վտանգել միջազգային խաղաղության և անվտանգության պահպանումը»:

(Article 34. The Security Council may investigate any dispute, or any situation which might lead to international friction or give rise to a dispute, in order to determine whether the continuance of the dispute or situation is likely to endanger the maintenance of international peace and security):

Հայաստանի Հանրապետության նախաձեռնությամբ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ուշադրության հրավիրումը Թուրքիայի կողմից միջազգային պարտավորությունների հետևողական չկատարման, հետևաբար միջազգային իրավունքի ակնհայտ, կոպիտ, բազմակի ու շարամիտ խախտումների վրա, լուրջ կոչվան

Է Հայաստանի Հանրապետությունն ապաշրջափակելու քաղաքական գործընթացում:

Հղումներ և ծանոթագրություն

1. Jack C. Plano, Roy Oltan, The International Relations Dictionary, Santa Barbara, 1988, p. 194.
2. Այն ժամանակ այդ երկրները 5-ն էին, ներկայումս դրանք 32-ն են:

*առաջին անգամ տպագրվել է ԱԶԳ-օրաթերթում,
3 ապրիլի, 2007թ., էջ 4*

Կոստվոյի անկախության ճանաչումը որպես իրավական նախադեպ

Անկախության հռչակումը և անկախության հաջորդող ճանաչումը առկա իրողության իրավական ճանաչումն է: Չնայած անկախության ճանաչումը մեծապես պայմանավորված է եղել, և կլինի, քաղաքական հաշվարկներով՝ այն ակնհայտորեն իրավական գործողություն է: Ըստ այդմ, նոր քաղաքական միավորի ճանաչումը, որպես իրավական գործողություն, անկախ քաղաքական հայտարարություններից՝ առաջացնում է իրավական նախադեպ:

Ավանդաբար միջազգային իրավունքը խարսխված է եղել պետությունների ինքնիշխան իրավահավասարության վրա¹, որն ամրագրված է ՄԱԿ-ի կանոնակարգում (Հոդված 2, §1), ինչպես նաև «Պետությունների միջև բարեկամական հարաբերությունների և համագործակցության վերաբերյալ, ըստ ՄԱԿ-ի կանոնակարգի, միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագրի» մեջ (ընդունված Գլխավոր ասամբլեայի կողմից, 1970թ. հոկտեմբերի 24-ին), որը միանշանակորեն և հանդիսավորապես հայտարարում է. «Միջազգային վեճերը պետք է լուծվեն պետությունների ինքնիշխան իրավահավասարության հիման վրա»:

Հետևաբար Կոստվոյի անկախության ճանաչումն, անկասկած, հանդիսանում է և հանդիսանալու է անվիճելի իրավական նախադեպ: Քաղաքական հայտարարությունները *չեն* կարող և չեն փոփոխելու միջազգային իրավունքի իրավական սկզբունքները: Իրավահավասարության սկզբունքը վերաբերում է միջազգային համայնքի բոլոր անդամներին, այսինքն՝ միջազգային իրավունքի բոլոր ենթականերին, առանց խտրականության, տրվում են միևնույն իրավունքներն ու պարտականությունները: Իրավական տեսանկյունից վերաբերմունքը Սերբիայի նկատմամբ չի կարող տարբեր լինել և այն չի կարող ենթարկվել խտրականության: Միջազգային իրավունքի հայտնի խտրազետ, պրոֆետոր Լասսա Օփենհեյմը գրել է. «Ազգերի ընտանիքի բոլոր անդամ պետությունների՝

միջազգային իրավունքի նկատմամբ իրավահավասար լինելը անսակարկելի է, քանի որ դա բխում է այդ պետությունների միջազգային իրավունքի միավոր լինելու էությունից: Պետությունները, տարածքի, բնակչության, հզորության, քաղաքակրթվածության, հարստության և այլ առումներով անհավասար լինելով հանդերձ, իրավահավասար են որպես միջազգային իրավունքի կրողներ»²:

Հետևաբար, Սերբիան, որպես միջազգային համայնքի անդամ, մնացած պետությունների համեմատ ունի նույն և հավասար իրավունքները: Այսպես կոչված “տարածքային ամբողջականությունը” չի կարող վերաբերել Ադրբեջանին, սակայն չվերաբերել Սերբիային: Հատկապես, երբ Ադրբեջանը մի երկարատև ժամանակաշրջան իրականացրել է ցեղասպանական քաղաքականություն իր հայազգի քաղաքացիների նկատմամբ (Նախիջևանի հայկական ինքնավարության հայաթափումը, հայերի ջարդերը Սումգայիթում, Բաքվում, Կիրովաբադում և այլուր), ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի հայկական ինքնավարության դեմ սանձազերծել է արյունոտ և խաղաղ բնակչությանը հսկայական զոհեր պատճառած պատերազմ:

17 փետրվարի 2008թ.

Հղումներ և ծանոթագրություն

1. On Principle of Legal Equality see – Edwin De Witt Dickinson, *The Equality of States in International Law*, vol. III of *Harvard Studies in Jurisprudence*, Cambridge, 1920. (1972 reprint, NY).
2. Lassa Oppenheim, *International Law, A Treatise*, vol. I Peace, London, 1920,(2005, /3rd ed./, NJ), §115, p. 196.

Հայկական հարցի լուծման իրավական հիմքերն ու ուղիները

/Ելույթ Հայ դատի հանձնախմբերի խորհրդաժողովի ժամանակ/
Երևան, 13 մարտի, 2007թ.

Հարգելի ներկաներ,
Մեծարգո բարեկամներ,

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունը կանգնած է բախտորոշ ճամփաբաժանի առաջ: Մեր հետագա քայլերից է կախված, թե մեզ համար ինչպիսի՞ն կլինեն առաջիկա տարիները՝ կորուստների, թե ձեռքբերումների: Մեր առջև ծառայել է առկա մարտահրավերները չեզոքացնելու և դրանք դրականորեն հեղաշրջելու հրամայականը:

Քանի որ ՀՀ-ի, ինչպես նաև հայ ժողովրդի հավաքական ներուժը քաղաքական, տնտեսական կամ ռազմական ոլորտներում զիջում է, և առայժմ զիջելու է, Թուրքիայի ու Ադրբեջանի ընդհանուր ներուժին, ուստի անհրաժեշտ է պայքարի ու դիմակայության ողջ գործընթացը տեղափոխել այլ ոլորտ, ուր ՀՀ-ն ոչ միայն չի զիջում նրանց, այլև ունի շոշափելի առավելություն:

Այսինքն, անհրաժեշտ է հայ-թուրքական հարաբերությունները տեղափոխել իրավական դաշտ և այդ հարաբերություններում առկա բոլոր խնդիրներին տալ իրավական լուծումներ և ձևակերպումներ:

Միևնույն ժամանակ, հայաստանաբնակ ժողովրդի մեջ հետևողական աշխատանքով պետք է հաստատել այն ըմբռնումը, որ Հայ դատի նպատակները սերտորեն և ամիջականորեն վերաբերում են ՀՀ-ի ոչ միայն ներկային, այլև ապագային: Անհրաժեշտ է համոզիչ փաստարկներով ցույց տալ, որ մեր առջև ծառայած արտաքին մարտահրավերների մի զգալի մասը հնարավոր կլինի չեզոքացնել միմիայն մեր հարևանների վրա նոր և ազդեցիկ լծակների ձեռք բերումով: Ընդ որում, պետք է հիմնավորել, որ նման հնարավորություն

մեզ կարող է ընձեռել Հայ դատի հաջող ելքը, այսինքն՝ *de jure* ՀՀ-ի մաս կազմող, սակայն առայժմ թուրքական ռազմակալության տակ գտնվող տարածքների վրա մեր իրավունքների վերահաստատումը: Իսկ սա անելու համար կա միանգամայն իրատեսական և իրագործելի ուղի: Ասածներս հստակ պատկերացնելու համար հարկ է միջազգային իրավունքի տեսանկյունից վերլուծել բոլոր այն փաստաթղթերը, որոնք վերաբերում են հայ-թուրքական սահմանին, հստակեցնել նրանց ներկա կարգավիճակը, նախանշել մեր անելիքները:

Նախ սկսենք միջպետական պայմանագրերից:

Առաջին Համաշխարհային պատերազմի ավարտին նախորդող ժամանակահատվածում և հաջորդող տարիներին կնքվել է 6 պայմանագիր, որոնք այս կամ այն չափով վերաբերել են հայ-թուրքական սահմանին:

Նախ ի՞նչ բան է միջազգային պայմանագիրը:

Ըստ ՄԱԿ-ի պաշտոնական ուղեցույց ձեռնարկի, «միջազգային պայմանագրերը համաձայնություններ են միջազգային իրավունքի սուբյեկտների միջև, որոնց միջոցով նրանք ստեղծում, փոփոխության են ենթարկում կամ դադարեցնում են փոխադարձ իրավունքներն ու պարտավորությունները»¹: Այսինքն, պայմանագրի օրինականության համար անհրաժեշտ է, որ պայմանագիրը կնքող կողմերից յուրաքանչյուրը լինի միջազգային իրավունքի սուբյեկտ, այն է՝ լինի միջազգայնորեն ճանաչված պետության օրինական կառավարության լիազոր ներկայացուցիչ: Այս տեսանկյունից էլ, ժամանակագրական կարգով, անդրադառնանք հայ-թուրքական սահմանին վերաբերող պայմանագրերից յուրաքանչյուրին և որոշենք նրանց կարգավիճակն ըստ միջազգային իրավունքի:

1. Ժամանակագրական առումով առաջինը Բրեստ-Լիտովսկի պայմանագիրն է և նրա հավելվածը՝ կնքված 1918թ. մարտի 3-ին:

1917թ. հոկտեմբերին, զինված հեղաշրջման ճանապարհով գալով իշխանության, բոլշևիկներն արդեն մի քանի ամիս հետո հայտնվել էին ծայրահեղ ծանր վիճակում: Նրանք 1918թ. մարտի 3-ին Բրեստ-Լիտովսկում խայտառակ պարտվողական պայմանագիր

կնքեցին, որով հսկայական տարածքային զիջումների գնացին Եվրոպայում: Միջին արևելքում բոլշևիկները էական զիջումների գնացին պարտվող և կործանման եզրին կանգնած Օսմանյան կայսրությանը: Մասնավորապես, Բրեստ-Լիտովսկի պայմանագրի 4-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ պարբերություններով բոլշևիկները պարտավորվեցին թուրքերին վերադարձնել ոչ միայն պատերազմի ընթացքում գրավված Արևմտյան Հայաստանի տարածքները (կամ «*Արևելյան Անատոլիայի նահանգները*», ինչպես գրված է պայմանագրում), այլև 1878թ.-ից Ռուսական կայսրության մաս հանդիսացող «*Ադրահանի, Կարսի և Բաթումի մարզերը*»:

Համառոտակի քննության առնենք Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը միջազգային իրավունքի տեսանյունից: Մույն պայմանագիրն *անօրինական է ու անվավեր*, ըստ այդմ որևէ իրավական հետևանք չունի հայ-թուրքական սահմանի համար, 2 պատճառով.

ա) Բոլշևիկները 1918թ.-ին չէին հանդիսանում Ռուսաստանի օրինավոր և ճանաչված իշխանությունները, հետևաբար՝ իրավասու չէին միջազգային հարաբերությունների մեջ մտնել, առավել ևս պայմանագիր կնքել, Ռուսաստանի անունից (այս հիմնադրությին ավելի հանգամանալից կանդրադառնանք Մոսկվայի և Կարսի պայմանագրերը քննելիս);

բ) Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը չեղյալ է հայտարարվել իրենց իսկ կնքողների կողմից (1918թ. սեպտեմբերի 20-ին Ռուսաստանի, իսկ 1918թ.-ի հոկտեմբերի 30-ին՝ Թուրքիայի կողմից (Մուդրոսի զինանդադարի 11-րդ հոդվածով)):

2. Ժամանակագրական առումով հաջորդ պայմանագիրը Սևրի պայմանագիրն է՝ կնքված 1920թ. օգոստոսի 10-ին:

Սևրի պայմանագիրն *օրինական է*, քանի որ կնքող բոլոր կողմերն իրենց երկրների օրինական և ճանաչված իշխանություններն էին: Պայմանագրի շուրջ, ըստ սահմանված կարգի, ընթացել են երկարատև բանակցություններ և օսմանյան կայսրության անունից պայմանագիրը ստորագրել է լիազոր պատվիրակությունը: Սևրի պայմանագիրը չի արժանացել լիակատար վավե-

րացման (հետևաբար մնում է *ոչ կատարյալ (unperfected)*, սակայն այն նաև երբևէ չի հայտարարվել (հետևաբար մնում է *օրինական, բայց ուժի մեջ չմտած (valid but not in force)*։

Միայն է այն տարածված պատկերացումն, իբր Սևրի պայմանագիրն է որոշել Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանը։ Այդպես չէ։ Սևրի պայմանագրի 89-րդ հոդվածով կողմերը համաձայնվել են Հայաստանի և Թուրքիայի սահմանը իրավարար վճռով որոշելու խնդրանքով դիմել ԱՄՆ նախագահին և այդ վճիռն ընդունել անմիջապես։ Նույն պայմանագրի 90-րդ հոդվածով Թուրքիան վերահաստատել է իր դիրքորոշումը՝ ամրագրելով. «սկսած իրավարար որոշման օրից Թուրքիան հրաժարվում է [Հայաստանին] փոխանցվելիք տարածքի նկատմամբ իր բոլոր իրավունքներից և տիտղոսից»։

ԱՄՆ նախագահ **Վուդրո Վիլսոնը** Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանի վերաբերյալ **իրավարար վճիռը** ստորագրել և հաստատել է **ԱՄՆ պետական կնիքով** 1920թ. նոյեմբերի 22-ին։ Այսինքն, **1920թ. նոյեմբերի 22**-ից իրավարար վճիռը մտել է ուժի մեջ։ Այդ օրվանից նախկինում Օսմանյան կայսրության մաս կազմող **Վանի, Բիթլիսի, Էրզրումի և Տրապիզոնի** նահանգների նկատմամբ (ընդհանուր առմամբ **103.599 քլմ**) չեղյալ են հայտարարվել թուրքական իրավունքներն ու տիտղոսը և *de jure* ճանաչվել են Հայաստանի Հանրապետության իրավունքներն ու տիտղոսը։

ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռին, որպես հայոց իրավունքների ամենագործող կռվանի, ավելի հանգամանալից մենք կանդրադառնանք ստորև։

3. Ժամանակագրական առումով հաջորդ պայմանագիրը Ալեքսանդրապոլի պայմանագիրն է՝ կնքված 1920թ. դեկտեմբերի 3-ին։

Սա սովետահայ պատմագրության ամենասիրելի թեմաներից մեկն էր, քանի որ հնարավորություն էր տալիս դաշնակցությանը մեղադրել դավաճանության մեջ, իսկ բուլշևիկներին ներկայացնել որպես ազգի փրկիչներ։ Մեր խնդիրը չէ պատմական քննարկումներ կատարել։ Մեր նպատակն է քննել Ալեքսանդրապոլի պայմագիրը միջազգային իրավունքի տեսանկյունից։

Ալեքսանդրապոլի պայմանագիրն **անօրինական է ու անվավեր**, նախ այն պատճառով, որ կնքող կողմերից և ոչ մեկը չի ունեցել դրա իրավասությունը: Պայմանագիրը հայկական կողմից կնքողներն **արդեն** իշխանություն չէին, իսկ Թուրքիայի կողմից կնքողները **դեռևս** իշխանություն չէին: Երկու կողմերն էլ գործել են *ultra vires*², այսինքն՝ ակնհայտորեն գերազանցել են իրենց իրավասությունները:

Հանրահայտ փաստ է, որ Հայաստանի Հանրապետության վերջին օրինական կառավարության կողմից իշխանության հանձնումը տեղի է ունեցել 1920թ.-ին դեկտեմբերի 2-ին՝ «*Ռ.Ս.Ֆ.Ս.Հ լիազոր ներկայացուցչության և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև*» կնքված համաձայնագրով³: Այս մասին տեղյակ էր նաև Քյազիմ Կարաբեքիրը, երբ դեկտեմբերի 3-ին (2-ի լույս 3-ի գիշերը⁴) ստորագրում էր Ալեքսանդրապոլի պայմանագիրը: Ալեքսանդրապոլի պայմանագիրն անօրինական է նաև այն պատճառով, որ ստորագրվել է միջազգային իրավունքի սկզբունքները ոտնահարող **ուժի կիրառման քաղաքական սպառնալիքով**⁵:

4. Ժամանակագրական առումով հաջորդ պայմանագիրը Մոսկվայի պայմանագիրն է՝ կնքված 1921թ. մարտի 16-ին:

Ինչպես գրված է Մոսկվայի պայմանագրի նախաբանում, այն կնքվել է «*Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Սովետական Հանրապետության կառավարության և Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարության*» միջև: Քանի որ ցանկացած պայմանագրի կարգավիճակ աժանցվում է այն ստորագրողների իրավական կարգավիճակից, ուստի առաջին հերթին անհրաժեշտ է հստակեցնել նրանցից յուրաքանչյուրի կարգավիճակը 1921թ. մարտի 16-ի դրությամբ:

ա) Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Սովետական Հանրապետության (ՄԿԿԿ) կարգավիճակը 1921թ.-ին.

Պայմանագիրը կնքելու պահին **չկար** «*Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Սովետական Հանրապետություն*» (ՄԿԿԿ) ճանաչված պետություն, հետևաբար՝ միջազգային իրավունքի սուր-

յեկտ: Բնականաբար նրա կառավարությունը չուներ որևէ միջազգային պայմանագիր կնքելու իրավասություն: ՌՄՖՍՀ-ի, արդեն ՍՍՀՄ տարագով, միջազգային օրինական ճանաչումը սկսել է միայն 1924թ. փետրվարի 1-ից՝ Մեծ Բրիտանիայի ճանաչումով⁶: Սինչև 1924թ.-ը տեղի ունեցած, այսպես կոչված, ճանաչումները, չեն առաջացրել որևէ իրավական հետևանք, քանի որ իրենց հերթին բխել են չճանաչված երկրներից կամ վարչախմբերից: Որպեսզի ճանաչումն օրինապես համարվի այդպիսին, այն պետք է կատարվի իր հերթին օրինականորեն ճանաչված միջազգային իրավունքի սուբյեկտի կողմից⁷: Օրինակ, 1920թ.-ին սովետական կառավարությունը ճանաչեց Բաթյան երկրները, սակայն այդ ճանաչումը չընդունվեց Ռաշնակից ուժերի կողմից այն հիմնավորմամբ, որ սովետական կառավարությունն իր հերթին օրինապես⁸ ճանաչված չէ⁹: Նման մոտեցումը երկրորդվել է դատական վճիռներով: Այսպես, ՌՄՖՍՀ-ն ընդդեմ Սիբերիոյի (*RSFSR vs. Cibrario*) դատական գործում (1923թ.) ԱՄՆ դատարանը մերժել է ընդունել սովետական կառավարության հայտն այն հիմնավորմամբ, որ վերջինս ճանաչված չէ¹⁰: Նմանատիպ վճիռ, նույն հիմնավորմամբ կայացրել է Շվեդիայի Գերագույն դատարանը Սովետական կառավարությունն ընդդեմ Էրիքսոնի (*Soviet Government vs. Ericsson*) դատական գործում (1921թ.)¹¹:

Վերոհիշյալ և տասնյակ այլ դատական վճիռներ ու կառավարական որոշումներ վերահաստատում են միջազգային իրավունքի այն սկզբունքը, որ առանց ճանաչման կառավարություններն իրավական տեսնակյունից գոյություն չունեն, հետևաբար որևէ իրավական գործունեություն (պայմանագրերի կնքում, քաղաքացիության շնորհում կամ զրկում, մասնակցություն դատական գործընթացին և այլն) չեն կարող ծավալել¹²:

բ) Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կարգավիճակը 1921թ.-ին.

Ըստ էության, սովետական իշխանության և կառավարության վերաբերյալ վերը ասվածը, ամբողջովին վերաբերում է, այսպես

կոչված, Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությանը, որի անունից թուրքական կողմը ստորագրել է Մոսկվայի պայմանագիրը: Հիշարժան է, որ անգամ քեմալականները իրենք որևէ հավակնություն չունեին օրինական իշխանությունների առկայության դեպքում իրենց համարելու Թուրքիայի լիազոր ներկայացուցիչներ: Նրանք պայմանագրերը կնքում էին ոչ թե Թուրքիայի կամ Թուրքիայի կառավարության անունից, այլ «*Թուրքիայի Ազգային մեծ ժողով*» կոչվող կառույցի «*կառավարության*» անունից: Թուրքիայի Ազգային մեծ ժողովը իր կարգավիճակով հասարակական կազմակերպություն (NGO) էր և նրա մեջ միավորված էին նախկին պատգամավորներ, պաշտոնանկ զինվորականներ ու պաշտոնյաներ: Նախկին պաշտոնյաներ միավորող կազմակերպություններ եղել են ու կան աշխարհի զանազան երկրներում, այդ թվում նաև Հայաստանում, սակայն նրանցից և ոչ մեկը իրավունք չունի միջպետական պայմանագիր կնքելու երկրի անունից: Մուստաֆա Քեմալի վարչախումբը որևէ իրավական հիմք չունեի միջազգային հարաբերություններում ներկայացնելու թուրքական պետությունը: Աներկբայորեն, առնվազն մինչև 1922թ.-ի նոյեմբերը, այսինքն սուլթան Մուհամմեդ VI-ի մեկնումը Թուրքիայից, վերջինիս կառավարությանն էին վերապահված միջազգային հարաբերությունների մեջ մտնելու լիազորությունները, միայն սուլթանը կարող էր լիազորել որևէ անձի՝ գործելու երկրի անունից¹³:

Ընդհանրապես քեմալականների շարժումը սկզբնավորվել ու ընթացել է օսմանյան սահմանադրության ոտնահարումով և միջազգային իրավունքի խախտումով, որ է երկրի օրինական իշխանության՝ սուլթան-խալիֆի, դեմ ապստամբությունը և Մուրդուսի զինադադարի (30 հոկտեմբերի, 1918թ.) ոտնահարումը: Մուստաֆա Քեմալը 1921թ.-ին պարզապես փախուստի մեջ գտնվող քրեական հանցագործ էր: Այդ իսկ պատճառով դեռևս 1920թ. ապրիլի 11-ին կայսրության բարձրագույն կրոնավորի՝ շեյխ-ուլ-խալամի, ֆեթվայով (կոնդակով) Մուստաֆա Քեմալը մահվան էր դատապարտվել: Նրա նկատմամբ նույն տարվա մայիսի 11-ին մահապատժի վճիռ էր

կայացրել նաև թուրքական ռազմական դատարանը: Այս դատավճիռը 1920թ. մայիս 24-ին հաստատվել էր սուլթանի կողմից:

Ի լրումն սրա, Մոսկվայի պայմանագրի Հայաստանին վերաբերող մասը միջազգային իրավունքի ևս մի խախտում է, քանի որ պայմանագրերը կարող են վերաբերել միայն պայմանագիրը ստորագրող կողմերին և որևէ պարտավորություն կամ իրավունք չեն ստեղծում պայմանագրին մաս չկազմող երրորդ կողմի համար¹⁴:

5. Հայ-թուրքական սահմանին վերաբերող հաջորդ պայմանագիրը Կարսի պայմանագիրն է՝ կնքված 1921թ. հոկտեմբերի 13-ին:

Միանշանակ է, որ Կարսի պայմանագիրն անօրինական է և անվավեր, քանի որ պայմանագիրը կնքած կողմերից և ոչ մեկը չի եղել միջազգային իրավունքի սուբյեկտ: Ալեքսանդրապոլի և Մոսկվայի պայմանագրերին վերաբերող հատվածում քեմալականների մասին արդեն խոսվեց:

Անդրադառնալով Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության կարգավիճակին, որն էլ հանդիսացել է քեմալականների հետ պայմանագիրը կնքած կողմերից մեկը: Ամփիճելի է, որ Սովետական Հայաստանը երբեք չի եղել միջազգային իրավունքի սուբյեկտ: Այն երբեք ճանաչված չի եղել միջազգային իրավունքի որևէ այլ սուբյեկտի կողմից, երբեք չի ունեցել այլ երկրների հետ հարաբերությունների մեջ մտնելու կարողություն: Պարզ ասած, այն երբեք չի ունեցել դեպի անոնյաներ և Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետության անունից երբևէ ոչ մի դեսպան չի հավատարմագրվել: Իսկ «*այլ պետությունների հետ հարաբերությունների մեջ մտնելու կարողությունը*» (*capacity to enter into relations with the other states*) հանդիսանում է պետականության 4 չափորոշիչներից մեկը, որն ամրագրված է *Մոնտեվիդեոյի պետությունների իրավունքների և պարտականությունների մասին* 1933թ.-ի (*Convention on Rights and Duties of States, Montevideo, 1933*) կոնվենցիայի առաջին հոդվածի 4-րդ կետում: Սովետական Միության

կազմում պարզապես եղել է «Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետություն» վարչատարածքային միավորը:

6. Ժամանակագրական առումով վերջին պայմանագիրը, որին հարկ ենք համարում անդրադառնալ, Լոզանի պայմանագիրն է՝ կնքված 1923թ. հուլիսի-ի 24-ին:

Նախ մի շատ տարածված մոլորության մասին: **Լոզանի պայմանագրի կնքումով Սևրի պայմանագիրը չեղյալ չի հայտարարվել:** Որևէ պայմանագիր կամ միջազգային պարտավորություն նոր պայմանագիր կնքելու պարագային ինքնըստինքյան չեղյալ չի լինում: Պայմանագիրը չեղյալ է դառնում ոչ այլ կերպ, քան չեղյալ հայտարարումով: Ընդ որում, պայմանագիրը կարող է չեղյալ հայտարարվել միմիայն նախորդ պայմանագրի մաս հանդիսացող բոլոր, կրկնում են **քոլոր, կողմերի համաձայնությամբ՝** դրա մասին հստակ հայտարարումով և այդ իրողության ամրագրումով հաջորդ պայմանագրի մեջ: **Լոզանի պայմանագիրը չեղյալ չի հայտարարել Սևրի պայմանագիրը:** Լոզանի պայմանագրի մեջ ընդհանրապես որևէ հիշատակում չկա Սևրի պայմանագրի մասին: Այո՛, ըստ միջազգային իրավունքի, պայմանագիրը կնքած երկրները իրավասու են հաջորդ պայմանագրով վերատեսության ենթարկել նախորդ պայմանագրի դրույթները: Սակայն փոփոխված կամ նորամուտ դրույթները իրավական ուժ ունեն միայն նոր պայմանագիրը ստորագրած երկրների համար, իսկ մնացածների համար շարունակում են ուժի մեջ մնալ նախորդ պայմանագրի դրույթները: Սա հստակորեն ամրագրված է Վիեննայի Պայմանագրերի իրավունքի մասին կոնվենցիայի 39, 40 և 41-րդ հոդվածներում: Սևրի պայմանագիրը ստորագրել է 18 երկիր, իսկ Լոզանի պայմանագիրը ընդամենը՝ 7-ը: Այսինքն, Լոզանին չմասնակված երկրների համար իրավական է Սևրի պայմանագիրը, իսկ Լոզանի պայմանագիրը ստորագրած երկրների համար իրավական են Սևրի պայմանագրի այն դրույթները, որոնք չեն փոփոխվել Լոզանի պայմանագրում:

Ավելին, Լոզանը ոչ միայն չեղյալ չի հայտարարել **հայոց իրավունքները**, այլև **16-րդ հոդվածով վերահաստատել է** դրանք: Այս-

պես, Լոզանի պայմանագիրն անդրադառնում է թուրք-բուլղարական, թուրք-հունական և թուրք-սիրիական սահմաններին, ըստ այդմ՝ հստակեցնում Թուրքիային պատկանող տարածքները միայն երկրի այդ հատվածներում: Իսկ քանի որ Լոզանի պայմանագրի 16-րդ հոդվածը հայտարարում է, որ Թուրքիան հրաժարվում է բոլոր այն տարածքներից, որոնց վրա Լոզանի պայմանագրով չի ճանաչվել Թուրքիայի ինքնիշխանությունը, իսկ Վիլսոնի իրավարար վճռով Հայաստանին հատկացված տարածքների վրա Լոզանի պայմանագիրը չի ճանաչել թուրքական ինքնիշխանությունը, հետևաբար Թուրքիան մեկ անգամ ևս հաստատել է վիլսոնյան Հայաստանից իր հրաժարումը:

Հիմա ամփոփենք մեր քննության արդյունքները և անդրադառնանք բազմիցս հիշատակված և իմ համոզմամբ Հայ դատի հիմնասյունն ու նրա հաջողության գրավականը հանդիսացող ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռին:

Սակայն մինչ այդ հստակեցում: Ճիշտ է, որ Պայմանագրերի իրավունքի մասին Վիեննայի կոնվենցիան ընդունվել է 1969թ.-ին և հետադարձ ուժ չունի, ինչպես հայտարարված է կոնվենցիայի 4-րդ հոդվածում, այնուամենայնիվ հստակ է, որ բոլոր այն չափորոշիչային հիմնադրույթները, որոնցով քննության առանք վերոնշյալ պայմանագրերը, միջազգային իրավունքում առկա են եղել և գործել են դարեր ի վեր, այսինքն, լատիներեն ասած, եղել են ***ius cogens***, այն է՝ ***քոլորի համար պարտադիր ու անբեկանելի***: Դրանք պարզապես վերամրագրվել են Վիեննայի միջազգային կոնվենցիայի մեջ: Եվ ինչպես հաստատում է նույն Վիեննայի կոնվենցիայի 53-րդ հոդվածը, պայմանագիրն անվավեր է, եթե կնքելու պահին ոտնահարվել է միջազգային իրավունքում ճանաչում գտած որևէ անբեկանելի հիմնադրույթ, այսինքն՝ որևէ *ius cogens*:

Հետևաբար, վերը քննության առած 6 պայմանագրից 4-ն անվավեր են, քանի որ դրանցից յուրաքանչյուրը կնքվել է միանգամից մի քանի *ius cogens*-ների ոտնահարմամբ:

Անվավեր պայմանագրերն են՝

- **Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը,**
- **Ալեքսանդրապոլի պայմանագիրը,**
- **Մոսկվայի պայմանագիրը և**
- **Կարսի պայմանագիրը:**

Սևրի պայմանագիրը օրինական է և վավեր, սակայն այն ուժի մեջ չի մտել, քանի որ լիովին չի վավերացվել:

Իսկ վավերական ու օրինական Լոզանի պայմանագիրը, ինչպես ասվեց, Հայաստանին վերաբերում է անուղղակիորեն:

Հիմա, ինչպես ասացի, Հայ դատի հիմնասյունը և հաջողության գրավականը հանդիսացող **ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռի (Arbitral Award)** մասին:

Նախ մի փոքր պատմական ակնարկ:

1920թ. ապրիլի 25-26-ին Գաշնակից և ընթերակա ուժերի Գերագույն խորհուրդը (Supreme Council of Allied and Associated Powers), բաղկացած Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի ներկայացուցիչներից, որոշում կայացրեց դիմել ԱՄՆ նախագահին երկու խնդրանքով.

ա) **ստանձնել Հայաստանի մանդատը,**

բ) **իրավարար վճռով որոշել Հայաստանի և Թուրքիայի սահմանը**¹⁵:

Նույն խնդրանքը, 89-րդ հոդվածի տեսքով, ներառվեց Սևրի դաշնագրի մեջ և արդեն Հայաստանի ու Թուրքիայի, ինչպես նաև դաշնագիրը ստորագրած գրեթե 20 երկրի անունից հղվեց ԱՄՆ նախագահին: ԱՄՆ նախագահը, իրավասու մարմինները (պետքարտուղարությունը, պաշտպանության նախարարությունը և նախագահի վարչակազմը) և համապատասխան աշխատանքային խումբը (պրոֆ. Վեստերմանի գլխավորությամբ), մանրակրկիտ ուսումնասիրեցին հայցը և կայացրին իրավարար վճիռը: Վուդրո Վիլսոնն իրավարար վճիռը ստորագրեց **1920թ. նոյեմբերի 22-ին**: Այն դեկտեմբերի 6-ին պաշտոնապես փոխանցվեց Փարիզ՝ դաշնակից ուժերի Գերա-

գույն խորհրդին: Սույն վճռի պաշտոնական և ամբողջական անվանումն է. «*Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահի որոշումը Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանի, Հայաստանի դեպի ծով ելքի և հայկական սահմանին հարակից թուրքական տարածքի սպառազնականացման վերաբերյալ*» 22 նոյեմբերի, 1920թ.:

Իրավարար վճռի բովանդակությունը

Ըստ իրավարար վճռի, Հայաստանի Հանրապետության տիտղոսն ու իրավունքները ճանաչվում էին նախկին Օսմանյան կայսրության Վանի, Բիթլիսի, Էրզրումի և Տրապիզոնի նահանգների վրա՝ ընդհանուր առմամբ 103 599 քկմ: Դա կրկնակի քիչ էր այն տարածքից, որի վրա Մուղոսի զինադադարի 24-րդ հոդվածով ճանաչվել էր հայկական տիտղոսը: Նման էական կրճատումը պայմանավորված էր այն հանգամանքով, որ արդեն այդ ժամանակ ի հայտ էին եկել հայերի հսկայական մարդկային կորուստները:

Իրավարար վճռի ներկա կարգավիճակը

Իրավարար վճիռը վերջնական է և պարտադիր է կատարման համար¹⁶: Այն չունի ժամանակային սահմանափակում¹⁷ և նրա կարգավիճակը կախում չունի վճռի հետագա ճակատագրից: Միջազգային իրավունքը, մասնավորապես Հաագայի կոնվենցիայի (1907թ.) 81-րդ հոդվածը, որով ամփոփվել և ամրագրվել է իրավարար վճիռների կարգավիճակը, ընդհանրապես չի նախատեսում վճռի չեղյալ հայտարարում¹⁸: Ըստ միջազգային իրավունքի, կողմերը, համաձայնվելով իրավարար որոշմանը ներկայացնել իրենց վեճը, մեկընդմիջտ ընդունում են, որ իրենց կողմից կատարման համար պարտադիր կլինի իրավարարի ցանկացած վճիռ¹⁹: Կողմերից մեկի մերժումը ի կատար ածելու իրավարարությունը, չի ազդում վճռի վավերականության վրա: Ըստ այդմ, քանի որ իրավարարության հայցը ներկայացվել է ոչ միայն Հայաստանի և Թուրքիայի, այլև 16 այլ երկրի, կողմից ուստի վճիռը պարտադիր է բոլոր հայցվորների համար, որոնք ներկայումս հետևյալ երկրներն են՝ Միացյալ Թագավորություն, Կանադա, Ավստրալիա, Նոր Զելանդիա, Հարավային Աֆրիկա, Հնդկաստան, Պակիստան, Բանգլադեշ, Ֆրան-

սիա, Իտալիա, Ճապոնիա, Բելգիա, Հունաստան, Լեհաստան, Պորտուգալիա, Ռումինիա, Չեխիա, Սլովակիա, Սերբիա, Խորվաթիա, Սլովենիա, Բոսնիա, Հերցեգովինա, Մակեդոնիա և Մոնտենեգրո: Այն պարտադիր է նաև իրավարարի՝ Միացյալ Նահանգների համար, քանի որ ԱՄՆ նախագահի ցանկացած պաշտոնական դիրքորոշում հանդիսանում է երկրի դիրքորոշումը²⁰ և իրավարարությունից բխող քայլերը պարտադիր են կատարման համար²¹:

Հիմա ամենակարևորի մասին:

Որո՞նք պետք է լինեն մեր հետագա քայլերը:

Առաջին հերթին մենք ոչ միայն պիտի հայտարարենք, որ **պետություն ունեցող ազգ ենք, այլ պիտի գործենք որպես այդպիսին**: Այսինքն պիտի օգտվենք միջազգային սուբյեկտի մեր կարգավիճակից:

Քանի որ միջազգային իրավունքը և միջպետական բազմաթիվ փաստաթղթեր, ինչպես օրինակ Եվրոպայում անվտանգության և համագործակցության Հելսինկիի 1975թ.-ի եզրափակիչ փաստաթուղթը (մաս 10-րդ, պարբերություն 1-ին), որի տակ կա նաև Թուրքիայի ստորագրությունը, հանձնառու երկրներից պահանջում է միջազգայնորեն ստանձնած պարտավորությունների «*բարեխիղճ կատարումը, լինեն դրանք ածանցված միջազգային իրավունքի հանրնրհանուր ճանաչում գտած սկզբունքներից և կանոններից, թե ածանցված լինեն պայմանագրերից կամ այլ համաձայնագրերից, որոնց այդ երկրները մաս են կազմում համաձայն միջազգային օրենքի*», ուստի Հայաստանի Հանրապետությունը կարող է և պարտավոր է միջազգային իրավունքի հիման վրա պաշտպանել իր շահերը, այսինքն՝ Անվտանգության խորհրդի ուշադրությունը պիտի հրավիրի այն հանգամանքի վրա, որ Թուրքիան չի կատարում Վիլսոնի իրավարար վճռով ստանձնած պարտավորությունները, որի հետևանքով առաջացել է միջազգային, այսինքն հայ-թուրքական դիմակայություն և վեճ: Հայաստանի Հանրապետությունը որպես ՄԱԿ-ի անդամ երկիր, ՄԱԿ-ի կանոնակարգի 35-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա, լիովին իրավասու է «*Անվտանգության խորհրդի կամ Գլխավոր համաժողովի ուշադրությանը բերել ցանկացած վեճ*

կամ իրավիճակ, որն իր բնույթով համապատասխանում է [սույն կանոնակարգի] 34-րդ հոդվածում վկայակոչվածին»: Իսկ ՍԱԿ-ի կանոնակարգի 34-րդ հոդվածն արձանագրում է. «Անվտանգության խորհուրդը կարող է քննության առնել ցանկացած վեճ կամ իրավիճակ, որը կարող է հանգեցնել միջազգային դիմակայության կամ առաջ բերել վեճ՝ որոշելու համար, թե արդյոք տվյալ վեճի կամ իրավիճակի շարունակումը կարող է վտանգել միջազգային խաղաղության և անվտանգության պահպանումը»: Ակնհայտ է, որ ներկա իրավիճակը արդեն իսկ հանգեցրել է հայ-թուրքական դիմակայության և վիճահարույց վիճակի, և այս ամբողջը հետևանք է Թուրքիայի կողմից իր միջազգայնորեն ստանձնած պարտավորությունների չկատարման:

